ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Նաիրա Պողոսյան, Վարուժան Գեղամյան,
Մարիամ Մելքոնյան, Արեն Պետունց

# «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ» ԴԱՍԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ. ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԵԴԻԱ ԴԱՇՏՈՒՄ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 070:004:327:93/94
ԳՄԴ 76.0+16+66.4+63.3
Ա 811

*Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից։*

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր **Ռ. Մելքոնյան**

Գրախոսներ՝ պ.գ.թ., դոցենտ **Ա. Սողոմոնյան**
պ.գ.թ. **Մ. Աբրահամյան**

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 19YR-51043 գիտական թեմայի շրջանակում։

Ա 811 «Ատելության խոսքի» դասական թիրախները. Հայերն ու Հայաստանը թուրքական և ադրբեջանական մեդիա դաշտում 2019-2021 թվականներին / Ն. Պողոսյան, Վ. Գեղամյան, Մ. Մելքոնյան, Ա. Պետունց.- Եր.: ԵՊՀ հրատ., 2022.- 154 էջ:

Գրքում ներկայացված է մի խումբ թուրքագետների կողմից թուրքական և ադրբեջանական էլեկտրոնային ԶԼՄ-ներում հայկական թեմատիկայի տարբեր դրսևորումների, մասնավորապես՝ այդ երկրների պաշտոնական հռետորաբանության մեջ ցայտուն դրսևորվող «ատելության խոսքի» ուսումնասիրությունը: Թեման ներկայացված է ինչպես մինչև Արցախյան 44-օրյա պատերազմը, այնպես էլ դրանից հետո տեղի ունեցող զարգացումների համապատկերում: Գրքում հստակ պատկերվում է Թուրքիայում և Ադրբեջանում հակահայկականության, Հայաստանի և հայերի հանդեպ ատելության ստաբիլ և անփոփոխ աճը: Ուսումնասիրությունը նախատեսված է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, քաղաքագետների, լրագրողների և ընթերցողների լայն շրջանակի համար։

ՀՏԴ 070:004:327:93/94
ԳՄԴ 76.0+16+66.4+63.3

ISBN 978-5-8084-2565-1

© ԵՊՀ հրատ., 2022
© Հեղ. խումբ, 2022

## Բովանդակություն

Առաջաբան ........................................................................................ 5
«Ատելության խոսք». ընդհանուր ակնարկ ..................................... 12
Թուրքական ԶԼՄ-ները «հետճշմարտության» դարաշրջանում .. 27
Ղարաբաղյան հակամարտության (ան)տեսանելի հետևանքները. 44-օրյա պատերազմն ու Թուրքիայի հայ համայնքը ..................... 47
Փետրվարը «ատելության օրացույց»-ում. Խոջալուի դեպքերի լուսաբանումը թուրքական ԶԼՄ-ներում ........................................ 70
Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցը. Ջո Բայդենի «անակնկալն» ու «ատելության խոսքը» ............................................ 76
Հայաստանի և հայության վերաբերյալ Թուրքիայի հռետորաբանության հիմնական դրույթները 2019-2021 թթ......... 89
Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը և 2020 թ. տավուշյան մարտական գործողությունները .............................. 110
Հայատյացության դրսևորումներն ու «ատելության խոսքը» Իլհամ Ալիևի ելույթներում ............................................................... 123
Օգտագործված գրականության ցանկ ............................................ 131

# ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն հետազոտության շրջանակներում փորձ է արվել ներկայացնել թուրքական և մասամբ նաև ադրբեջանական էլեկտրոնային ԶԼՄ-ներում հայկական թեմատիկայի տարբեր դրսևորումները ինչպես մինչև արցախյան 44-օրյա պատերազմը, այնպես էլ դրանից հետո տեղի ունեցող զարգացումների համապատկերում: Հիմնական շեշտը դրվել է Թուրքիայում և Ադրբեջանում պետական գաղափարախոսության ու պաշտոնական հռետորաբանության կարգավիճակ ունեցող «ատելության խոսքի» ուսումնասիրության վրա:

Աշխատանքի համար հիմք է հանդիսացել թուրքական մի շարք առաջատար թերթերի էլեկտրոնային տարբերակների մշտադիտարկումը, որը զուգահեռվել է «ատելության խոսքի» մասին տեսական աշխատությունների, Թուրքիայում «ատելության խոսքի» վերաբերյալ զեկույցների հետ: Ներկայումս Թուրքիայում 59,36 միլիոն մարդ ինտերնետի օգտատեր է, իսկ 44 միլիոնն ունի բջջային ինտերնետ[1], ինչը նշանակում է, որ էլեկտրոնային լրատվամիջոցներն հասանելի են երկրի բնակչության կեսից ավելիին, ուստի դրանք էլ պետական քարոզչության արդյունավետ հարթակ կարող են համարվել:

Մշտադիտարկման համար լրատվական կայքերն ընտրելիս առաջնորդվել ենք դրանց ընթերցողների քանակով և քաղաքական-գաղափարական տարբեր ուղղվածության թերթեր ներկայացնելու ցանկությամբ[2]: Թուրքական էլեկտրոնային մամուլում,

---

[1] Medya Ownership monitor: Turkey, Dijital Medya, https://turkey.mom-rsf.org/tr/-medya/dijital-medya/ (հասանելի է 29.06.2021)

[2] Լրատվական կայքերի գաղափարախոսական բաշխման և ընթերցողների քանակի մասին տե՛ս Ütücü B., Kızılkaya E., Türkiye’de ‘Yeni Ana Akım’ Yükseliyor (ve Desteğe İhtiyacı Var), Türkiye’de Bağımsız Gazeteciliğin Dijital Kapasitesi, Etkisi Ve İhtiyaçlari, Uluslararası Basın Enstitüsü, Türkiye Dijital Medya Raporu, 2021, ss. 11-13,

հետևաբար նաև հասարակական-քաղաքական խոսույթում Հայաստանին և հայերին վերաբերող առանցքային հարցերի ներկայացման վերլուծությունը կազմել ենք մեդիայի հայկական անդրադարձները թեմատիկ բաժանման ենթարկելով:

Ժամանակակից աշխարհում քաղաքական ու սոցիալ-մշակութային զարգացման հիմնական միտումներից մեկը համարվում է քաղաքականության զանգվածայնությունը (mass politics) և աջակողմյան քաղաքականության (right wing politics) ծայրահեղականացումը, որը հանգեցրել է հասարակական բևեռացումների ուժեղացմանը, ինչն էլ իր հերթին վերածվել է քաղաքականություն վարելու հիմնական ձևաչափերից մեկին[3]: Հասարակական տարբեր խմբերի և դրանց ներկայացուցիչների միջև բևեռացման ձևավորման գլխավոր գործիքը և «գործունեության դաշտը» մեդիան է (վերջին տարիներին հատկապես էլեկտրոնային, առցանց մեդիան), որը, ներգրավված լինելով քաղաքական դիսկուրսների և իդեոլոգեմների կառուցարկման գործում, թիրախավորում է հասարակության տարբեր խմբերի՝ ծայրահեղաբար ներկայացնելով այդ խմբի որևէ հատկանիշ (ներ)՝ էթնիկական, կրոնական, սեռային և այլն: Սրա համար որպես թիրախավորման հիմնական միջոց է ծառայում «ատելության խոսքը»՝ ուղղված վերոնշյալ խմբերի ներկայացուցիչներին:

Չնայած մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության տարաբնույթ մեխանիզմների առկայու-

տե՛ս նաև https://www.kolaydata.com/en-cok-ziyaret-edilen-haber-siteleri-2019-66-48.html (հասանելի է 15.02.2021), https://buldumz.com/haber-siteleri/ (հասանելի է 15.02.2021)

[3] Blankenhorn D., The Top 14 Causes of Political Polarization, The American Interest, https://www.the-american-interest.com/2018/05/16/the-top-14-causes-of-political-polarization/, (հասանելի է՝ 24.01.2019)

թյանը՝ «ատելության խոսքը» (hate speech)[4] և դրա տարածումը հանդիսանում են տեղեկատվական ժամանակակից համակարգերի ամենաբարդ խնդիրներից մեկը, որը անմիջական ազդեցություն ունի հասարակության կենսագործունեության վրա: Լրատվության և էթիկայի սկզբունքները շրջանցելով՝ լրատվամիջոցները «ատելության խոսքի» միջոցով մեծ ազդեցություն են ունենում ընթերցողների մեջ իրականության ընկալման մոդելներ ձևավորելու և զարգացնելու գործում:

«Ատելության խոսքի» ազդեցությունը և նշանակությունը մեծանում է հատկապես այն հասարակություններում, որոնք գտնվում են աշխարհաքաղաքական և տարածաշրջանային բարդ գործընթացների ու հակամարտությունների հորձանուտում: Նմանատիպ մի իրականություն է ձևավորված Մերձավոր Արևելքում:

Անկախության հռչակումից ի վեր Հայաստանի Հանրապետության և հայերի կերպարի շուրջ Հայաստանի հարևան պետություններում (վերա)ձևավորվել և (վերա)ձևավորվում են բազմաթիվ պատումներ, որոնց մի մասը հիմնված են ավելի վաղ պատմական շրջանում ստեղծված միֆոլոգեմների վրա: Այդ պատում-

[4] Իրավական, գիտական-ակադեմիական, քաղաքական տիրույթում հաճախ կիրառվող այս արտահայտության համապարփակ սահմանում գոյություն չունի (դա պայմանավորված է խոսքի ազատության իրավունքի և «ատելության խոսքի» սահմանազատման բարդությամբ): Ըստ Եվրախորհրդի նախարարների խորհրդի 1997 թ. տված սահմանման, «ատելության խոսքը» «բոլոր տեսակի այն արտահայտություններն են, որոնք տարածում են, սադրում են, խրախուսում են կամ արդարացնում են ռասայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմականությունը կամ ատելության այլ տեսակները, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, այդ թվում ագրեսիվ ազգայնականությամբ արտահայտված անհանդուրժողականություն կամ էթնոցենտրիզմ, փոքրամասնությունների, զաղթականների կամ զաղթական ծագում ունեցողների հանդեպ խտրականություն կամ թշնամանք: Տե՛ս՝ Council of Europe, Committee of Ministers Recommendation 97 (20)՝rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505d5b

ները և իդեոլոգեմները ընկած են հարևան երկրների կողմից Հայաստանի հետ կառուցվող հարաբերությունների հիմքում: Եթե Վրաստանում և Իրանում այդ պատումներում գրեթե բացակայում են «ատելության խոսքի» դրսևորումները հայերի ու Հայաստանի մասին, ապա Թուրքիայում և Ադրբեջանում ճիշտ հակառակն է: Հատկանշական է, որ այդ պատումները ստեղծվում են վերոնշյալ երկու երկրներից մեկում, այնուհետև տեղեկատվական տարբեր ճանապարհներով հայտնվում են նաև մյուս երկրի տեղեկատվական համակարգում և դառնում դրա բաղկացուցիչ մասը: Հաշվի առնելով Թուրքիայի աշխարհաքաղաքական դերը, ինչպես նաև մեդիա դաշտի նշանակությունը տարածաշրջանային տեղեկատվական համակարգում, առաջնային կարևորություն է ստանում Թուրքիայի մեդիայում Հայաստանի և հայերի շուրջ առկա պատումների և իդեոլոգեմների ուսումնասիրությունը:

Թուրքիայի Հանրապետության պատմության տարբեր փուլերում ԶԼՄ-ները մեծ դեր են խաղացել պաշտոնական այլամերժ քաղաքականության հանրայնացման, կիրառման և տարածման գործում: Դա հատկապես ցայտուն դրսևորվել է հասարակության մեծամասնության և քաղաքական վերնախավի համար «ընկալելի թիրախներ» ձևավորելու գործում: ԶԼՄ-ների մեյնսթրիմում «ատելության պատումի» ներառումն անխուսափելիորեն վատթարացնում է ատելության թիրախ հանդիսացող խմբի ներկայացուցիչների նկատմամբ հասարակության վերաբերմունքը, ինչը դրսևորվում է կրթությունից մինչ վարչարարություն բոլոր ոլորտներում:

Թուրքիայում ոչ մուսուլմանների նկատմամբ «ատելության խոսքի» տարածվածությունը պարադոքսալ է թվում մանավանդ վերջին հարյուր տարում իշխանությունների կողմից տարվող պաշտոնական քաղաքականության հետևանքով այդ երկրում

բնակվող հայերի, հույների և հրեաների թվի ստաբիլ անկման համատեքստում: Այնուամենայնիվ, ներկայումս բնակչության 0,5 տոկոսից էլ քիչ թիվ կազմող այս համայնքները շարունակում են «ատելության խոսքի» գլխավոր հասցեատերը լինել: Այս երևույթի կայուն պահպանմանը և զարգացմանը մեծապես նպաստեց նաև 2002 թ. Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) իշխանության գալուց հետո երկրի առաջնորդ Ռ. Թ. Էրդողանի «իսլամական-ազգայնական» քաղաքականությունը: Իսկ 2016 թ. հեղաշրջման փորձից հետո «Թուրքիայում լրագրության մահը» կամ այլ կերպ ասած մամուլի ազատության սահմանափակման ահագնացող տեմպերն էլ ավելի խորացրին հակաքրիստոնեական և մասնավորապես հակահայկական քարոզչությունը: Իշխանության առավել ավտորիտար բնույթի ձեռքբերմանը զուգահեռ ԱԶԿ կողմից կառուցված հռետորաբանությունն ու քաղաքականությունը էլ ավելի խորացրեցին թուրքական հասարակությունում առկա խնդիրներն ու մեծացրին բևեռացումը:

Թուրքական մամուլում լավագույնս արտահայտված են «ատելության խոսքի» երկու հարթությունները՝ պաշտոնական-քաղաքական և հասարակական-մշակութային: ԶԼՄ-ներում տեղ գտնող սադրիչ, ռասիստական և խտրական արտահայտություններով ամրապնդվում է հայի բացասական կարծրատիպը: Զարմանալի և երբեմն նույնիսկ զավեշտալի են Թուրքիայի դեմ հայերի կազմակերպած «համաշխարհային դավադրության», քրդական խնդրի համատեքստում «հայ ահաբեկիչների ծրագրած մութ գործերի» մասին հրապարակումները: Կարևոր միտում է նաև իշխանական էլիտային ոչ հաճելի մարդկանց «վիրավորելու» համար վերջիններիս հայ անվանելը կամ որևիցե մեկի հայկական արմատներ ունենալը շահարկելը: Հայերի և Հայաստանի նկատմամբ «ատելության խոսքը» թուրքական մեդիա դաշտում հատկապես ակտիվանում է կարևոր օրացույցային իրադարձություն-

ների համատեքստում: Պետք է հստակ փաստել, որ չնայած փոքրամասնությունների նկատմամբ ատելության սերմանման հետ կապված մտահոգություններ արտահայտվում են Թուրքիային վերաբերող գրեթե բոլոր միջազգային զեկույցներում, սակայն իշխանությունները ոչ միայն չեն կանխարգելում, այլ կարելի է ասել նպաստում են այս երևույթի խորացմանը:

Պետք է նշել, որ թուրքական էլեկտրոնային ԶԼՄ-ներում Հայաստանի և հայերի նկատմամբ «ատելության խոսքի» առանձին, համակողմանի ուսումնասիրություն մեզանում դեռևս չկար, և այս առումով սույն գիրքը գիտական նորույթ է պարունակում: Թեման արդիական է նաև հայ-թուրքական հարաբերությունների շուրջ ծավալվող քննարկումների, ինչպես նաև մեր հասարակության մի ստվար հատվածին անծանոթ թուրքական հասարակության մոտ հայերի մասին իրական պատկերացումները և վերաբերմունքը ներկայացնելու տեսանկյունից: Հայաստանի ու հայերի մասին գերակա պատումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ի ցույց դնել ներքին և արտաքին այն գործոնները, որոնք կանխորոշել և առաջիկա տարիներին կանխորոշելու են հայ-թուրքական հարաբերությունները: Այս տեսանկյունից գիրքն ունի գիտա-կիրառական նշանակություն, ինչպես նաև կարող է նպաստել քաղաքական և անվտանգային նշանակության խնդիրների հստակեցմանը:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը որակական (qualitative) է՝ հիմնված կոնտենտ վերլուծության (content analysis) և դիսկուրս անալիզի (discourse analysis) գործիքակազմերի վրա: Ուսումնասիրության միջոց են հանդիսանում ինչպես տեքստային (textual), այնպես էլ տեսապատկերային (visual materials) նյութերը: Մասնավորապես ուսումնասիրվել են թուրքական հասարակական-քաղաքական գերակա դիսկուրսը ձևավորող հիմնական տպագիր և էլեկտրոնային ԶԼՄ-ները և պետական հռետո-

րաբանության պատումները (պետական քարոզչության դրսևորում հանդիսացող նյութերը՝ փաստաթղթեր, քաղաքական վերնախավի ելույթներ, պաստառներ, զանգվածային միջոցառումներ, հանրային տարածքների ու կառույցների հանդեպ պետական քաղաքականություն և այլն):

*Նաիրա Պողոսյան, Արեն Պետունց*

## «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ». ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ֆորմալ կերպով ամրագրված են մի շարք միջազգային կոնվենցիաներում և համաձայնագրերում, առանձին պետությունների սահմանադրություններում և ներքին օրենսդրական ակտերում, սակայն սրան հակառակ գրեթե ամեն օր թե՛ կենցաղում, թե՛ հասարակական-քաղաքական ոլորտներում մարդիկ շարունակում են բախվել իրենց իրավունքների սահմանափակման և ոտնահարման դեպքերի: Աշխարհի շատ երկրներում լրահոսի անբաժան մասն են կազմում կանանց, երեխաների նկատմամբ տնային բռնությունը, աշխատանքի ընդունվելիս կանանց և տղամարդկանց նկատմամբ տարբերակված մոտեցման ցուցաբերումը, միգրանտներին վիրավորական մականուններով կոչելը, ազգայինկրոնական փոքրամասնությունների հանդեպ ֆիզիկական ուժի կիրառումը և «ատելության խոսքի» մեծ ու փոքր այլ դրսևորումները: Ազգային, ռասայական, կրոնական, սեռական, սոցիալական պատկանելությունը դառնում է պատճառ, որպեսզի մարդիկ արժանանան խտրական վերաբերմունքի, իրենց հասցեին վիրավորական արտահայտություններ լսեն կամ առավել բարդ դեպքերում ենթարկվեն ուղղակի բռնության: Ընդ որում, հաճախ խոսքի ազատության իրավունքի խեղված ընկալելու հետևանքով հասարակության որոշ անդամներ ամենատարբեր հարթակներից թիրախավորում են իրենց համար անընդունելի խմբերի ներկայացուցիչներին: Այս երևույթը բնորոշող «ատելության խոսք», «թշնամանքի խոսք», «բռնության խոսք» եզրույթներն որքան պարզ են թվում առաջին հայացքից, այնքան էլ բարդ են հետազոտական մակարդակում սահմանման և իրարից տարբերակման համար:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի խորհրդակցական որոշման մեջ «ատելության խոսք» են համարվում այն արտահայտությունները, որոնք փոքրամասնությունների, միգրանտների կամ միգրանտական արմատներ ունեցողների դեմ ագրեսիվ ազգայնամոլություն, էթնոցենտրիզմ, խտրականություն, թշնամանք, ռասիզմի հողի վրա ատելություն, հակասեմիտիզմ կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ տեսակներ են տարածում, խթանում, հրահրում կամ վերոնշյալի վերաբերյալ համակարծություն են հայտնում[5]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) «ատելության խոսք» է համարում արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, նպաստում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, օտարատյացությունը, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականության այլ դրսևորումները, որոնք արտահայտվում են ագրեսիվ ազգայնականությամբ կամ էթնոցենտրիզմով, խտրականությամբ և թշնամությամբ՝ փոքրամասնությունների, ներգաղթյալների և միգրանտական ծագում ունեցող մարդկանց նկատմամբ[6]:

Գլազգոյի Կալեդոնիական համալսարանից իրավագիտության դոկտոր Կառլա Պորտիլլա Պերեսը նշում է, որ «ատելության խոսքը» եզրույթ է, որով սահմանվում է սպառնալիք, բռնության կոչ կամ վիրավորանք պարունակող և համապատասխան օրենսդրությամբ ամրագրված հիմքերով մարդկանց նկատմամբ ատելություն հրահրող խոսքը[7]: Հայտնի ամերիկացի իրավապաշտպան, հասարակական գործիչ, Հավայան համալսարանի

[5] Medya ve Nefret Söylemi II: Değişmeyen Sorular, Güncel Tartışmalar, ed. A. Yılmaz, İstanbul, 2021, s. 157.

[6] Խանդանյան Ս., Ատելության խոսք, http://boon.am/violence-6/ (հասանելի է 15.06.2021)

[7] Perez P. K., Challenging media (mis)representation: An exploration of available models. International Journal for Crime, Justice and Social Democracy 7(2), 2018, p. 5.

Ուիլյամ Ս. Ռիչարդսոնի իրավաբանական դպրոցի պրոֆեսոր Մ. Ջ. Մաթսուդայի կարծիքով «ատելության խոսք» են պատմության ընթացքում ճնշումների ենթարկված, խեղճ խմբի նկատմամբ ռասայական գերակայության հիմքով ստորացնող, ատելություն պարունակող, արժանապատվությունը ոտնահարող արտահայտությունները, կոնկրետ մարդու կամ մի խումբ մարդկանց հիմնական առանձնահատկությունները թիրախավորող նախապաշարմունք, թշնամություն, վիրավորանք արտահայտող խոսքերը[8]: Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Յու. Շերբինինան «ատելության խոսքը» սահմանում է որպես բառեր ու արտահայտություններ, որոնք մարդկանց ենթագիտակցորեն կամ գիտակցական մակարդակում մղում են այս կամ այն սոցիալական կամ մշակութային խմբի ձևավորված կարծրատիպերից տարբերվող, այլ, անսովոր սուբյեկտների հանդեպ ագրեսիայի, հանդիսանում են դրա թողարկիչ մեխանիզմը[9]:

«Առցանց ատելության խոսքը Եվրոպական Միությունում: Դիսկուրս-վերլուծական դիտանկյուն» աշխատության հեղինակների կարծիքով «ատելության խոսքը» հնարավոր է սահմանել որպես անհանդուրժողականության պոտենցիալ պատճառ հանդիսացող բնութագրերի հիման վրա ատելության արտահայտում որոշակի սոցիալական խմբի կամ այդ խմբին պատկանող անհատի նկատմամբ[10]: Այդ աշխատության հեղինակները տարբերակում են «ատելության խոսքի» կոշտ և փափուկ տեսակները: Կոշտ «ատելության խոսքը» անմիջականորեն բռնության կոչերն են օրենքով արգելված ձևերի կիրառմամբ, իսկ փափուկ «ատելու-

---

[8] Medya ve Nefret Söylemi II:, s. 157.

[9] Миронова Н. И., Речевая агрессия и «язык вражды» как разделы современного курса «русский язык и культура речи» в ВУЗе, https://elib.bsu.by/bitstream/1234567-89/189592/1/10-16.pdf (հասանելի է 15.06.2021)

[10] Assimakopoulos S., Baider F. H., Millar Sh., Online Hate Speech in the European Union: A Discourse-Analytic Perspective, Springer, 2017, p. 3.

թյան խոսքը» խտրականության և անհանդուրժողականության դրսևորումն է, որը, սակայն, օրենքի խախտում չի պարունակում[11]: Ընդհանուր առմամբ առանձնացվում է «ատելության խոսքի» 17 տեսակ՝ 1. բռնության կոչեր, 2. խտրականության կոչեր ընդհանուր կարգախոսների տեսքով, 3. բռնության և խտրականության քողարկված կոչեր, 4. էթնիկ խմբի բացասական կերպարի ձևավորում, 5. բռնության և խտրականության պատմական դեպքերի արդարացում, 6. ելույթներ և հրապարակումներ, որոնք կասկածի տակ են դնում բռնության և խտրականության համընդհանուր ճանաչված դեպքերը, օրինակ՝ Հոլոքոստը, 7. այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի թերարժեքության մասին պնդումներ, 8. այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի պատմական հանցագործությունների մասին պնդումներ, 9. այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի քրեածին լինելու մասին պնդումներ, 10. այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի բարոյական թերությունների մասին պնդումներ, 11. այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի ոչ համամասն նյութական, իշխանական և այլ գերակայության մասին պնդումներ, 12. այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի պետության հասարակության վրա ունեցած վատ ազդեցության մասին պնդումներ, 13. այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի անվանման ստորացուցիչ կամ վիրավորական կիրառում, 14. տարածաշրջանում, քաղաքում, գյուղում այս կամ այն էթնիկ կամ կրոնական խմբի միգրանտների հաստատվելը չթույլատրելու կոչեր, 15. հստակ քսենոֆոբ արտահայտությունների ու տեքստերի ցիտում առանց մեկնաբանության, 16. այս կամ այն խմբին իշխանությունը զավթելու կամ տարածքային էքսպանսիայի մեջ մեղադրանք, 17. էթնիկ, ռասայական,

[11] Նույն տեղում, էջ 4:

կրոնական հատկանիշներից ելնելով՝ անձի քաղաքացիության ժխտում[12]:

Ռուսաստանցի հրապարակախոս, «Սովա» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի փոխնախագահ, «Պանորամա» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի գլխավոր խմբագիր Ա. Վերխովսկին իր հերթին տարանջատում է «ատելության խոսքի» երեք՝ խիստ, միջին և մեղմ տեսակներ՝ փաստորեն տեղավորելով դրանց մեջ վերոնշյալ 17 խմբերը: Խիստ լեզուն ներառում է ուղղակի և անմիջական բռնության կամ խտրականության կոչեր: Միջին լեզուն ընդգրկում է բռնության և խտրականության պատմական դեպքերի արդարացումը, այս կամ այն էթնիկ խմբի քրեածին լինելու մասին պնդումները, մի էթնիկ խմբի այլ խմբի նկատմամբ գերակայության հայտարարումը: Ատելության մեղմ լեզուն ենթադրում է էթնիկ խմբի նեգատիվ ներկայացում, նրա էթնոանվանման վիրավորական կիրառում, խմբի թերարժեքության կամ բարոյական թերությունների մասին հիշատակում[13]:

ՌԴ դատախազության համալսարանի գիտաշխատողներ, հոգեբաններ Մ. Քրոզը և Ն. Ռատինովան էլ առաջարկում են «ատելության խոսքի» սեփական եռաստիճան դասակարգումը՝ կեղծ իդենտիֆիկացում (ազգային, ռասայական, կրոնական խմբի մասին նեգատիվ կարծրատիպի ձևավորում և ամրապնդում), կեղծ ատրիբուցիա (թշնամական գործունեության և վտանգավոր նպատակների վերագրում որևէ ազգային, ռասայական, կրոնական խմբի), թվացյալ պաշտպանություն (ազգային, ռասայական, կրոնական խմբի դեմ գործողությունների խթանում)[14]:

---

[12] Кожевникова Г., Язык вражды после Кондопоги, Язык вражды против общества: (сб. статей) / сост.: А. Верховский, Москва, 2007, стр. 12-14.

[13] Миронова Н. И., Речевая агрессия и «язык вражды» как разделы современного курса «русский язык и культура речи» в ВУЗЕ, https://elib.bsu.by/bitstream/123456789/189592/1/10-16.pdf (հասանելի է 15.06.2021).

[14] Նույն տեղում:

Թուրքիայում գործող «Հրանտ Դինք» հիմնադրամի կողմից հրապարակված «ատելության խոսքի» վերաբերյալ զեկույցներում առանձնացվում է «ատելության խոսքի» չորս տեսակ՝ 1. չափազանցում (մի մարդու կամ մի դեպքի օրինակով ընդհանրացումներ անել ամբողջ համայնքի/պետության/խմբի մասին), 2. վիրավորանք (որևէ խմբի մասին ուղղակի վիրավորանքներ պարունակող տեքստերի տարածում), 3. բռնության խոսույթ (որևէ խմբի դեմ բացահայտ թշնամանքի քարոզում, պատերազմի կոչ), 4. աստվածատուր ինքնության կիրառում որպես վիրավորանք[15]:

Թուրք հետազոտող Զ. Օզարսլանն իր հերթին ընդգծում է, որ լեզուն ունի ոչ միայն տեղեկատվական, այլև գործառնական բնույթ, և բառերը պետք է դիտարկվեն ոչ թե որպես պարզապես բառեր, այլ խոսքի ակտեր, որոնք որոշակի գործողություն են անում և որոշակի ազդեցություն ունենում: Նա առաջարկում է հետևել լեզվի փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ Ջ. Լ. Օսթինի «խոսք-ակտի տեսությանը» և «ատելության խոսք» արտահայտության փոխարեն կիրառել «ատելության խոսքի ակտ» եզրույթը: Ավելին, հեղինակի պնդմամբ Web 2.0-ի ժամանակաշրջանում «ատելության խոսքը» կարող է ընդլայնվել և վերածվել ատելության դիսկուրսի[16]:

«Ատելության» կամ «թշնամանքի խոսք» արտահայտություններին որպես հոմանիշ հաճախ է կիրառվում «վտանգավոր խոսք» եզրույթը, որի կիրառությունը, սակայն, ըստ մասնագետների, առավել նպատակահարմար է այն դեպքերում, երբ արտահայտչամիջոցները պարունակում են բացահայտ ֆիզիկական

[15] Medyada Nefret Söylemi ve Ayrımcı Söylem 2017 Raporu, Hrant Dink Vakfı, İstanbul, 2018, ss. 11-12.

[16] Özarslan Z., Introducing Two New Terms into the Literature of Hate Speech: “Hate Discourse” and “Hate Speech Act” Application of “speech act theory” into hate speech studies in the era of Web 2.0, İletişim, 2014, N 20, s. 66.

բռնության կոչեր կամ հրահրիչ բնույթ ունեն: Այսինքն՝ «վտանգավոր խոսքից» բխող հետևանքները շատ ավելի ծանր կամ նույնիսկ անդառնալի կարող են լինել, քան «ատելության խոսքի» հնարավոր ազդեցությունը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի 2013 թ. «Պետության պատասխանատվության և կանխարգելման մասին» զեկույցում ասվում է. «Համայնքը թիրախավորելիս գերակա մոտիվի առկայությունը կոտորածի ռիսկն ավելացնող հավելյալ գործոն է: Այս մոտիվը սովորաբար հիմնված է օտարացման գաղափարի և տարբերությունները հակադրող «մենք-նրանք» ինքնության կառուցարկչի վրա: Այս տարբերությունները կարող են էլ ավելի շեշտվել ատելության խոսք տարածող քարոզարշավների միջոցով, որոնք թիրախավորվող համայնքի դեմ գործողությունններն արդարացնելու համար ներկայացնում են համայնքը որպես ոչ լոյալ, անվտանգությանը կամ տնտեսական բարեկեցությանը սպառնացող կամ «երկրորդ կարգի» խումբ»[17]:

Այս պնդումն ապացուցելու են գալիս նախկին Հարավսլավիայում և Սուդանում տեղի ունեցած բռնությունները: Ամերիկացի լրագրող Մ. Թոմսոնը, իր «Պատերազմի ձուլարանը» գրքում վերլուծելով հարավսլավական հակամարտության հրահրման հարցում ԶԼՄ-ների դերակատարումը, գրում է. «Բանավոր բռնությունը հանգեցրեց ֆիզիկական բռնության»[18]: Buzzfeednews.com լրատվական կայքի լրագրող Ջ. Փաթինքինն էլ, ուսումնասիրելով Հարավային Սուդանում բախումների հրահրման հարցում «ֆեյք լուրերի» և սոցիալական ցանցերի դերը, գալիս է այն եզրակացության, որ չնայած Հարավային Սուդանի բնակչության շատ փոքր մասն ունի ինտերնետ և 30 տոկոսից ա-

[17] Maynard L. J., Benesch S., Dangerous Speech and Dangerous Ideology: An Integrated Model for Monitoring and Prevention, Genocide Studies and Prevention: An International Journal, 2016, Vol. 9: Iss. 3, p. 70.

[18] Пропаганда и Свобода Массовой Информации, Памятная записка Бюро Представителя ОБСЕ по вопросам свободы СМИ, Вена, 2015, стр. 5.

վելին անգրագետ է, սոցիալական ցանցերը նպաստեցին կոտորածի կազմակերպմանը[19]։

Միևնույն ժամանակ անհանդուրժողականության դրսևորման և հրահրման միջոցների կիրառման առանձնահատկությունները, մեթոդական գործիքակազմը գրեթե նույնական են և հաճախ կրկնվում են նույնիսկ որևէ պատմական կամ մշակութային ընդհանրություն չունեցող երկրներում։ Ամերիկացի հետազոտող և լրագրող Ս. Բենեշը այսօրինակ նմանությունն ապշեցուցիչ է համարում[20]։

Մարդկանց արժանապատվությունը վիրավորելու նպատակ հետապնդող ելույթներում շատ հաճախ հանդիպող երևույթ է դեհումանիզացիան. քննադատության թիրախ դարձած խմբի անդամները համեմատվում են որոշակի վնասատու կենդանիների (որդեր, առնետներ), հիվանդածին օրգանիզմների (վիրուս, ինֆեկցիա, քաղցկեղ), գերբնական ուժերի (սատանա, նեռ), երբեմն էլ բնական աղետների հետ (ջրհեղեղ, աղտոտում, էկոլոգիական աղետ)[21]։ Այնուհետև քարոզչամեքենան լսարանին սկսում է հավատացնել, որ թիրախավորվող խումբը սպառնալիք է այլոց համար, և այդ սպառնալիքի սահմանափակման միակ ուղին բռնության կիրառումն է[22]։ Ավելին, ներկայացվում են նաև բռնության կիրառումից հետո ակնկալվող դրական արդյունքները՝ պատե-

---

[19] Patinkin J., How To Use Facebook And Fake News To Get People To Murder Each Other, https://www.buzzfeednews.com/article/jasonpatinkin/how-to-get-people-to-murder-each-other-through-fake-news-and (հասանելի է 15.06.2021).

[20] Dangerous Speech: A Practical Guide, https://dangerousspeech.org/wp-content/-uploads/2020/08/Dangerous-Speech-A-Practical-Guide.pdf, p. 5 (հասանելի է 17.04.2021).

[21] Նույն տեղում, էջ 14։ Այս մասին տե՛ս նաև Maynard L. J., Benesch S., Dangerous Speech and Dangerous Ideology: An Integrated Model for Monitoring and Prevention, Genocide Studies and Prevention: An International Journal, 2016, Vol. 9: Iss. 3, p. 80.

[22] Dangerous Speech:, p. 15.

րազմում հաղթանակ, տնտեսական աճ և այլն[23]։ Այս հնարքի դասական օրինակ է մի ճաշկերույթի ընթացքում հյուրերին Հիտլերի ասած բառերը. «Արդյոք մե՞նք ենք հորինել մեզ ստեղծած բնության օրենքները, ամեն ինչ այնպիսին է, ինչպիսին կա, և մենք չենք կարող փոխել դա»[24]։ Բռնության անխուսափելիության օրինակ է նաև նախկին Խորհրդային Միության բնակիչների հարցազրույցներում կարմիր թելով անցնող այն միտքը, որ ստալինյան ռեպրեսիաներն անխուսափելի են եղել։ Հարցվողներից մեկն ասել է. «Ես կասկածներ ունեի հնգամյա պլանի մասին, բայց ես արդարացնում էի նախագիծն այն մտքով, որ մենք կառուցում ենք ինչ-որ հզոր բան, մի նոր հասարակություն, որն անհնար է կառուցել կամավորության սկզբունքների վրա»։[25]

Զուգահեռաբար հասարակությանը ներկայացվում են թիրախավորվող խմբի պատճառով առաջացած անվերադարձ կորուստները[26] և շեշտվում է, որ նորերից խուսափելու համար բռնությունն անխուսափելի է։ Օրինակ, 2011 թ. հուլիսին 77 մարդ սպանած նորվեգացի Անդերս Բրեյվիքը պնդում էր, որ ուզում է «կանխել բազմամշակութայնության, իսլամի ու մշակութային մարքսիզմի հետևանք հանդիսացող եվրոպական մշակութային ինքնասպանությունը»[27]։ Այս համատեքստում հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ թիրախավորվող խումբը կարող է վտանգավոր լինել կանանց և աղջիկների համար։ Այս տարբերակը բավական արդյունավետ է, քանի որ «գրեթե բոլոր մշա-

[23] Medya ve Nefret Söylemi II: Değişmeyen Sorular, Güncel Tartışmalar, ed. A. Yılmaz, İstanbul, 2021, s. 85.

[24] Նույն տեղում։

[25] Նույն տեղում, էջ 83։

[26] Նույն տեղում, էջ 81։

[27] Dangerous Speech:, pp. 16-17.

կույթներում էլ տղամարդն ընկալվում է որպես կանանց և երեխաների պաշտպան»[28]:

Հասարակության բացասական տրամադրությունները ամրապնդելու համար ընդունված է նաև «հերոսացնել» թիրախավորվող խմբի դեմ պայքարողներին և հակառակը դավաճանության մեջ մեղադրել նրանց, ովքեր, չնայած քարոզչությանը, այդ խմբի նկատմամբ լոյալ տրամադրություններ ունեն[29]: Արժի նշել, որ որոշ դեպքերում պետության կողմից ընդունվող օրենքներն ու կարգավորումները ևս կարող են անուղղակի կերպով ատելություն հրահրել:

Կառուցվածքային տեսանկյունից «ատելության խոսքը» սովորաբար լեցուն է կաղապարված արտահայտություններով, կարծրատիպերով և կրկնություններով: Ա. Հիտլերն «Իմ պայքարը» գրքում նշում է, որ քարոզչության հիմքը «քիչ բաներով քեզ սահմանափակելը և անընդհատ կրկնելն է»[30]: Նացիստական քարոզչության նախարար Գեբբելսն էլ քարոզչության հիմքում երկու օրենք էր դնում՝ պարզություն և կրկնություն[31]: Գրող Դ. Շնայդերը գրում է. «Դժվար է չհավատալ, որ մշակույթն է մեծապես պայմանավորում մեր կարծրատիպերի բովանդակությունը: Նրանք են մեզ ասում, թե ինչպես մտածել»[32]:

Հասարակության բևեռացմանը նպաստում է նաև փոքրամասնության մասին ոչ բավարար կամ ոչ ճիշտ տեղեկությունների տարածումը: Իրավագիտության դոկտոր Կ. Պ. Պերեսը որպես

---

28 Նույն տեղում, էջ 18:

29 Նույն տեղում, էջ 19:

30 Medya ve Nefret Söylemi II:, s. 18.

31 Նույն տեղում:

32 Cuddy A. J. C., Fiske S. T., Kwan V. S. Y., Glick P., Demoulin S., Leyens J. P., Bond M. H., Croizet J. C., Ellemers N., Sleebos E., Htun T. T., Kim H. J., Maio G., Perry J., Petkova K., Todorov V., Rodríguez-Bailón R., Morales E., Moya M., Ziegler R., Stereotype content model across cultures: Towards universal similarities and some differences, British Journal of Social Psychology, 2009, 48(1), p. 6.

առաձին խնդիր առանձնացնում է գիտակցաբար կամ անգիտակից կերպով հիմնական ԶԼՄ-ներում այս կամ այն խմբի ներկայության բացառումը կամ միայն խիստ կարծրատիպային ներկայացումը, ինչը նա անվանում է «անդրներկայացվածություն»[33]: Խտրական խոսք կարող է ձևավորվել նաև «բացակայությամբ», եթե նորությունների մեջ մի կողմի տեսակետը բնավ չի ներկայացվում, մի կողմը լրիվ արհամարվում է[34]: Մինչդեռ տարբեր ինքնություններ ներառող ժողովրդավարական հասարակություններում բոլորի ինքնության նկատմամբ հարգալից վերաբերմունք ապահովելը պետության պարտավորություններից է[35]:

Առանձնահատուկ արժի ընդգծել, որ «ատելության խոսքը» կիրառող անձի զբաղեցրած դիրքը, պաշտոնն ու հասարակության մեջ նրա ունեցած հեղինակությունը ևս շատ էական են քարոզչության արդյունավետության տեսակետից: Այսինքն՝ երկրի նախագահի կամ վարչապետի մակարդակով արված և տվյալ երկրի հանրային հեռուստատեսությամբ հրապարակված հայտարարությունից հետո առաջ եկած արձագանքը չի կարող համեմատվել սուրճի սեղանի շուրջ տասը ընկերների ներկայությամբ կիրառված արտահայտության արձագանքի հետ: Թեև հանուն արդարության պետք է ընդունել, որ ինտերնետի տարածմանը զուգահեռ առերեսվում ենք ժամանակային ու տարածքային սահմանների ընկալման փոփոխության, օնլայն տիրույթում հասարակության մեջ ընդունված հիերարխիկ դերերի լիակատար խախտման հետ, ինչի հետևանքով, անկախ բովանդակությունից, վերանայման կարիք են ունենում նաև քարոզչության ռազմավարությունները: «Առցանց ատելության խոսքը Եվրոպական Միու-

[33] Perez P. K., Challenging media (mis)representation: An exploration of available models, International Journal for Crime, Justice and Social Democracy, 2018, 7(2), p. 6.
[34] Medya ve Nefret Söylemi II:, s. 30.
[35] Նույն տեղում, էջ 27:

թյունում։ Դիսկուրս-վերլուծական դիտանկյուն» աշխատության հեղինակներն իրավացիորեն նշում են, որ «մարդիկ դառնում են ոչ թե պարզապես նորություններ ստացող, այլև նորություն ստեղծող և համաստեղծող։ Առցանց աշխարհում, որը գլոբալ հաղորդակցության մեջ դառնում է ժամանակային և տարածական սահմանների վերացման վայր ինտերնետ ունեցող ցանկացած անձ կարող է հայտնել իր կարծիքը, մասնակցել երկխոսությանը և ներդնել իր գիտելիքներն ու մտքերը նոր «կիբեռմշակույթի» ստեղծման համար»[36]։ Ի սկզբանե թվում էր, որ ոչ միայն պետական, քաղաքական, մշակութային գործիչների, այլև միլիոնավոր սովորական օգտատերերի ձայնի լսելի դառնալը ժողովրդավարության աննախադեպ զարգացման հնարավորություն է, որը, սակայն, իրականում վերածվեց ավելի շուտ կարծիքների քաոսային տեղատարափի, որում միախառնված են ճիշտն ու սխալը, օբյեկտիվն ու սուբյեկտիվը, հիմնավորված պնդումն ու անհիմն վիրավորանքները։ Բոստոնի համալսարանի Փիլիսոփայության և գիտության պատմության կենտրոնի հետազոտող Լի Մըքինթերը նշում է. «Ես կարծում եմ, որ ինտերնետի ամենամեծ վտանգներից մեկը տեղեկատվության գերմեծ ծավալն է։ Այո՛, այն կարող է ուղղորդել մեզ դեպի ճշմարտություն, բայց սուտը միշտ դրա կողքին է։ Մարդկանց մեծ մասին դժվար է մեկը մյուսից տարբերակել այնպես, ինչպես որ դժվար է, օրինակ, գովազդային հոլովակը դիտելիս հասկանալ, թե օճառի որ բրենդն է իսկապես լավը։ Լրահոսի անհավանական ակտիվացումը ցույց տվեց, որ երբ ճշմարտությունը ստիպված է պայքարել քարոզչության հետ, միանշանակ չէ, որ ճշմարտությունը կհաղթի։ Այս պատճառով ես կարծում եմ, որ վատ չէր լինի, եթե, օրինակ, ֆեյսբուքի նման սոցիալական ինտերնետ հարթակները ենթարկվեին

[36] Assimakopoulos S., Baider F. H., Millar Sh., Online Hate Speech in the European Union: A Discourse-Analytic Perspective, Springer, 2017, p. 11.

որոշակի կանոնների, ինչպես այլ լրատվամիջոցները, թերթերը: Նրանք պետք է պատասխանատու լինեն հարթակում ներկայացված սուտ բովանդակության համար»[37]:

«Ատելության խոսքի» տարածման արագությունը ինտերնետ հարթակներում ապշեցուցիչ է, իսկ լսարանի ընդգրկման ծավալները տարեցտարի մեծանում են: Web 2.0 առցանց տիրույթում «հեյթերներն» (անգլ. բռց.՝ ատող) ունեն ատելությունն արտահայտելու բազմաթիվ ճանապարհներ և գործիքներ՝ իրենց ձայնը լսելի դարձնելու համար: Չնայած վերջին տարիներին որոշ ընկերություններ ունեն հատուկ աշխատակիցներ, ովքեր հետևում են վիրավորական խոսույթին կամ ստեղծում են այնպիսի ալգորիթմ, որ կարողանում է ճանաչել «ատելության խոսքը»[38], սակայն համաշխարհային սարդոստայնում վերահսկողություն կազմակերպելը բարդագույն գործընթաց է:

Բացի այդ, չնայած իրավական տիրույթում «ատելության խոսքը» սահմանափակելու ակտիվ փորձերին, մարդկությունը դեռևս չի կարողացել ձևավորել դրա չափման, գնահատման և վերահսկման համընդհանուր նորմեր ու կարգավորումներ: «Ատելության խոսքը» սահմանափակելու և կանխարգելելու մեխանիզմները դիտարկելիս պետք է հաշվի առնել, թե որքան է այդ խոսքը վտանգավոր հանրային համերաշխության համար: Այդ առումով, մասնագետներն «ատելության խոսքը» բաժանում են երեք խմբի՝ խոսք, որը պետք է արգելել օրենքով, խոսք, որը կարող է սահմանափակվել օրենքով, և խոսք, որը պետք է պաշտպանել օրենքով: Առաջին կետում են «ատելության խոսքի» ամենածայրահեղ դրսևորումները՝ ցեղասպանության և մարդկության դեմ այլ հանցագործությունների կոչեր, մարդկանց տարբեր խմբերի

[37] McIntyre L., Post-truth and the danger of disbelief, https://digitalfuturesociety.com/-qanda/post-truth-and-the-danger-of-disbelief-by-lee-mcintyre/ (հասանելի է 25.04.2021):

[38] Dangerous Speech:, p. 25.

նկատմամբ բռնության կոչեր և այլն: Երկրորդ տեղում է պակաս վտանգավորություն ունեցող խոսքը, որը կարող է ըստ տարբեր հանգամանքների սահմանափակվել: Խոսքի այն հատվածը, որը պիտի պաշտպանվի, ունի վտանգավորության ցածր աստիճան կամ վտանգավոր չէ, հիմնված է նախապաշարմունքների և կարծրատիպերի վրա. դրա օրինակ են գեղարվեստական խոսքը, անեկդոտները և այլն: Հետևաբար խոսքի ազատությունը կարող է սահմանափակվել միայն մի քանի հանգամանքի առկայության դեպքում: Սահմանափակումները պիտի ճշգրտորեն նկարագրված լինեն օրենքով, որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան կարգավորել սեփական խոսքը և վարքագիծը: Սահմանափակումները պիտի ունենան լեգիտիմ և հստակ ձևակերպված նպատակ, օրինակ՝ անվտանգությունը, հասարակական համերաշխությունը, հանրային առողջությունը պահպանելը[39]:

Դեռևս 1936 թ. Ազգերի լիգայի կողմից ընդունված «Ռադիոհեռարձակման խաղաղության պահպանման նպատակներով օգտագործման մասին» միջազգային կոնվենցիան պարտադրում էր պետություններին սահմանափակել միջազգային խաղաղության և անվտանգության համար սպառնալիք ներկայացնող կարծիքների տարածումը, արգելում էր սուտ լուրերի տարածումը[40]: Հետագայում «ատելության խոսքի» զսպման մեխանիզմ պետք է դառնային Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ՄԱԿ-ի ստեղծումից հետո ընդունված մի շարք փաստաթղթերում ռասայական, կրոնական, ազգային անհանդուրժողականության և խտրականության բացառմանը վերաբերող դրույթները[41], որոնք,

---

[39] Խանդանյան Ս., Ատելության խոսք, http://boon.am/violence-6/ (հասանելի է 15.06.2021):

[40] Пропаганда и Свобода Массовой Информации, Памятная записка Бюро Представителя ОБСЕ по вопросам свободы СМИ, Вена, 2015, стр. 12.

[40] Նույն տեղում, էջ 5:

[41] Ցանկացած տեսակի անհանդուրժողականության և խտրական վերաբերմունքի բացառում են նախատեսում, օրինակ, ՄԱԿ-ի Կանոնադրության պրեամբու-

սակայն, հնարավոր է շատ տարբեր տեսանկյուններից մեկնաբանել, ինչն էլ այս կամ այն քաղաքական, հասարակական շահարկումների համատեքստում հաճախ հանգեցնում է մի կողմից «ատելության խոսքի» զսպման անարդյունավետությանը, մյուս կողմից էլ՝ ատելության խոսքի սահմանափակման պատրվակով մի շարք պետություններում խոսքի ազատության իրավունքի ոտնահարման:

---

լայի 2-րդ կետը, 1-ին հոդվածի 3-րդ կետը, 13-րդ հոդվածի 1-ին բ, 55 գ և 77 գ կետերը, 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1–ին, 2-րդ, 7-րդ, 41-րդ հոդվածները, 1965 թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի լիկվիդացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածը, 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պակտի 19-րդ և 20-րդ հոդվածները, 1995 թ. Հանդուրժողականության սկզբունքների մասին հռչակագիրը, 1997 թ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի անդամ երկրներին «ատելության հրահրման հարցով № R (97) 20» հանձնարարականը և դրա հավելվածը, 2003 թ. Համակարգչային համակարգերով իրականացվող կիբեռհանցագործությունների ռասիստական և քսենոֆոբ բնույթի գործունեության քրեականացման կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը: Բացի այդ, ՄԻԵԴ-ը ատելության քարոզչության կանխարգելման գործիք է համարում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայի 17-րդ հոդվածը, որն արգելում է իրավունքի չարաշահումը: «Ատելության խոսքի» միջազգային փաստաթղթերով սահմանափակման մասին մանրամասն տե՛ս Язык вражды в СМИ. Правовые и этические стандарты, ред. Г. Ю. Араповой, Воронеж, 2011, стр. 5-34, ինչպես նաև Özarslan Z., Introducing Two New Terms into the Literature of Hate Speech: “Hate Discourse” and “Hate Speech Act” Application of “speech act theory” into hate speech studies in the era of Web 2.0, İletişim, 2014, s. 57:

*Նաիրա Պողոսյան*

# ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԼՄ-ՆԵՐԸ «ՀԵՏՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ» ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

*Մենք դեռ չենք հասել ճշմարտության դարաշրջանին, որպեսզի անցում կատարենք հետճշմարտությանը:*

*Աշըն Էլչին*[42]

2016 թ. «հետճշմարտություն» եզրույթը (անգլ. “Post truth”, թուրք. “gerçeklik sonrası, gerçek ötesi, post-hakikat, hakikat sonrası”) ճանաչվեց տարվա բառ: Համանուն գրքի հեղինակ, Բոստոնի համալսարանի Փիլիսոփայության և Գիտության պատմության կենտրոնի հետազոտող Լի Մըքինթըրը, այս եզրույթը մեկնաբանելով, ընդգծում է, որ հետճշմարտության դարաշրջանում «հասարակական կարծիք ձևավորելու հարցում էմոցիաներն ու անձնական կարծիքները օբյեկտիվ փաստերից ազդեցիկ են դարձել, իսկ որոշ մարդիկ պատրաստ են իրականությունը համապատասխանեցնել իրենց ցանկություններին, ոչ թե հակառակը»[43]: Իսկ իր հեռուստաելույթներից մեկում Լի Մըքինթերը շեշտել է. «Հետճշմարտությունն իրականության ստորադասումն է քաղաքականությանը: Այն ստից էլ վատ է: Ստելիս դուք գոնե հարգում եք ձեր լսարանին այնքան, որ փորձում եք համոզել, որ կեղծիքը ճիշտ է: Հետճշմարտային հասարակությունում դուք իրականում

[42] Elçin I., Başkan, Yalanlar ve Adamları http://www.birikimdergisi.com/guncel-yazilar/8172/baskan-yalanlar-ve-adamlari#.WmSKe65l_IX (հասանելի է 15.02.2020):
[43] Mcintyre L., Post-truth, Cambridge, 2018, p. 05.

չեք անհանգստանում՝ հավատում են մարդիկ ձեզ թե ոչ»[44]: Խնդիրն ավելի է սրվում ինտերնետ հարթակների անվերահսկելիության պայմաններում: Լրահոսում երբեմն քարոզչական նպատակներով, երբեմն էլ առանց որևէ ուղղորդման հայտնվում և տարածվում են իրականությունից շատ հեռու տեղեկություններ: Պարադոքսալ է, բայց փաստ, որ կեղծիքը ճշմարտության համեմատ վեց անգամ ավելի արագ է տարածվում[45]: Իսկ տարածման ամենամեծ արագությունն ու լսարանի ամենամեծ ընդգրկում ունենում են կեղծ քաղաքական լուրերը[46]: Ավելին, թուրք սոցիոլոգ-հոգեբան Ս. Շիրինն ընդգծում է, որ, որպես կանոն, ապատեղեկատվությունը տարածվում է հերքումից տասնյակ անգամ ավելի արագ[47]:

Մեդիագրագիտության ոչ բարձր մակարդակի պայմաններում շատ օգտատերեր արժանահավատ են համարում ինտերնետ կայքերում տեսած լուրերն ու փոխանցում դրանք իրենց շրջապատին: «Ինտերնետում եմ կարդացել/տեսել» արտահայտությունը շատերի համար բավարար հղում է լուրի ճշմարտացիությանը հավատալու համար: Գիտական հետազոտությունները ցույց են տվել, որ այլ հավասար պայմաններում սոցիալական ցանցերի օգտատերերն ավելի շատ են ապատեղեկատվություն ստանում, բայց և առավել վստահ են իրենց ստացած տեղեկատվության ճշմարտացիության հարցում: Բացի այդ, համաշխար-

[44] Mcintyre Լ., Post-truth and the danger of disbelief, https://digitalfuturesociety.com/-qanda/post-truth-and-the-danger-of-disbelief-by-lee-mcintyre/ (հասանելի է 25.04.2021):

[45] Medya ve Nefret Söylemi II:, s. 21.

[46] Vosoughi S., Roy D., Aral S., The Spread of True And False News Online, MIT Initiative On The Digital Economy Research Brief, https://ide.mit.edu/sites/default/-files/publications/2017%20IDE%20Research%20Brief%20False%20News.pdf, p. 3 (հասանելի է 11.01.2021):

[47] Özel Yayın: Post-truth (Hakikat sonrası) çağı Konuk: Selçuk R. Şirin https://www.youtube.com/watch?v=cFccCxMuU1g (հասանելի է 11.01.2021):

հային սարդոստայնում ընտրողական սկզբունքով հետևելով միայն իրենց քաղաքական-հասարակական դիրքորոշմանը մոտ գործիչների, լրագրողների՝ մարդիկ արդյունքում ստանում են իրականության հատվածային, այլ ոչ ամբողջական պատկերը։ Լ. Մըքինթերի «Հետճշմարտություն» գրքի գրախոս Մ. Ֆիլհոն իրավացիորեն նշում է, որ «հետճշմարտությունը ենթադրում է, որ համոզմունքներն ու տպավորությունները կարող են ձևավորել իրականություն կամ այլընտրանքային իրականություն»[48]։ Իրենց հռետորաբանությունը կառուցարկելիս հետճշմարտության գործիքակազմից են օգտվում նաև բազմաթիվ քաղաքական ու պետական գործիչներ։ «Հրանտ Դինք» հիմնադրամի «ատելության խոսքին» նվիրված 2020 թ. զեկույցում ասվում է. «Աշխարհի գրեթե բոլոր ծայրերում հաղթանակ տարած ֆաշիստական-պոպուլիստական քաղաքական ուժերի հետ ուս ուսի քայլող հետճշմարտության պատումը, մեզ համար արդեն սովորական դարձած մանիպուլյացիաները, խեղաթյուրումները, քարոզչությունն ու այլ նմանատիպ ռազմավարությունները, այսպես ասած, շատ են առաջադիմել»[49]։

Հետճշմարտություն եզրույթն առաջին հերթին ասոցացվում է ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի քաղաքական կերպարի հետ։ Սակայն սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Թուրքիան այն երկրների շարքին է դասվում, որոնք հետճշմարտության դարաշրջան են մտել այդ տերմինի ի հայտ գալուց տասնամյակներ առաջ։ Մեր կարծիքով, Մուսթաֆա Քեմալի կողմից առաջարկված Թուրքիայի Հանրապետության նախագիծը «հետճշմարտության» յուրօրինակ նախամոդել էր, որը, համատեղելով

[48] Filho M. C., Post-Truth and Authoritarianism: Reflections about the Antecedents and Consequences of Political Regimes Based on Alternative Facts, http://oaji.net/-articles/2020/645-1580415839.pdf (հասանելի է 11.01.2021)։

[49] Medya ve Nefret Söylemi II:, s. 20.

ճշմարտության հետ որևէ կապ չունեցող պատմագիտական, լեզվաբանական տեսությունները, հորինված ավանդույթները և ամենակարևորը «օտարների», առաջին հերթին հայերի, հույների դեմ պայքարելու համար միավորվելու անհրաժեշտությունը, ձևավորեց թուրքական ժամանակակից ինքնությունը: Թուրքիայի Հանրապետության գոյության ողջ ընթացքում հասարակական խոսույթում թույլատրելի և անթույլատրելի թեմաները մշտապես սահմանվել են ժամանակի իշխանությունների կողմից: 2002 թ. «Արդարություն և զարգացում կուսակցության» իշխանության գալուց հետո երկրում սկիզբ առած հարաբերական ազատականացումը երկար կյանք չունեցավ, իսկ Թուրքիայի վարչապետ այնուհետև նախագահ Ռ. Թ. Էրդողանը հետճշմարտային խոսույթի համաշխարհային առաջատարներից դարձավ: Ընդ որում, երկրում տիրող ավտորիտար մթնոլորտում թուրքական լրատվամիջոցները մեծամասամբ նախընտրում են չուղղել նախագահի սխալները, այլ կրկնում են դրանք կամ լավագույն դեպքում չեն ընդգրկում լրահոսում: Թուրք լրագրող Ֆ. Բիլդիրիջին, վերլուծելով Ռ. Թ. Էրդողանի 2021 թ. հունիս-հուլիս ամիսների մի քանի ելույթներ, առանձնացրել է մի շարք անճշտություններ, որոնք տեղ են գտել նաև թուրքական մամուլում: Օրինակ, 2021 թ. հուլիսի 2-ին Սաքարիայում ընդլայնված մարզային խորհրդաժողովին Էրդողանը հայտարարել էր. «Այսօր Եվրոպայի ամենազարգացած երկրներում անգամ այս [կորոնավիրուսի] պատվաստումները վճարովի են: 50 սթերլինգ, 100 եվրո, այս կերպ փող են վերցնում և անում: Մենք պատվաստման համար մի քուրուշ էլ չենք վերցնում: Մեզ էլ խորհուրդ են տալիս. «Այսպես չի լինի, հստակ գումար գանձեք, բայց մեր պատասխանն է՝ ոչ»[50]: Այս նույն միտքը

[50] Bildirici F., Erdoğan'ın dil sürçmeleri, bilgi hataları ve gerçeğe aykırı ifadeleri https://farukbildirici.com/erdogan-in-dil-surcmeleri-bilgi-hatalari-ve-gercege-aykiri-ifadeleri/ (հասանելի է 28.07.2021):

մի փոքր այլ կերպ նա ասել էր նաև հունիսի 25-ին Հաթայում՝ շեշտելով, որ Անգլիայում կրոնավիրուսի դեմ պատվաստումը 100 սթերլինգ արժի: Իրականության հետ որևէ կապ չունեցող այս նախադասությունը Sabah, Akşam, Türkiye և Yeni Şafak թերթերը պարզապես հանել են տեքստից, իսկ Hürriyet, Milliyet և Yeni Akit թերթերը թաքցրել են այն տեքստի մեջ[51]: Ոչ պակաս հետաքրքիր է, որ թուրքական բոլոր լրատվական գործակալությունների կայքերում առանց փոփոխությունների հրապարակվել էր 2020 թ. նոյեմբերի 20-ի ելույթում նախագահ Էրդողանի արած «Մարդկանց կյանքը ոչ մի բանից ավելի *արժեքավոր չէ [ընդգծումը – հեղ.]*» արտահայտությունն ու հունիսի 18-ին Անթալիայի դիվանագիտական ֆորումի ժամանակ «Միջազգային հասարակությունից չստացանք մեր սպասած աջակցությունը ո՛չ ահաբեկչական կազմակերպությունների հետ պայքարում, ո՛չ էլ Սիրիան *ապակայունացնելու [ընդգծումը – հեղ.]* մեր ջանքերում» հայտարարությունը[52]:

Թուրքիայի նախագահի՝ սեփական կարծիքը պարտադրելու սովորությանն անդրադառնալով՝ թուրք գրող, թարգմանիչ և գիտնական Մ. Բելգեն դեռ 2015 թ. գրել է, որ նախագահն առաջնորդվում է «Մենք միշտ ճիշտ ենք» բանաձևով». «Այս մենքի կազմը իրավիճակից կախված կարող է փոխվել, սակայն եթե Թայիփ Էրդողանն ինքն իրեն ինչ-որ «մենքի» մաս է համարում, ապա այդ մենքն անկախ ամեն ինչից իրավացի է: Եթե կոնկրետ դեպքում իրավացիությունը հստակ չէ, ապա դրա լուծումն էկրանից ավելի բարձր գոռալն է… «Ամենալավ պաշտպանությունը հարձակումն է» ընկալումը գուցե [նախագահի] ֆուտբոլային անցյալից եկած

[51] Նույն տեղում:

[52] Նույն տեղում:

սովորություն է»[53]: Զարմանալի չէ, որ նմանատիպ իրավիճակում բրիտանական «Ռոյթերս» լրատվական գործակալության տվյալներով 2018 թ. Թուրքիան 37 երկրների շարքում կեղծ նորությունների տարածմամբ առաջին տեղն էր զբաղեցրել[54]:

Պոլսահայ լրագրող Հայկո Բաղդաթը մի քիչ էմոցիոնալ, բայց շատ դիպուկ է նկարագրում Թուրքիայի ներկայիս վիճակը. «Էրդողանի ռեժիմն արդեն անդառնալիորեն վերածվել է սպանության մեքենայի, ճնշումների մեքենայի: …Մենք խայտառակության ականատեսն ենք: Թուրքիայում այժմ չի գործում ոչ մի նորմ, ոչ մի օրենք, ոչ մի դատախազ, ոչ մի ոստիկան, պետության բացակայության ռեժիմ է, որն ամբողջապես կախված է [մեկ մարդու] քմահաճույքից: Այսինքն՝ Օսման Քավալային ազատ արձակելը, Սելահեթթին Դեմիրթաշին բաց թողնելը, սպանություններ բացահայտելը, Դինքի գործով որոշումները արդեն կախված են միայն ռեժիմի շահերից և որոշվում են մեկ մարդու քմահաճույքով: 2021 թ. նման երևույթի գոյությունը ամոթ է, սա աշխարհի ամենաամոթալի ռեժիմներից մեկն է: Թուրքիայում «Միություն և առաջադիմություն կուսակցության» ռեժիմը չի պարտվել, ինչպես տեսնում եք: Ցեղասպան գաղափարախոսությունը չի պատժվել, իշխում է: Հետևաբար երբ հաղթենք նրանց, ովքեր մարդու իրավունքների, ժողովրդավարության, ցեղասպանության հետ առերեսման խնդիրներում պաշտպանում են այս ռեժիմի մոտեցումները, ավելի հանգիստ կկարողանանք խոսել: Չգիտեմ, վստահ չեմ, որ Էքրեմ Իմամօղլուի, Մանսուր Յավաշի նման ազգայնամոլների հետ կարող ենք դա անել, բայց որպես հայ ինձ համար խիստ կարևոր է Թուրքիայում Հայոց ցեղասպանության

[53] Belge M., Ermenilere Had Bildirmek, https://birikimdergisi.com/haftalik/1443/-ermenilere-had-bildirmek (հասանելի է 15.03.2020):

[54] Taş O., Taş T., Post-Hakikat Çağında Sosyal Medyada Yalan Haber ve Suriyeli Mülteciler Sorunu, İletişim, N 29, Aralık 2018, s. 187-207, http://iletisimdergisi.gsu.edu.tr/download/article-file/605971 (հասանելի է 19.05.2020):

հետ առերեսումը: Սակայն ես Թուրքիայում ապրող իմ ընկերներին միշտ ասում եմ, որ նրանց համար այն ավելի կարևոր է: Մեզ ի՞նչ, մենք գիտենք, թե մեզ հետ ինչ է տեղի ունեցել: Նրանք չեն կարողացել հասկանալ, որ հայերից հետո իրենք են դառնալու մարդասպանին արդարացնող, մարդասպանին ազատ արձակող գաղափարախոսություն դավանող թուրքերի հերթական զոհը»[55]:

Ժամանակակից թուրքական լրատվական դաշտը ձևավորող հիմնական և գլխավոր թերթերի, կայքերի, հեռուստատեսային և ռադիոալիքների քանակը գերազանցում է հարյուրը: Ընթերցողների տարբեր քանակներ, թեմատիկ տարբեր ուղղություններ, որակական տարբեր մակարդակներ ունեցող այս լրատվամիջոցները ստեղծում են երկրում բազմակարծության գոյության պատրանք, որը, սակայն, նույնիսկ մակերեսային ուսումնասիրության դեպքում մեծապես ժխտվում է: Թուրքական խոշոր լրատվամիջոցների մեծ մասը ներառված են ազդեցիկ հոլդինգների մաս կազմող մեդիա խմբերում, որոնց շարքին են պատկանում Demirören-ը, Turkuvaz-ը, TürkMedya-ը, İhlas-ը, Doğuş-ը և այլն[56]: Բոլոր այս մեդիա խմբերն էլ աչքի են ընկնում երկրի կառավարության նկատմամբ ոչ քննադատական, չեզոք, իսկ ավելի հաճախ նույնիսկ իշխանամետ դիրքորոշմամբ: Նման մոտեցմանը նպաստում են առաջին հերթին մեդիա խմբերը ներառող հոլդինգների սեփականատերերի սերտ անձնական և բիզնես կապերը բարձրաստիճան պետական գործիչների հետ: «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության 2018-2019 թթ. Թուրքիային վերաբերվող զեկույցում մամուլի ազատությունը սահմանափակող կարևորագույն գործոն է համարվում թուրքական

---

[55] https://www.ermenihaber.am/tr/news/2021/05/10/Hayko-Ba%C4%9Fdat-Ermeni-Soyk%C4%B1r%C4%B1m%C4%B1/207438 (հասանելի է 19.05.2021):

[56] Պետրոսյան Գ., Թուրքիայի առցանց լրատվամիջոցները. թարմացվող ձեռնարկ 1.0, Երևան, 2020, էջ 32:

լրատվամիջոցները ներառող հոլդինգների կախվածությունը էներգետիկայի, տրանսպորտի, կառուցապատման և այլ ոլորտներում տրամադրվող պետական տենդերներից[57]: Տնտեսական միջոցներով խոսքի ազատության սահմանափակման վառ օրինակներից է 2000-ականների վերջին Թուրքիայի խոշորագույն մեդիա ընկերության՝ Doğan-ի դեմ հարկային հետապնդումների կազմակերպումը, որ մասնագետները կապում էին պաշտոնական Անկարային քննադատելու և անկախ գործելու փորձերի հետ,[58] և որն ի վերջո ավարտվեց այդ ընկերությանը պատկանող լրատվամիջոցների՝ իշխանամետ Demirören ընկերությանն անցումով:

Թուրքական մամուլում «ատելության խոսքի» վերաբերյալ «Հրանտ Դինք» հիմնադրամի 2020 թ. զեկույցում նշվում է, որ Թուրքիայում ԶԼՄ-ները հետզհետե դադարում են չորրորդ իշխանություն լինել և դառնում իշխանամետ քարոզչության գործիք[59]: Այս գործընթացը խթանող գործոնների շարքում զեկույցում նշվում է Գեզի այգու դեպքերից և 2016 թ. հուլիսի 15-ի հեղա-

---

[57] Media Ownersip Monitor: Turkey, https://www.mom-rsf.org/en/countries/turkey/ (հասանելի է 11.04.2020):

[58] Պետրոսյան Գ., նշված աշխ., էջ 28-29:

[59] Արժի շեշտել, որ թուրք լրագրողները դեռևս քսաներորդ դարի կեսերից փորձում են ձևավորել լրագրողական համայնքի շահերը պաշտպանող և միևնույն ժամանակ վերահսկող կառույցներ: 1960 թ. հուլիսի 24-ին լրագրողները, թերթերի սեփականատերերն ու մասնագիտական կառույցները ստորագրեցին «Թուրքիայի լրագրողների խորհրդի» և «Թուրք լրագրողների արհմիության» համատեղ աշխատանքի արդյուքում ստեղծված և «Մամուլի բարոյականության օրենք» անունը ստացած «ջենտլմենական համաձայնագրին» հետևելու պարտավորագիրը, որը, սակայն, ազդեցիկ դեր չունեցավ: Հետագայում նմանատիպ կառույց ստեղծելու փորձեր եղել են 1968 և 1975 թթ.: 1999 թ. մարտի 22-ին լրագրող Յավուզ Բայդարի կողմից տպագրված առաջին հոդվածով Թուրքիայում սկսեց գործել «մամուլի օմբուդսմենի» կամ «ընթերցողի ներկայացուցչության» ինստիտուտը, որը, սակայն, պետության տոտալ թելադրանքի պայմաններում ևս լուրջ հաջողություններ չի գրանցել: Տե՛ս Medya ve Nefret Söylemi II: Değişmeyen Sorular, Güncel Tartışmalar, s. 51-54:

շրջման չհաջողված փորձից հետո մամուլի վրա ճնշումների ուժեղացումը[60], լրագրողական համայնքի ներկայացուցիչների ֆինանսական և հոգեբանական խնդիրները, լրագրողների շահերը պաշտպանող միասնական կառույցների բացակայությունը, գրաքննությունն ու ինքնագրաքննությունը[61]:

Լրագրողների իշխանական խոսափող դառնալու հանգամանքը դրական է ընկալվում նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից: Այս հարցով իր դիրքորոշումը նա ներկայացրել է դեռ վարչապետ եղած ժամանակ՝ հայտարարելով. «Անկողմնակալը ոչնչանում է»[62], ինչով, փաստորեն, բացեիբաց խոստովանել է ԱԶԿ հայացքները չկիսող լրագրողների նկատմամբ ոչ բարյացակամ վերաբերմունքը: Բնական է, որ նախագահի և նրա մերձավոր շրջապատի նման դիրքորոշումը ստիպում է ամենամեծ տպաքանակ ունեցող Hürriyet, Miliyet, Sabah թերթերին և առհասարակ բոլոր ԶԼՄ-ներին օգտագործել իշխանական բառապաշարն ու ոճը, ինչն էլ հանգեցնում է խտրական արտահայտություններ և «ատելության խոսք» պարունակող լուրերի և հոդվածների քանակի աճին[63]: Անշուշտ թուրքական մեդիա դաշտում կան որոշ լրատվամիջոցներ, օրինակ՝ Diken, T24, որոնք հակաիշխանական թեզեր են փորձում բարձրաձայնել: Սակայն ոչ իշխանահաճո լրագրողները հաճախ ենթարկվում են տարատեսակ հալածանքների ու ճնշումների, հայտնվում են բանտերում: 2021 թ. հուլիսի 7-ի դրությամբ «Լրագրողների պաշտպանության կոմիտեն» հայտնել էր երկրում 38 ձերբակալված լրագրողի մասին[64]:

---

[60] Medya ve Nefret Söylemi II:, s. 56.

[61] Նույն տեղում, էջ 36:

[62] Նույն տեղում, էջ 74:

[63] Նույն տեղում, էջ 74:

[64] https://tgs.org.tr/cezaevindeki-gazeteciler/ /(հասանելի է 15.07.2021):

2019 թ. «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կազմած «Աշխարհում մամուլի ազատության ինդեքսում» Թուրքիան 180 երկրների ցանկում 157-րդն էր և ստացել էր «պրոֆեսիոնալ լրագրողների աշխարհում ամենամեծ բանտ» անունը[65]: Հարկ է նշել, որ 2020 թ. նույն ցուցակում Թուրքիան զբաղեցրել է 153-րդ տեղը[66], սակայն կազմակերպության փորձագետների բնորոշմամբ «կառավարությունը համակարգում է ազգային լրատվամիջոցների 90 տոկոսը «Ռադիո-հեռուստատեսության բարձրագույն խորհրդի» (RTÜK)[67] և այլ վերահսկող կառույցների միջոցով, իսկ Նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի վարչությունը» (անգլ. Presidential Directorate for Communications, թուրք. Cumhurbaşkanlığı İletişim Başkanlığı) իշխանության նկատմամբ ցանկացած քննադատություն բացառելու կամ քրեականացնելու համար կիրառում է խտրական մոտեցումներ: Հնարավոր բոլոր միջոցներն օգտագործվում են բազմակարծությունը սահմանափակելու համար: Այս «Նոր Թուրքիայում», որն առանձ-

[65] Պետրոսյան Գ., նշված աշխ., էջ 25:

[66] https://rsf.org/en/ranking/2021# (հասանելի է 16.06.2021):

[67] Թուրքիայում լրատվամիջոցների դաշտը կարգավորող հիմնական կառույցը «Ռադիո–հեռուստատեսության բարձրագույն խորհուրդն է» (RTÜK): Պետական այս կառույցը ստեղծվել է 1994 թ.: Կառույցի ղեկավար կազմը, որը բաղկացած է 9 անձից, նշանակվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից: «Ռադիո–հեռուստատեսության բարձրագույն խորհրդի» անդամների 1/3–ն ամեն երկու տարին մեկ փոխվում է: Խորհրդի նախագահն ու փոխնախագահն ընտրվում են մյուս անդամների կողմից 2 տարի ժամկետով: Կառույցը վերահսկում է թուրքական տպագիր և առցանց մեդիան՝ խախտումների դեպքում զգուշացնելով կամ կասեցնելով այս կամ այն լրատվամիջոցի աշխատանքը: Այս մասին մանրամասն տե՛ս Պետրոսյան Գ., Թուրքիայի առցանց լրատվամիջոցները. թարմացվող ձեռնարկ 1.0, Երևան, 2020, էջ 23: Կառույցի պաշտոնական կայք՝ http://www.rtuk.gov.tr/#.24: «Ֆրիդոմ հաուս» կազմակերպության տարեկան հաշվետվության մեջ ասվում է նաև, որ «Ռադիո-հեռուստատեսության բարձրագույն խորհրդի» անդամների մեծ մասը որպես կանոն անդամակցում են իշխող «Արդարություն և զարգացում» կամ նրա քաղաքական գործընկեր «Ազգայնական շարժում» կուսակցություններին:

նանում է Ռ. Թ. Էրդողանի սուպերնախագահությամբ, որտեղ պետական պաշտոնյաների և պետական կառույցների կամայական որոշումները «նոր նորմալն են», ինտերնետի գրաքննությունը հասել է աննախադեպ մակարդակի»[68]:

Իսկ «Ֆրիդոմ հաուս» կազմակերպության 2020 թ. «գլոբալ ազատության վարկանիշ»-ում Թուրքիան հավաքել է 32 միավոր և ստացել «ոչ ազատ» երկրի կարգավիճակ: Ընդ որում, «ազատ և անկախ ԶԼՄ-ներ» կետում հնարավոր 4 միավորից Թուրքիային միայն 1 միավոր է տրվել: Այս գնահատականի հիմնավորման մեջ ասվում է. «Մամուլը, հատկապես՝ հեռուստաընկերությունները, արտացոլում են պետության տեսանկյունը և սովորաբար նույն իշխանամետ գիծն են վարում: Թեև կան որոշ անկախ թերթեր և կայքեր, սակայն նրանք ենթարկվում են հսկայական քաղաքական ճնշումների և որպես կանոն թիրախավորվում են: Պետությունը շարունակում է խորացնել օնլայն ռեսուրսները կառավարելու իր փորձերը: 2020 թ. հուլիսին ընդունված նոր օրենքի համաձայն օրական մեկ միլիոնից ավելի օգտատեր ունեցող միջազգային ցանցերը, ինչպես, օրինակ, Facebook-ը և Twitter-ը, պետք է Թուրքիայում ներկայացուցչություն ունենան և համապատասխան պահանջի առկայության դեպքում 48 ժամվա ընթացքում հեռացնեն հրապարակումները»[69]: Նման իրավիճակում զարմանալի չէ, որ «Թուրքիայի փոխվող մեդիալանդշաֆտը» վերնագրով ծավալուն հոդվածի հեղինակներ Է. Օ’Դոնոյի, Մ. Հոֆմանի և Ա. Մակովսկու հետազոտության արդյունքներում պարզվել է, որ հարցվողների շուրջ 70%-ն առհասարակ չի վստահում

[68] Turkey, https://rsf.org/en/taxonomy/term/145 (հասանելի է 16.06.2021):

[69] https://freedomhouse.org/country/turkey/freedom-world/2021 (հասանելի է 16.06.2021):

թուրքական լրատվամիջոցներին[70]: Միևնույն ժամանակ հետազոտողներն ընդգծում են, որ COVID 19-ի համավարակը թույլ տվեց ակնառու կերպով տեսնել, որ Թուրքիայում իշխանամետ և ընդդիմադիր ընտրազանգվածներն ապրում են զուգահեռ մեդիա իրականություններում: Առաջինները լսում են, որ «աշխարհը հիացմունքով հետևում է Թուրքիային», իսկ երկրորդ խումբը սոցցանցերում հետևում է թարմ գերեզմանոցների փորման գործընթացին[71]:

Վերը նշված առանձնահատկությունները հաշվի առնելով՝ պետք է ընդգծել, որ նույնիսկ թուրքական մեդիադաշտի տարբեր բևեռներում գտնվող լրատվամիջոցները մեծամասամբ զարմանալիորեն միանական են հայերին և առհասարակ հայկականության առնչվող իրենց մոտեցումներում: Ինչպես վերևում նշել էինք, Թուրքիայի Հանրապետության ստեղծումից ի վեր ազգային քաղաքականության հիմնասյուներից մեկն է եղել և այսօր էլ շարունակում է մնալ ոչ մուսուլմանների նկատմամբ խտրական վերաբերմունքը, որը տասնամյակների ընթացքում ունեցել է թե՛ ֆիզիկական, թե՛ տնտեսական, թե՛ հոգեբանական ու սոցիալմշակութային դրսևորումներ, և որի հետևանքով ներկայումս թուրքական հասարակական կյանքում հայերի կամ հույների ներկայությունը գրեթե չի զգացվում կամ հասցված է մինիմումի: Ինչպես իր յութուբյան ալիքի հաղորդումներից մեկում նշում է Ստամբուլում հրատարկվող «Ագոս» թերթի սյունակագիր Օհաննես Քըլըչդաղը՝ «Թուրքիայի պատմության ցուցիչ է այն փաստը, որ Թուրքիայում, հատկապես համեմատաբար երիտասարդ սերունդը այս անունը [Հովհաննես] չգիտի: Եթե այսօր լայն շրջա-

[70] O'Donohue A., Hoffman M., Makovsky A., Turkey's Changing Media Landscape, https://www.americanprogress.org/issues/security/reports/2020/06/10/485976/turkeys-changing-media-landscape/ (հասանելի է 18.04.2021):

[71] Նույն տեղում:

նակներին անծանոթ է այն անունը, որն ամենատարածվածն էր դեռ երեկ նրանց հայրերի կամ գոնե պապերի հետ կողք կողքի ապրած ժողովրդի մոտ, դա ո՛չ պատահականություն է, ո՛չ էլ բնական երևույթ, այլ այս ընթացքում Թուրքիայում տեղի ունեցած ժողովրդագրական և միևնույն ժամանակ մշակութային փոփոխության արտացոլումն է, որի միջոցով երևում է, թե ինչ ենք մոռանում, ում ենք մոռանում և իհարկե ինչու ենք մոռանում»[72]:

Օսմանյան կայսրության անկումից հետո Թուրքիայում մնացած ոչ մուսուլմանների առանց այն էլ փոքրաթիվ համայնքների թվաքանակի՝ տասնամյակների հետևողական քաղաքականության ընթացքում նվազմանը զուգահեռ նրանց ուղղված «ատելության խոսքը» պետական քարոզչության հոլովույթում ավելանում է՝ հասարակության մեջ վառ պահելով հայերի, հույների և առհասարակ քրիստոնյաների «օտար», «ուրիշ», «թշնամի» ընկալումը: «Հրանտ Դինք» հիմնադրամի կողմից իրականացված հարցումները ցույց են տվել, օրինակ, որ մարդկանց հավասարության մասին ընդհանուր հռչակագրային բնույթի հայտարարությունները ընկալելի և ընդունելի են հարցվածների մեծամասնության կողմից[73]: Միևնույն ժամանակ մոտավորապես նույն մեծամասնությունը հպարտություն է զգում, երբ պատշգամբներում տեսնում է թուրքական դրոշը և պատրաստ է սեփական որդու կյանքը նվիրել հայրենիքի փրկության համար: Հարցվողները հիմնականում համաձայն են այն պնդման հետ, որ [Թուրքիայում բնակվող] բոլոր մարդիկ իրենք իրենց պետք է համարեն նախևառաջ Թուրքիայի Հանրապետության քաղաքացի, հրաժարվեն սեփական էթնիկ, կրոնական, քաղաքական նախընտրություններն ու տարբերություններն ընդգծելուց: Ավելին, հարցվածների մեծ մասի

---

72 Kimdir Ohannes nedir Kılıçdağı?, Türkiye'de Ulus İnşasına Dolaylı Bir Bakış, https://www.youtube.com/watch?v=S1REy9IxqJw

73 Medya ve Nefret Söylemi II, s. 42.

համար թուրք ժողովուրդը բոլոր հարցերում առավելություն ունի այլ ժողովուրդների նկատմամբ[74]: Թուրքական հասարակության նման տրամադրվածությունն արդյունք է նախակրթարանից մինչ բարձրագույն ուսումնական հաստատություններ, բակային խոսակցություններից մինչ գրքեր ու հեռուստատեսային ֆիլմեր հետևողականորեն տարածվող այլատյացության ու մերժողականության քարոզչությանը:

Այս թեզի ամենալավ հիմնավորում կարելի է համարել մանկական հայտնի շուտասելուկը՝ «Մեկ-երկու-երեք՝ թուրքեր շատ ապրեք, չորս-հինգ-վեց՝ Լեհաստանը քանդվեց, յոթ-ութ-ինը հույները խոզ են, տասը-տասնմեկ-տասներկու՝ իտալացիներն աղվես, տասներեք-տասնչորս-տասնհինգ՝ ռուսները նենգ խաբեբաներ են» (թուրք.՝ 1-2-3'ler, yaşasın Türkler, 4-5-6 Polonya battı, 7-8-9 Rumlar domuz, 10-11-12 İtalya tilki, 13-14-15 Ruslar kalleş")[75]:

Թուրքական հասարակությունն առհասարակ ընդունված վարվելակարգից տարբերվող, մենթալիտետի կանոններին հակադրվել փորձող մարդկանց անմիջապես պիտակավորում է որպես «գյավուր», «հայի վիժվածք» կամ «հույնի բիճ»: Ավելին, առօրյա կյանքում մեծ կիրառություն ունեն նաև «գյավուր» բառից առաջացած «Գյավուրից օգուտ, թույնից բուժում» ("Gâvurdan vefa, zehirden şifa"), «Խոզից/արջից կաշի չի ստացվի, գյավուրից՝ ընկեր» ("Domuzdan/ayıdan post, kâfirden dost olmaz"), «Գյավուրը միևնույնն է իր գյավուրությունը կանի» ("Gâvur gâvurluğunu

[74] Նույն տեղում, էջ 44:

[75] Nefret Suçları ve Nefret Söylemi/Hate Crimes and Hate Speech, Ed. A. Çavdar, A. B. Yıldırım, İstanbul, 2010, s. 160 https://hrantdink.org/attachments/article/73/NefretSoylemiveNefretSuclari.pdf. Այս շուտասելուկի այլ տարբերակներ էլ կան, որոնցում փոփոխվում են նշվող քրիստոնյա ժողովուրդների անունները: Մի քանի օրինակ տե՛ս https://eksisozluk.com/bir-iki-ucler-yasasin-turkler--298720?p=3 (հասանելի է 27.05.2021), https://twitter.com/PublicGokberk/status/1416653648193638400 (հասանելի է 27.05.2021), https://www.cumhuriyet.com.tr/yazarlar/mine-sogut/bir-iki-ucler-yasasin-turkler-495896 (հասանելի է 29.03.2021):

yapar”), «գյավուրի համառություն» “gâvur inadı”, «գյավուրի ապրանք» (“gâvur malı”), «գյավուրի մեռել» (“gâvur ölüsü”) և նմանատիպ այլ արտահայտությունները, որոնց առկայությունը մարդկանց առօրյա բառապաշարում Թուրքիայում ոչ մուսուլմանների նկատմամբ «ատելության խոսքի» արմատների խորությունն է ցուցադրում: Գյավուր բառը ժամանակ առ ժամանակ հայտնվում է նաև բարձրաստիճան պաշտոնյաների լեքսիկոնում: Այսպես, օրինակ, փոխվարչապետ Ն. Քուրթուլմուշը 2016 թ. դեկտեմբերի 2-ին Քաստամոնուում իր ելույթում հայտարարել է. «Նոր Թուրքիան, իր պատմության, մշակույթի հետ հաշտվելով, ի՞նչ է տեսնում: Այնտեղ իմպերիալիզմ չկա, գաղութարարություն չկա: Բայց կա մեկ այլ բան. երբ հաշտվում ենք մեր պատմության, մեր մշակույթի հետ, ուրիշներին հակառակ իմպերիալիստական պետության լծի տակ մտնել չկա: Երբ ասում ենք Թուրքիայի մուսուլմանություն, հասկանում ենք մինչ մեր օրեր հասած մեծ քաղաքակրթության ամենահիմնական առանձնահատկություններից մեկը՝ գյավուրին գյավուր ասելով՝ գյավուրին ընդդիմանալ: Դրա շնորհիվ մենք Չանաքքալեից [Գալիպոլի կամ Դարդանել-ծնթ. հեղ.] չհրաժարվեցինք: Դրա շնորհիվ ազատագրական պայքարում զերի չընկանք: Մենք մտածում ենք այնպես, ինչպես մտածում է այս ժողովուրդը, այս երկրի մուսուլմանները: Մենք պետք է լուրջ մոտենանք անկախության խնդրին: Մեզ համար անկախությունը գյավուրին ընդդիմանալն է: Հակառակ դեպքում Չանաքքալեում չէինք կարողանա դիմադրել: Մեր բառապաշարում գյավուրը ոչ մուսուլմանին բնորոշող բառ չէ, մեր բառապաշարում գյավուր նշանակում է դաժան բռնակալ, եղեռնագործ, իմպերիալիստ»[76]: Ոչ պակաս կարևոր է շեշտել այն հանգամանքը,

---

[76] Kurtulmuş: Bağımsızlık gavura 'gavur' diyebilmektir, https://www.cumhuriyet.-com.tr/haber/kurtulmus-bagimsizlik-gavura-gavur-diyebilmektir-639764 (հասանելի է 29.03.2021), նույնը տե՛ս https://www.hurriyet.com.tr/gundem/bagimsizlik-gavura-

որ այս երևույթը հրապարակած Cumhuriyet, Hürriyet թերթերն էլ որպես վերնագիր ընտրել էին «Անկախությունը գյավուրին գյավուր ասելն է» արտահայտությունը՝ այսպիսով ընթերցողի ուշադրությունը սևեռելով փոխվարչապետի ելույթի հակաքրիստոնեական շեշտադրմանը: Բուրսայից ընտրված ԱԶԿ-ական պատգամավոր Հայրեթթին Չաքմաքն էլ 2017 թ. ապրիլի 16-ին նախատեսված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի քարոզարշավի շրջանակներում սեփական ֆեյսբուքյան էջում կոչ էր արել կողմ քվեարկել փոփոխություններին և «այո» գրած կնիքը քվեաթերթիկին դրոշմել «այնպես կարծես ոչ թե թղթին, այլ գյավուրին եք խփում»[77]:

Բիլգի համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգ Ա. Յումուլը, քննադատելով այս երևույթը, գրում է. «Կոլեկտիվ ենթագիտակցության մեջ մեղավորը ոչ մուսուլման է, բարեպաշտը՝ մուսուլման: Ով անբարո է, նա ոչ մուսուլման է: Անշուշտ հասարակության միակ «օտարը» ոչ մուսուլմանները չեն, սակայն ոչ մուսուլմանները գրեթե բոլոր հասարակական, քաղաքական, գաղափարական խմբերի, նույնիսկ իրենք իրենց կողմից օտարացված են: Թեմել Դեմիրենի խոսքով «օտար» բառի թուրքերեն հոմանիշը ոչ մուսուլմանն է»[78]:

Այլատյացությունը Թուրքիայում մեկ անգամ ևս ընդգծվեց կորոնավիրուսի համավարակի օրերին: Երբ «սրանք են կորոնավիրուսը մեր գլխին բերել» կոչերով այրվեց Ստամբուլի Բեյօղլու թաղամասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դուռը, ապա մի

gavur-diyebilmektir-40296043 (հասանելի է 29.03.2021); https://hrantdink.org/attachments/article/1082/Yazili-Basinda-Gavur-Soylemi-Raporu.pdf (հասանելի է 25.11.2019):

[77] Yumul A., Kan E., Yazılı Basında Gavur Söylemi, İstanbul, 2017, s. 9, https://hrantdink.org/attachments/article/1082/Yazili-Basinda-Gavur-Soylemi-Raporu.pdf (հասանելի է 25.11.2019):

[78] Medya ve Nefret Söylemi II, s. 123.

անձ պոկեց Ուսքյուդարում գտնվող սուրբ Մարիամ Աստվածածնի եկեղեցու ճաղավանդակից խաչը[79]: Նույն ժամանակահատվածում՝ 2020 թ. մայիս ամսվա ընթացքում, նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը իր ելույթներում երկու անգամ անդրադարձավ փոքրամասնություններին. նախ մայիսի 4-ի ելույթում նրանց անվանեց «սրի մնացորդներ»[80], իսկ արդեն մայիսի 11-ին հայկական և հունական լոբիները անվանեց «չար ուժեր»՝ զուգահեռներ տանելով նրանց և գյուլենականների, ահաբեկիչների միջև[81]: Բնականաբար երկրի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հնչեցվող այս մեղադրանքները չեն կարող ազդեցության չունենալ հասարակության տրամադրությունների վրա, չնպաստել ոչ մուսուլմանների նկատմամբ անհանդուրժողականության աճին: Սրա իրական վկայությունն են նաև ոչ մուսուլմանների վրա հարձակումները, դպրոցների, գերեզմանոցների, հուշարձանների պղծումը[82]: Խնդրի լրջության մասին է վկայում այն փաստը, որ

[79] Եկեղեցիներում իրականացված հարձակումների մասին մանրամասն տե՛ս Kuzguncuk Kilisesi'nin haçı yerinden söküldü http://www.agos.com.tr/tr/yazi/24079/-kuzguncuk-kilisesi-nin-haci-yerinden-sokuldu (հասանելի է 29.03.2021), ինչպես նաև Bakırköy'deki Ermeni Kilisesi'nin kapısını yaktı, "Corona'yı bunlar bela etti" dedi https://www.sozcu.com.tr/2020/gundem/bakirkoydeki-ermeni-kilisesinin-kapisini-yakti-coronayi-bunlar-bela-etti-dedi-5803418/ (հասանելի է 29.03.2021):

[80] Էրդողանի ելույթի տեքստը տե՛ս Cumhurbaşkanı Erdoğan tek tek açıkladı! İşte Mayıs ayı normalleşme planı, https://www.milliyet.com.tr/siyaset/son-dakika-cumhurbaskani-erdogan-tek-tek-acikladi-iste-mayis-ayi-normallesme-plani-6205190 (հասանելի է 31.03.2021):

[81] Էրդողանի ելույթի տեքստը տե՛ս Erdoğan "Ermeni ve Rum lobileri"ni suçladı http://www.agos.com.tr/tr/yazi/24022/erdogan-ermeni-ve-rum-lobileri-ni-sucladi (հասանելի է 31.03.2021):

[82] Կոնկրետ Ստամբուլի հայ համայնքի վրա հարձակումների մասին մանրամասն տե՛ս https://bianet.org/bianet/egitim/96105-turkiyedeki-ermeni-okullari-tehdit-ediliyor; https://bianet.org/bianet/nefret-soylemi/209057-ermeni-kadin-samatya-da-saldiriya-ugradi; https://bianet.org/bianet/toplum/181022-hdp-li-paylan-azinliklara-yonelik-nefret-suclari-nasil-engellenecek; https://bianet.org/bianet/ayrimcilik/143373-hedefte-ermeni-kadinlar-mi-var; https://bianet.org/bianet/toplum/149282-bu-sefer-de-ferikoy-de-ermeni-kadina-saldiri; https://bianet.org/bianet/azinliklar/247118-surp-

Թուրքիայի մասին 2021 թ. մայիսի 19-ին հրապարակված զեկույցում Եվրոպական խորհրդարանը կոչ է արել այդ երկրի կառավարությանը անհապաղ օրենսդրորեն արգելել էթնիկ ծագման, կրոնի, լեզվի, քաղաքացիության, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության հիման վրա խտրականությունը և ռասիզմի, հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համար փոքրամասնություններին և խոցելի խմբերին, այդ թվում՝ կանանց, երեխաներին, ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին, փախստականներին, էթնիկ փոքրամասնություններին, այդ թվում՝ Թուրքիայի քաղաքացի հույներին և հայերին ու քրիստոնյա, հրեա, ալևի կրոնական փոքրամասնություններին[83]: Նույն զեկույցում Թուրքիային կոչ են անում ընդունել Հայոց ցեղասպանությունը, զերծ մնալ հակահայկական քարոզչությունից և պաշտպանել իր տարածքում գտնվող հայկական մշակութային ժառանգությունը[84]: Սակայն ո՛չ միջազգային կառույցների, ո՛չ էլ իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում Թուրքիայում մարդու իրավունքների ոտնահարման, այդ թվում նաև «ատելության խոսքի» ահազնացող չափերի մասին հնչող մտահոգությունները չեն ստիպում երկրի իշխանություններին վերանայել սեփական մոտեցումները:

Ատելության խոսքի մշտադիտարկման բազմամյա փորձ ունեցող «Հրանտ Դինք» հիմնադրամի զեկույցները ցույց են տալիս,

takavor-kilisesi-nin-kapisina-cikip-dans-ettiler https://bianet.org/bianet/ifade-ozgurlugu/133347-sofor-ermeni-oldugu-icin-kadini-dovdu:

[83] European Parliament resolution of 19 May 2021 on the 2019-2020 Commission Reports on Turkey https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0243_EN.html (հասանելի է 29.06.2021):

[84] European Parliament resolution of 19 May 2021 on the 2019-2020 Commission Reports on Turkey https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0243_EN.html (հասանելի է 29.06.2021):

որ իրավիճակը գնալով վատթարանում է[85]: Մասնավորապես, 2020 թ. ամփոփող զեկույցում նշվում է, որ 2017-2020 թթ. նախորդ տարիների համեմատ «ատելության խոսքի» կիրառման աճ է նկատվում[86]: «Ատելության խոսքի» թիրախները մնում են անփոփոխ: 2009-2019 թթ. «ատելության խոսք» ամենից շատ հնչել է հայերի և հրեաների մասին՝ 17%, երկրորդ տեղում սիրիացի փախստականներն են՝ 14%, ապա հույները՝ 8%[87]: Ընդ որում, կոնկրետ հակահայկական հռետորիկան գնալով ավելի լայն տարածում է ձեռք բերում: «Հրանտ Դինք» հիմնադրամի կատարած հետազոտության արդյունքներով 2017 թ. «ատելության խոսքի» թիրախների շարքում հայերը երրորդ տեղում էին՝ զիջելով հրեաներին և սիրիացի փախստականներին: 2018 թ. հայերը երկրորդ տեղում էին հրեաներից հետո[88], իսկ 2019 թ. զեկույցում արդեն հայերն առաջին տեղում էին[89]:

Թուրքական ԶԼՄ-ներում հնչող «ատելության խոսքը» հիմնականում պարունակում է ազգային-կրոնական պատկանելության վերաբերյալ վիրավորական պիտակավորումներ, սնում փոքրամասնությունների մասին հասարակության կարծրատիպային բացասական մտածելակերպը, փորձում այս կամ այն անձի կատարած գործողությունների համար մեղադրել ամբողջ համայնքին կամ նույնիսկ նշել, որ տվյալ բացասական գիծը գենե-

---

[85] Medya Ve Nefret Söylemi Kavramlar, Mecralar, Tartışmalar, ed. Mç Çınar, İstanbul, 2013, ss. 11-13, https://hrantdink.org/attachments/article/107/MedyaveNefretSoylemi.pdf (հասանելի է 5.12.2019):

[86] Medya ve Nefret Söylemi II:, s. 93.

[87] Նույն տեղում, էջ 112:

[88] Medyada Nefret Söylemi Ve Ayrımcı Söylem 2018 Raporu, ed. A. Yılmaz, İstanbul, 2019, s. 20 https://hrantdink.org/attachments/article/2003/Medyada-Nefret-Soylemi-ve-Ayrimci-Soylem-2018.pdf (հասանելի է 29.12.2020):

[89] Medyada Nefret Söylemi Ve Ayrımcı Söylem 2019 Raporu, ed. A. Yılmaz, İstanbul, 2020, s. 18 https://hrantdink.org/attachments/article/2665/Nefret-soylemi-ve-Ayr%C4%B1mc%C4%B1-Soylem-2019-Raporu.pdf (հասանելի է 29.12.2020):

տիկորեն բնորոշ է այս կամ այն էթնիկ խմբին: Ավելի փոքր թիվ են կազմում բացահայտ թշնամանքի կոչերը, բռնության հրահրումը: Այսինքն՝ թուրքական քարոզչամեքենան աշխատում է երկրում ոչ մուսուլմանների նկատմամբ բացասական մթնոլորտի պահպանման ուղղությամբ: Պետք է ընդգծել սակայն, որ եթե հույների պարագայում «վտանգավոր խոսքը» կազմել է ընդհանուր «ատելության խոսքի» 25%-ը, հրեաների դեպքում՝ 18%-ը, իսկ սիրիացի փախստականների դեպքում՝ 2%-ը, ապա հայերի դեպքում այս ցուցանիշը հասել է 30,51%-ի[90]: Այս ցուցանիշներից կարելի է եզրակացնել, որ «մենք-օտարներ» հակադրության համատեքստում թուրքական հասարակությունը որպես թշնամու առաջնային կերպար ընկալում է հայերին: Այս մոտեցումը նաև ցույց է տալիս, որ հայատյացությունը թուրքական իրականության անքաժանելի մասն է:

Լրագրող, քաղաքագիտության դոկտոր Յ. Փերին գրում է. «Ի վերջո ժամանակակից հասարակություններում մեդիան և հատկապես հեռուստատեսությունը վերածվում են արարողակարգային օրացույցի, որ կերտում է հասարակական հիշողությունը»[91]: «Եթե հասկանանք, թե ինչպես են թերթերը իմաստավորում մեր անցյալը և մեզ փոխանցում մեր քաղաքական ավանդույթները, մշակույթը, ինքնությունը, կբացահայտենք, թե ինչպես են լրագրողները օգտագործում անցյալը և վերաստեղծում այն: Այսինքն՝ հաճախ մամուլն է ընտրում, թե ինչն է պետք հիշել և ինչը մոռանալ՝ ձևավորելով կոլեկտիվ հիշողությունը»[92]:

---

[90] Medya ve Nefret Söylemi II:, s. 116.

[91] Firat D., Şannan B., Arslan Z., Basında 24 Nisan Ermeni Soykırımı'nı Anma Günü 1995-2015, İstanbul, 2016, s. 6 https://hrantdink.org/attachments/article/396/Basinda-24-Nisan-Ermeni-Soykirimini-Anma.pdf (հասանելի է 11.04.2019):

[92] Նույն տեղում, էջ 7:

*Նաիրա Պողոսյան*

# ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ (ԱՆ)ՏԵՍԱՆԵԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ. 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

*Երկու հիվանդ հասարակություն ենք: Թուրքեր և հայեր: Իրար հետ հարաբերություններում... Հայերը թուրքերի հետ կապված մեծ տրավմա են ապրում: Իսկ թուրքերը հայերի հետ կապված մեծ պարանոյա ունեն: Երկուսս էլ կլինիկական դեպք ենք: Իսկական կլինիկական դեպք*[93]*:*

*Հրանտ Դինք*

Պոլսահայ գրող, հրապարակախոս Լյուսան Բըչաքչըն այսպես է նկարագրում Ստամբուլի հայ համայնքը. «Թուրքիայում ապրող հայերն հայության չափաբաժնով են տարբերվում: Մեկը միայն անձնագրով է հայ, մյուսը՝ անցյալից մնացած հիշողություններով: Կան լեզուն իմացողներ, չիմացողներ և քիչ իմացողներ.... Սեղանի մի քանի խորտիկով հայեր.... Եկեղեցի գնացող, տոնից տոն գնացող, հայկական դպրոց գնացած կամ չգնացած, երեխային հայկական դպրոց ուղարկած կամ դրա կարիքը բնավ չտեսած.... կյանքն այլազգի մեկի հետ կապած կամ դրանից խուսափած հայեր.... Այս գործոններից մեկով կամ մի քանիսով ստեղծված միկրոտիեզերքում ապրող հայեր, մենք... Ապրածդ իրականությունը միշտ մի քիչ պակաս է, ամեն ինչ չի ներառում: Եթե հայությունը գլխումդ էլ, անունիցդ չի երևում, անվանդ մեջ արտացոլվում է, լեզուն չգիտես, լեզուն գիտես, տանդ մեջ չի երևում, սեղանիդ ապրում է, հարևանդ է ուրիշ, դու ուզում ես

[93] Kaplan H., Hrant Dink'in yerliliği, https://www.sabah.com.tr/yazarlar/hilalkaplan/-2016/01/19/hrant-dinkin-yerliligi (հասանելի է 17.12.2019):

ապրեցնել այն, երեխաղ է խուսափում… Հայի «քիչ» ու «շատ» լինելու մեջ ես տատանվում: Թուրքիայում չափից ավել թվացող հայությունդ, Հայաստանում պակաս է…»[94]:

Հայության չափաբաժնից անկախ, սակայն Հայոց Ցեղասպանությունից հետո գերազանցապես Ստամբուլում կենտրոնացած հայ համայնքը քաղաքական, տնտեսական, մշակութային սիստեմատիկ հալածանքների է ենթարկվել[95]: Պոլսահայ հասարակական գործիչ, լրագրող Երվանդ Օզուզունը գրում է. «Երբեմն ապրում եմ՝ զգալով՝ ինչ է նշանակում որպես հայ ապրելու կսկիծը: Երբ ամեն վատ պատահարի մեջ՝ հայի մատ, ամեն վատ մարդու անցյալում հայի արմատ են փնտրում, երբ կարդում կամ լսում եմ «…մի հարևան ունեինք…» նախադասությունով սկսվող նոստալգիկ պատմություն. երբ Անատոլիայում հայերին պատկանող հին գերեզմանոցները որպես եղբայրական գերեզման են ներկայացնում, կսկիծով հիշում եմ, որ հայ եմ: Երբ մտածում եմ, որ մեկի բարի կամքով կայացրած որոշումով կամ երկու նախադասություն պարունակող օրենքով լուծելի մեր խնդիրները տարիներ շարունակ չեն լուծվում, պետական պաշտոններ չենք ստանում… կսկիծով եմ հիշում հայ լինելս»[96]: Մեկ այլ պոլսահայ գործիչ, ատամնաբույժ Թաթյոս Բեբեքն էլ այսպես է բնութագրում հայ լինելու իր փորձառությունը. «…ԱՍԱԼԱ-ի ամեն գործողությունից (ասեմ, որ դեմ եմ ահաբեկչության և բռնության ցանկացած տեսակին, ով ուզում է անի) հետո որպես հայ խնդիրներ էինք ունենում: Մարդ ուզած չուզած լարվում է: Հետո իմացանք,

---

94 Bıçakçı L., Bir Ermeni'nin Sınavı Ne Zaman Biter, https://bianet.org/bianet/insan-haklari/186287-bir-ermeni-nin-sinavi-ne-zaman-biter (հասանելի է 15.02.2020):

95 Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո Ստամբուլի հայ համայնքի դրության մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության.(1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010:

96 Özuzun Y., Üzüntüyle, Keyifle Ermeni Olmak…, https://bianet.org/bianet/kultur/-1534-uzuntuyle-keyifle-ermeni-olmak (հասանելի է 15.02.2020):

որ ամենավատ ժամանակներում մեր ընկերներն են մեզ պաշտպանել: ...Հայրս մարդկանց հետ շատ լավ հարաբերություններ ուներ, շատ էին սիրում նրան: Քաղաքի բարձր խավի հետ էր մտերիմ: Քաղաքապետը, դատախազը, անվտանգության վարչության պետերը նրա ընկերներն էին: Ամեն անգամ հանգստյան օրերին բացօթյա խնջույք էինք կազմակերպում: Միշտ հայրս էր ծախս անում, հաշիվները փակում: Շատ մարդկանց փողով օգնում էր: Հետո հասկացա, որ դա մշտապես հնչող «մի լավ հայ հարևան ունեի...» պատմությունն էր: Հայերը ստիպված են շրջապատի հետ լեզու գտնել, լավ հարևան լինել՝ օտար չլինելու, չանտեսվելու համար այլ ճար չունեն: ... Օրինակ, իմ դասակում մի հայ զինվորի հրամանատարն ուզում էր ստիպել թլպատվել, հազիվ փրկեցին, արտասահմանում ապրած, հինգ լեզու իմացող մեկին սերժանտի կոչում չտվեցին: Երբ հրամանատարիս հայտնեցի, որ հայ եմ ասաց. «Մի անհանգստացիր, դու դեռ չեկած, թղթերդ եկել էին»: Հասկացա, որ իմ մասին ամեն ինչ գիտեն»[97]:

Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում խտրականությանը գումարվել են նաև օդում աներևույթ կախված մշտական վախը, սեփական ինքնության մաս կազմող պատմության, գրականության մասին լռելու, գոյատևելու համար ամեն ինչին հարմարվելու պարտադրանքը: Թաթյոս Բեբեքը ասում է. «Տարիներ շարունակ խոսելու հնարավորությունից զուրկ լինելով՝ այնքան ենք լցվել, որ հիմա նույնիսկ բացարձակապես անտեղի դեպքերում խոսելու կարիք ունենք: Անցած օրը, օրինակ, սափրվելու համար գնացի իմ կլինիկային մոտ մի վարսավիրանոց: Դուրս գալիս այցեքարտս տվեցի, ասացի գալուց կզանգեմ: Այցեքարտիս անունին նայեց ու հարցրեց, թե որտեղացի եմ: Հասկացա հարցը, ասացի Հաթայից եմ, հետո նաև ավելացրի «հայ եմ»: Վարսավիրն

[97] Vardar N., "Ermeniler İyi Komşu Olmak Zorundaydı", https://bianet.org/bianet/-toplum/163832-ermeniler-iyi-komsu-olmak-zorundaydi (հասանելի է 15.02.2020):

ասաց «Եղբա՛յր, մի՛ տխրիր»: Հետո ինքս ինձ մտածեցի. «Թաթո՛ս, ի՞նչ իմաստ կար այստեղ ասել, որ հայ ես»: Իմաստ չկար, տեղն էլ չէր, բայց արդեն ասելու կարիք ունես, չես կարողանում, բերանիցդ դուրս է թռչում, պատմելու անկարողությունից լցվում ես, չես կարողանում հանգստանալ, շատ յուրահատուկ զգացում է, ով չի ապրել, չի հասկանա: Տեսե՛ք, ոչ մի օրենքում ամրագրված չէ, որ հայերը չեն կարող մայոր դառնալ, բայց մենք չենք դառնում, գյուղապետ, դատախազ չենք կարող դառնալ»[98]:

Ապրիլի 24-ին թուրքական բանակում սպանված ազգությամբ հայ շարքային Սևակ Բալըքչըի մայրը՝ Անի Բալըքչըն պատմում է, որ որդու մահվան լուրը ստանալուց բացարձակապես չի կապել այն ապրիլի 24-ի կամ հայ լինելու հետ. «Մեկն ինձ ասաց, «Անի՛, այսօր ապրիլի 24-ն է, ոչ մի բան մտքովդ չի՞ անցնում: Չէր անցնում: Մեր ընտանիքում այս մասին չէր էլ խոսվել: Ես ինչ-որ կիսատ-պռատ բաներ էի լսել: …Գյավուր բառը չէի՞նք լսել: Լսել էինք այլ մարդկանցից, բայց աստիճանաբար ավելի շատացավ: Միայն վարժարանում մի ուսուցիչ ինձ ու ընկերուհուս չվերցրեց իր դասարան, ասաց. «Ես իմ դասարանում հայ չեմ ուզում»: Պետք է, որ շրջադարձային պահ լիներ, բայց ես առանձնապես չազդվեցի: Սևակի մահից հետո էր, որ իմ պատմությունը սովորեցի»[99]:

Պետության կողմից պարտադրված պատումների համատեքստում հայ համայնքը գնալով ավելի ինքնամփոփ և փակ է դառնում: Հրանտ Դինքը Պոլսի հայ համայնքի խնդիրների շարքում առանձնացնում էր դրա փակ, երկրի հասարակության համար մեծապես անծանոթ լինելը և իր հիմնած «Ակոս» թերթի

[98] Նույն տեղում:

[99] Karaca E., Ani Balıkçı: Sevag Öldürülmeden Önce Ermeni Soykırımını Bilmezdim https://bianet.org/bianet/azinliklar/207797-ani-balikci-sevag-oldurulmeden-once-ermeni-soykirimini-bilmezdim (հասանելի է 17.02.2020):

առաքելության մի մասն էլ համարում էր այդ խնդրի լուծումը. «Փակ համայնք ենք, մեծ հասարակությունը մեզ չի ճանաչում: Իսկ քանի որ չի ճանաչում, մեզ այլ մարդիկ են ներկայացնում: Գնալով ավելի մեծ թափ հավաքող սխալ ներկայացումը այնպիսի կետի է հասել, որ այս երկրում հայ բառը գրեթե հայհոյանք է դարձել: Մենք սրա դեմ ենք պայքարում, ասում ենք՝ մենք ներկայացվածի պես չենք: ԱՍԱԼԱ-ի խնդիր, քրդական խնդիր, հետո ղարաբաղյան հարց: Ամեն անգամ թերթերում «մարդասպան հայ», «ահաբեկիչ հայ» բառերն են: Պետք էր մեզ պաշտպանել: Ուզեցինք պատմել մեր խնդիրների մասին, մեր մասին: Թուրքական դասագրքերում Թուրքիայի տարբերությունները չեն երևում: Ասենք՝ «Կենսագիտություն», «Սոցիալական գիտություններ» դասագրքերում երբևէ տեսե՞լ եք, ենթադրենք, մեր հարևան, փողոցի անկյունի նպարավաճառ Մարկոսին կամ ընթերցանության գրքում «Ալի՛, գնդակը Այշեին նետիր» նախադասության փոխարեն հանդիպե՞լ եք «Ալի՛, գնդակը Հակոբին նետիր» արտահայտությունը: Թուրքիայի կրթական համակարգում մշակութային, կրոնական բազմազանությունն անտեսված է: Հայկական համայնքի մեծ մասին եթե հարցնեք իրենց ինքնության մասին, Թուրքիայից եմ չեն ասի, կասեն թուրք եմ, այսինքն՝ այդ աստիճան իրենց զգում են այս երկրի քաղաքացի, բայց դրան հակառակ մոռացվում են, անտեսվում»[100]:

Եթե մինչ 1990-ականներ Պոլսի հայ համայնքին թիրախավորելու հիմնական արտաքին գործոնը Հայոց ցեղասպանության ճանաչման համար սփյուռքում տարվող դիվանագիտական աշխատանքը, ԱՍԱԼԱ-ի գործողություններն էին, ապա ԽՍՀՄ անկումից և Հայաստանի ու Ադրբեջանի անկախացումից հետո հայ-

---

[100] Çınar M., 10 Yıldır Bekleyen Röportaj: "Hrant Ödevimdi Umudum Oldu", https://bianet.org/bianet/insan-haklari/161622-10-yildir-bekleyen-roportaj-hrant-odevimdi-umudum-oldu (հասանելի է 27.02.2020):

թուրքական հարաբերություններում առանցքային դեր ունի Արցախյան հիմնախնդիրը: Ընդ որում, թուրքական մեդիատիրույթում, ուր գրեթե բացառապես ադրբեջանական պաշտոնական աղբյուրներից ու լրատվամիջոցներից օգտվելով են թեման ներկայացնում, Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա եռանկյունում Հայաստանը պիտակվում է որպես «ագրեսոր», «ահաբեկչական պետություն», «զավթիչ», «ծովահեն պետություն»[101] և այլն: Հայ ժողովրդին էլ, դիտարկելով որպես գլոբալ համայնք և ներառելով նաև Պոլսի հայությանը, կոչում են «անցեղ», «անպատիվ», «անդաստիարակ», «դավադիր ավազակներ»: Ընդ որում, երբեմն հակահայկականությունը հայտնվում է անսպասելի և թեմայի հետ շատ կապ չունեցող հոդվածներում ևս: Օրինակ՝ Վանի հին քաղաքի վերակենդանացման ծրագրի մասին պատմող հոդվածի հեղինակը պարտադիր է համարում նշել, որ «Վանի հին քաղաքն ավիրվել է 1915 թ. հայկական հրոսակախմբերի կողմից», ապա նաև հավելել, որ մի ժամանակ Վանում խաղաղ ապրում էին մուսուլմաններն ու ոչ մուսուլմանները, սակայն հայ ավազակների ապստամբությունների պատճառով խաղաղության քաղաքից այն վերածվեց մեռյալ քաղաքի»[102]:

Շատ հաճախ Ղարաբաղյան հակամարտությունում Ադրբեջանի հակառակորդին բնորոշելիս կիրառվում են ոչ թե Արցախ կամ գոնե Հայաստանի Հանրապետություն բառերը, այլ «հայկական կողմ», «հայկական ուժեր», «հայեր» եզրույթները: Արդյունքում ստեղծվում է տպավորություն, թե հակամարտությունն ընթանում է Ադրբեջան պետության և ամբողջ աշխարհում ապրող

---

[101] Alioğlu A. M., Korsan devlet firarda, https://www.yenisafak.com/gundem/korsan-devlet-firarda-ermenistan-ve-azerbaycan-arasindaki-son-durum-3573765 (հասանելի է 05.10.2020):

[102] Ermeni çetelerinin yakıp yıktığı eski Van şehri yeninden inşa edilecek, https://www.sabah.com.tr/van/2021/08/04/ermeni-cetelerinin-yakip-yiktigi-eski-van-sehri-yeninden-insa-edilecek (հասանելի է 04.08.2021):

հայ ժողովրդի միջև[103]: Նման մոտեցման արդյունքում թուրքական քարոզչամեքենան կարողանում է արցախյան խնդիրը կապել Օսմանյան կայսրության գոյության վերջին տասնամյակներում ՀՅԴ գործունեության կամ ԱՍԱԼԱ-ի գործողությունների հետ[104] և դրանք ներկայացնել որպես «հայկական մեծ դավադրության» մի մաս: Ի դեպ, ուղղակի և անուղղակի այդ թեմային անդրադարձ կամ ակնարկ կարող ենք համարել Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մ. Չավուշօղլուի՝ 2021 թ. Անթալիայի դիվանագիտական փորումի շրջանակներում կազմակերպված երիտասարդական փորումի ընթացքում երիտասարդների հետ հանդիպման ընթացքում դիվանագետ դառնալու իր որոշման մասին պատմելը. «Երբ վարժարանի աշակերտ էի, հայկական ահաբեկչական կազմակերպությունները հարձակում էին մեր դիվանագետների վրա, զոհեր էինք ունենում: Ես էլ որոշեցի նրանց հակառակ դիվանագետ դառնալ և ընդունվեցի միջազգային հարաբերությունների ֆակուլտետ»[105]:

Նմանատիպ արտահայտությունները ամրապնդում են թուրքական հասարակության մեջ հակահայկական տրամադրությունները: «Sabah» թերթի հոդվածագիր Մ. Թեզելը 2010 թ. հրատարակված հոդվածում՝ «Հայերն արդեն քրիստոնյա են», բավական խոսուն օրինակ է բերում հասարակության մեջ այդ տրամադրությունների խորքային դրսևորումների մասին: Անդրա-

---

[103] Arslan Z., Gamaghelyan Ph., Geybullayeva A., Khandanyan S., Karabağ'da Dört Gün Savaşı Ve Azerbaycan, Ermenistan, Türkiye Basınında Ayrımcı Söylem Analizi, İstanbul, 2017, ss. 29-39, https://hrantdink.org/attachments/article/721/KARABA%C4%9E'DA%20D%C3%96RT%20G%C3%9CN%20SAVA%C5%9EI.pdf.

[104] Medyada Nefret Söylemi ve Ayrımcı Dil, Ocak-Nisan 2013 Raporu, İstanbul, 2013, s. 28 https://hrantdink.org/attachments/article/282/Ocak-Nisan-2013-NS-Rapor-Final.pdf

[105] Dışişleri Bakanı Mevlüt Çavuşoğlu: Ermeni terör örgütüne inat diplomat oldum, https://www.sabah.com.tr/gundem/2021/06/19/disisleri-bakani-mevlut-cavusoglu-ermeni-teror-orgutune-inat-diplomat?paging=5 (հասանելի է 20.06.2021):

դառնալով այն հարցին, որ Թուրքիայում հայերը արդեն կարող են անձնագրերում գրել քրիստոնյա, Թեզելը վերհիշում է, թե ինչպես էին փոքրամասնությունները թաղային ճնշումների հետևանքով տասնամյակներով թաքցնում իրենց ինքնությունը. «Երբ փոքր ժամանակ իմացա, որ Ադիլե Նաշիթը [Adile Naşit (1930-1987 թթ.)՝ Թուրքիայում հայտնի թատրոնի և կինոյի դերասանուհի- ծնթ. Հեղ.], ում միշտ սպասում էի էկրանին, հայ է, շատ զարմացա և տխրությամբ մորս հարցրի. «Ադիլե մորաքույրն էլ է չէ՞ դրախտ գնալու»[106]:

Ավանդաբար թուրքական հասարակական դիսկուրսում «ատելության խոսքի» տեսակ է նաև այս կամ այն անձին հայ կոչելը: Եվ ընդհանրապես հայ եզրույթը բավական է հասարակական լայն շրջանակներում անմիջապես բացասական ընկալում առաջացնելու համար: Այսպես, 2004 թ. հոկտեմբերի 9-ին Հրանտ Դինքը ողջունել էր ԵՄ գործընթացների համատեքստում Թուրքիայում իրականացվող բարեփոխումները՝ «Բարի ընթացք մաղթենք» հոդվածով: Ի պատասխան՝ «Yeni Çağ» թերթում հայտնվել էր «Հային նայիր» վերնագրով հոդված[107]: 2019 թ. ապրիլի 24-ին Թուրքիայի խորհրդարանում «Ժողովուրդների դեմոկրատիա կուսակցության» պատգամավորների ելույթները գնահատելիս «Yeni Asır» թերթը գրել էր. «Հայի պես խոսեցին»[108]: Իսկ Անկարայի քաղաքապետ Իբրահիմ Մելիհ Գյոքչեքը հայտարարել էր. «ԺԴԿ ընտրացուցակում 100 հայ թեկնածու կա: Եթե մտնեն

---

106 Tezel M., Ermeniler artık Hıristiyan!, https://www.sabah.com.tr/yazarlar/gunaydin/-sb-mevlut_tezel/2010/09/27/ermeniler_artik_hiristiyan (հասանելի է 23.08.2020):

107 Nefret Suçları ve Nefret Söylemi/Hate Crimes and Hate Speech, Ed. A. Çavdar, A. B. Yıldırım, İstanbul, 2010, s. 93, https://hrantdink.org/attachments/article/73/NefretSoylemiveNefretSuclari.pdf.

108 Medyada Nefret Söylemi Ve Ayrımcı Söylem 2019 Raporu, ed. A. Yılmaz, İstanbul, 2020, s. 51, https://hrantdink.org/attachments/article/2665/Nefret-soylemi-ve-Ayr%C4%B1mc%C4%B1-Soylem-2019-Raporu.pdf (հասանելի է 12.02.2021):

խորհրդարան, առաջին հերթին գնալու են Եվրոպայի խորհրդարան՝ Հայաստանի համար ազատություն խնդրելու։ Դա է նրանց մոտակա չորս տարվա պլանը… [Թուրքիայի] Հարավ-արևելքում բոլոր քրդերին ստիպելու են փախչել ճնշումներ գործադրելով, սպանելով, ծեծելով, սպառնալիքներով, այսպիսով՝ արևելքն ու հարավ-արևելքը դատարկելու են և ապահովեն դրա հանձնումը հայերին։ Սա է նրանց պլանը…»[109]։ Նույն Գյոքչեքը ԺԴԿ Ստամբուլի նախընտրական միտինգին մասնակցող հայերի մասին հայտարարել էր. «Եվրոպայից և Հայաստանից 150-200 հայ է եկել Ստամբուլ միտինգի համար։ Աստված տա, սրանց թիվը կպարզվի, և անուն առ անուն կներկայացվի մեր ժողովրդին։ Սրանք այս միտինգին ի՞նչ գործ ունեն։ Եկել են, քանի որ այս միտինգը համարում են Հայաստանի փրկության միտինգ։ Մեր եթերին հետևող քու՛րդ եղբայրներ, այդ միտինգին մի՛ գնացեք, դա հայերի, ոչ թե քրդերի միտինգն է»[110]։ Իսկ Ադանայի քաղաքապետ «Ազգային շարժում կուսակցության» անդամ Հուսեին Սյոզլյուն ԹԱՄԺ ընտրված հայ պատգամավորների մասին խոսելիս հայտարարել էր. «Մանուկյանի[111] զարմիկները երջանիկ են։ Նրանցից երեքը մեջլիս մտան։ ԱԶԿ, ՀԺԿ և ԺԴԿ-ից։ Ինչքան հպարտանան, քիչ է»[112]։

Թուրքական հասարակության որոշակի շրջանակներում հայ լինելու հարաբերական դրական ընկալման յուրահատուկ փուլ էր Հրանտ Դինքի սպանությանից հետո հայտնված «Բոլորս

---

[109] Hayko Bağdat Melih Gökçek'e Karşı Dava Açtı, https://bianet.org/bianet/toplum/-166033-hayko-bagdat-melih-gokcek-e-karsi-dava-acti (հասանելի է 12.10.2019)։
[110] Նույն տեղում։
[111] Հ. Սյոզլուն նկատի ունի Թուրքիայում հասարակաց տների հայտնի տիրուհի Մաթիլդ Մանուկյանին և այս արտահայտությունն օգտագործելով՝ փորձում է վիրավորել հայերին և անուղղակի նրանց կապել մարմնավաճառության հետ։
[112] MHP'li başkan ''Manukyan'ın yeğenleri'' dedi ortalık karıştı!, https://www.haber3.com/guncel/politika/mhp039li-baskan-039039manukyan039in-yegenleri039039-haberi-3433762 (հասանելի է 12.02.2021)։

Հրանտն ենք: Բոլորս հայ ենք» կարգախոսի հրապարակայնացմանը հաջորդած ամիսները: Ընդ որում, նույնիսկ այդ համատեքստում կարգախոսը դարձավ թերթերի քննարկման և հրամերժ հայտարարությունների առիթ: «Zaman» թերթը հրապարակեց «Բոլորս օսմանցի ենք», «Hürriyet» «Փառք Աստծո Մուսուլման եմ» և «Հրանտին ճիշտ կլիներ «թուրք էր» ասել» վերնագրերով հոդվածներ[113]: Ի դեպ, այս թեման տարիներ անց էլ արդիական է մնում և կիրառվում հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող տարբեր համատեքստերում: Այսպես, օրինակ, 2012 թ. փետրվարի 29-ին «Yeni mesaj» թերթում Խոջալուի դեպքերի մասին պատմող հոդվածում հեղինակ Աքըն Այդընը գրել էր. «Մենք թուրք ենք, Խոջալուում ապրողների պես: Դինքը հայ էր, իսկ դո՞ւ»[114]: Այդ կարգախոսին ի պատասխան՝ թուրք ազգայնամոլները մի որոշ ժամանակահատված ակտիվորեն կիրառեցին նաև «Բոլորդ հայ եք: Բոլորդ բիճ եք» արտահայտությունը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը թուրքական մամուլում Հայաստանի և հայերի նկատմամբ «ատելության խոսքի» ծավալման նոր առիթ դարձավ: Պետական ամենաբարձր մակարդակով Ադրբեջանին տրամադրված քաղաքական, դիվանագիտական, ռազմական աջակցությունը էլ ավելի թեժացրեց թուրքական հասարակության հակահայկական տրամադրվածությունը: Սրա ցուցիչը դարձան Ստամբուլի հայաշատ Քումքափը թաղամասում թուրքական և ադրբեջանական դրոշներով մեքենաների շարասյուները, տարբեր ինտերնետ հարթակներում հակահայկական կոչերը, որոնք

---

113 Nefret Söylemi ve Nefret Suçları, ed. Ayşe Çavdar, Aylin B. Yıldırım, s. 108, https://hrantdink.org/attachments/article/73/NefretSoylemiveNefretSuclari.Pdf (հասանելի է 12.03.2021):

114 Medyada Nefret Söylemini İzleme Raporu: Ocak-Nisan 2012, s 18, https://hrantdink.org/attachments/article/279/rapor_Ocak-Nisan_2012.PDF (հասանելի է 28.09.2020):

թուրքաբնակ հայերի համար լրացուցիչ լարվածության պատճառ դարձան: Մեկնաբանելով իրավիճակը՝ «Արաս» հրատարակչատան խմբագիրներից Ռոբեր Քոփթաշը նշել էր, որ դա առավելապես Քումքափըում ապրող հայաստանցի միգրանտների դեմ ուղղված քայլ էր: Իսկ ԹԱՄԺ հայազգի պատգամավոր Գարո Փայլանը, քննադատելով իր խոսքերով այս «պրովոկացիան», հայտարարեց. «Ատելության խոսքը հանգեցնում է ատելության հողի վրա հանցագործությունների: Վե՛րջ տվեք ատելության քաղաքականությանը»[115]:

Հետաքրքրական է սակայն, որ պետական քարոզչամեքենան չհնչեցրեց հայ համայնքի կամ Թուրքիայում ապօրինի աշխատող Հայաստանի քաղաքացիների հասցեին երկրից վռնդելու ավանդական սպառնալիքները, որոնց ականատես ենք լինում տարբեր պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքերում[116]: Ի հա-

---

[115] Ermeni Patrikliği çevresinde Azerbaycan bayraklı konvoy, https://bianet.org/bianet/-azinliklar/231711-ermeni-patrikligi-cevresinde-azerbaycan-bayrakli-konvoy (հասանելի է 28.09.2020):

[116] Օրինակ՝ 2010 թ. մարտին ԱՄՆ-ում և Շվեդիայում Հայոց Ցեղասպանության ճանաչման օրինագծերի ընդունումից հետո Լոնդոնում BBC Türkçe-ին տված հարցազրույցում Ռ. Թ. Էրդողանը հայտարարել էր. «Իմ երկրում 170 000 հայ կա, դրանցից 70 000-ը իմ քաղաքացիներն են, բայց 100 000-ի ներկայությունը մեր երկրում այս պահին ուղղակի տանում ենք: Էհ, ինչ արած, վաղը, եթե պետք լինի, այդ 100 000-ին կասեմ «Վերջ, ձեր երկիր գնացեք», կանեմ: Ինչո՞ւ: Որովհետև նրանք քաղաքացի չեն, պարտավոր չեմ նրանց իմ երկրում պահել: Այսինքն՝ մեր անկեղծ մոտեցումների վրա սրանք իրենց վերաբերմունքով բացասականորեն են ազդում, բայց այդքանը չեն հասկանում»: 31 STK'den Başbakan'a Tepki: Nefret Suçu İşliyorsun!, https://bianet.org/bianet/azinliklar/120761-31-stk-den-basbakan-a-tepki-nefret-sucu-isliyorsun (հասանելի է 12.10.2019): 2015 թ. Եվրոպական Խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին որոշման ընդունումից հետո Ղազախստանում տեղի ունեցող Ղազախստան-Թուրքիա բիզնես ֆորումում իր ելույթի ընթացքում Էրդողանը հայտարարել էր. «Մեր երկրում կա մոտ 40 000 քաղաքացի հայ, 40 000 էլ Հայաստանից փախչելով մեր երկրում հյուրընկալված հայ: Հայաստանին խաղաղության ձեռք մեկնեցի ապրիլի 23, բայց մեր ձեռքը ցավոք օդում մնաց: Erdoğan: AP Kararı Bizim için Yok Hükmündedir,

վելումն սրան, Ստամբուլի հայ համայնքի՝ իշխանությունների նկատմամբ լոյալ տարբեր ներկայացուցիչների և առաջին հերթին Պոլսո Հայոց Պատրիարք Սահակ Մաշալյանի ելույթներում կարմիր թելի պես անցնում էր արցախյան հակամարտության կարգավորման գործում Թուրքիայի միջնորդական դերի կարևորությունը: Մասնավորապես՝ սեպտեմբերի 28-ին Պոլսո Հայոց պատրիարքարանի տարածած հայտարարության մեջ ասվում էր. «Հիրավի մտահոգիչ է, որ Հայաստանն ու Ադրբեջանը չեն կարողանում բանակցային ճանապարհով լուծել երեսուն տարի շարունակվող Ղարաբաղյան խնդիրը: Զինված հակամարտությունները և պատերազմները թե՛ կողմերի, թե՛ ողջ մարդկության համար մեծ ավերածություններ ու կորուստ են նշանակում: Աղոթում ենք բոլոր կրոնների ներկայացուցիչների համար կարևորագույն արժեք հանդիսացող խաղաղության շուտափույթ վերականգնման, կրակի դադարեցման և արդարացի, տևական համաձայնության հաստատման համար: Խաղաղության ապահովման գործում անշուշտ շատ կարևոր է Թուրքիայի դերը»[117]: Նույն ծիրում էր նաև պատերազմի մասին Թուրքիայի միակ հայկական գյուղի՝ Վաքըֆլըի գյուղապետ Պերճ Քարթունի գնահատականը. «Պատերազմում երիտասարդներն են ափսոս: Ամեն մեկը մի ջահել երեխա է: Այս իրավիճակն իհարկե մաֆիային, զենք վա-

https://bianet.org/bianet/siyaset/163858-erdogan-ap-karari-bizim-icin-yok-hukmundedir (հասանելի է 12.10.2019): 2016 թվականին Գերմանիայի Բունդեսթագում Հայոց ցեղասպանությունը ճանաչող նախագծի ընդունումից հետո Ռ. Թ. Էրդողանը կրկին անդրադարձել էր այս հարցին. «Այժմ Թուրքիայում մոտ, կոպիտ հաշվարկով 100 000 հայ կա: Սրանց կեսը քաղաքացի են, մյուսները քաղաքացի չեն: Մենք նրանց կարող էինք շատ այլ կերպ վերաբերվել: Եթե հայերի նկատմամբ թշնամաբար տրամադրված երկիր լինեինք, այդ բոլոր եկածներին Հայաստան կուղարկեինք»: Erdoğan: Kanının Laboratuvar Testinden Geçmesi Lazım, https://bianet.org/bianet/insan-haklari/175535-erdogan-kaninin-laboratuvar-testinden-gecmesi-lazim (հասանելի է 12.10.2019):

[117] Karabağ Sorunu Hakkında Patrikliğimiz Açıklamasıdır, http://www.turkiyeermenileripatrikligi.org/site/karabag-sorunu-hakkinda-patrikligimiz-aciklamasidir/ (հասանելի է 28.09.2020):

ճառողներին է ձեռնտու: Ամենաշատ վնասն էլ կրում են զինվորները, երիտասարդներն ու ժողովուրդը: Մեր ցանկությունն է, որ պատերազմը հնարավորինս շուտ ավարտվի, և մեծ տերություններն ու առաջին հերթին Թուրքիան, իրենց ազդեցությունն օգտագործելով, պատերազմին վերջ տան, Ադրբեջանի, Հայաստանի մարդիկ հանգիստ շունչ քաշեն»[118]:

Սրան զուգահեռ մամուլում հայերի թիրախավորումը պատերազմի օրերին նոր թափ ստացավ: Ընդ որում, հակահայկականության դրսևորումներ կարելի էր գտնել խիստ տարբեր բովանդակության լուրերում: Մի կողմից Ադրբեջանի ԱԹՍ-ների հաջողությունների համատեքստում, օրինակ, հայտարարվեց նոր անօդաչու թռչող սարքի արտադրության մեկնարկի մասին, որի թուրքերեն «İti Kovan» բառացի «շանը քշող, շուն լարող» անունը հայերին «շների պես քշելու» Ալիևի սպառնալիքի հետ խիստ համահունչ էր[119]: Մյուս կողմից էլ հայրենասիրության քարոզչության համատեքստում թուրքական մամուլում տարածվեց Արդահանում բնակվող 81-ամյա Իսմայիլ Սուրալի զինակոչվելու դիմումը, ով ցանկանություն էր հայտնել զնալ բանակ, իր պապ Իսմայիլին և ընտանիքի 19 անդամներին սպանած հայ հնչակյաններից վրեժ լուծելու համար[120]: Ստամբուլում հրատարակվող «Ակոս» շաբաթաթերթի հայերեն էջերի խմբագիր Բագրատ Էստուկյանը այս առումով նկատում է. «Թուրքիայի մեջ խնդիրը

[118] Türkiye’nin tek Ermeni köyünden Dağlık Karabağ çağrısı: Türkiye ağırlığını koyup bu savaşı bitirebilir, https://tr.sputniknews.com/turkiye/202010091042997164-turkiyenin-tek-ermeni-koyunden-daglik-karabag-cagrisi-turkiye-savasi-durdursun/ (հասանելի է 09.10.2020):

[119] Azerbaycan lisanslı ürettiği kamikaze İHA'ya 'İti Kovan' ismini verdi, https://www.yenisafak.com/dunya/azerbaycan-lisansli-urettigi-kamikaze-ihaya-iti-kovan-ismini-verdi-3571904 (հասանելի է 22.10.2020):

[120] https://www.yenisafak.com/foto-galeri/gundem/beni-de-askere-alin-ermeni-hincaklarin-ailesini-katlettigi-81-yasindaki-ismail-amca-azerbaycana-seslendi-2042517 (հասանելի է 28.05.2021):

ներկայացվեց ոչ միայն ղարաբաղյան հակամարտություն, այլև հայ-թուրքական հակամարտություն, հայ-ադրբեջանական հակամարտություն»[121]։

Ուշագրավ է, որ պատերազմի ընթացքում և դրանից հետո էլ թուրք լրագրողները փորձում էին աշխարհի բոլոր լրատվամիջոցներին մեղադրել կողմնապահության մեջ։ 2020 թ. դեկտեմբերին հրատարակված իր հոդվածում Բաքվում Թուրքիայի դեսպանատան մամլո քարտուղար Հուսեին Ալթընալանը գրում է, որ 44-օրյա պատերազմի ընթացքում արևմտյան ԶԼՄ-ներն ու ռուսական մեդիան հիմնականում «երեք կապիկ» էին խաղում և աջակցում հայկական կողմին։ Հ. Ալթընալանի պնդմամբ միայն «քաջասիրտ» թուրք լրագրողների շնորհիվ աշխարհին իմացավ Հայաստանի ռազմական հանցագործությունների մասին[122]։

Թուրքական հասարակական տիրույթում հակահայկականության տարածման գործում ոչ միայն 44-օրյա պատերազմի ընթացքում, այլ ընդհանրապես կարևոր դերակատարում ունեն պետական հովանու ներքո գործող մի շարք թուրք-ադրբեջանական բարեկամական կազմակերպություններ, որոնք սեփական կայքերի, ինչպես նաև այլ լրատվամիջոցների էլեկտրոնային տարբերակների միջոցով բավական ակտիվ քարոզչական աշխատանք են վարում։

Պատերազմական գործողությունների հետագա էսկալացիայի և Թուրքիայի հասարակական դիսկուրսում հակահայկականության բացահայտ քարոզչության համատեքստում 2020 թ. հոկտեմբերի 13-ին ԹԱՄԺ Մարդու իրավունքների հանձնաժողովի հովանու ներքո Բուրսայից ԱԶԿ պատգամավոր Հաքան Չա-

---

[121] Թուրքիայում ուժեղացրել են հայկական հաստատությունների հսկողությունը, https://www.azatutyun.am/a/30898529.html (հասանելի է 27.12.2020)։

[122] Batı Medyasının Yaklaşımı ve Azerbaycan’ın Sevinç Gözyaşları, https://kriterdergi.com/dosya-azerbaycanin-ermenistan-zaferi/bati-medyasinin-yaklasimi-ve-azerbaycanin-sevinc-gozyaslari (հասանելի է 11.01.2021)։

վուշօղլուի ղեկավարությամբ ստեղծվեց հատուկ ենթահանձնաժողով, որը պետք է այցելեր Թուրքիայում հայկական կառույցներ՝ պատրիարքարան, Յեդիքուլեի Սուրբ Փրկիչ հիվանդանոց և այլն, և ուսումնասիրեր Արցախյան պատերազմի ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների ոտնահարումները և Թուրքիայի հայ քաղաքացիների վիճակը: Հ. Չավուշօղլուն հայտարարեց. «Որպես [Մարդու իրավունքների պաշտպանության] հանձնաժողով մեր պարտքն է ստիպել միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին ու կառույցներին գործել անամոթաբար իրականացվող պատերազմական հանցագործությունների դեմ, հրապարակայնացնել Լեռնային Ղարաբաղի և շրջակա յոթ շրջանների օկուպացիան և ապահովել հազարավոր բռնագաղթյալների վերադարձի իրավունքի իրականացումը: Թուրքիան թույլ չի տա, որ վերոնշյալ հակամարտությունն ազդի մեր երկրում բնակվող հազարավոր հայերի, այդ թվում ապօրինի աշխատողների, վիճակի վրա: Կասկածից դուրս է, որ մեր հայ քաղաքացիների՝ Լոզանի պայմանագրով սահմանված իրավունքները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Սրա հետ մեկտեղ մեր Կոմիտեն պարտավոր է ուսումնասիրել այս հակամարտության ազդեցությունը և այդ տեսանկյունից Թուրքիայում բնակվող հայ քաղաքացիների դրությունը»[123]: Հոկտեմբերի 26-ին ԹԱՄԺ Մարդու իրավունքների հանձնաժողովի հովանու ներքո ստեղծված հատուկ ենթահանձնաժողովի անդամներն այցելեցին պատրիարքարան: Այցի արդյունքներն ամփոփող հոդվածում ասվում էր, որ պատրիարք Մաշալյանն ընդգծել է, որ որոշ լրատվամիջոցներում և մեդիատիրույթում տեղ գտնող արտահայտությունները նպաստում են Թուրքիայի հայկական համայնքի

[123] TBMM İnsan Hakları Alt Komisyonu'ndan Ermeni kurumlarına ziyaret, https://www.indyturk.com/node/263061/haber/tbmm-i%CC%87nsan-haklar%C4%B1-alt-komisyonundan-ermeni-kurumlar%C4%B1na-ziyaret (հասանելի է 13.10.2020):

նկատմամբ թշնամանքի և ատելության զգացումների աճին, ապա նաև իր գոհունակությունը հայտնել նախագահ Էրդողանի թուրքաբնակ հայերին վերաբերող հռետորաբանությունից[124]: Ենթահանձնաժողովն իր աշխատանքներն ամփոփեց 2021 թ. ապրիլի 15-ին, երբ Հ. Չավուշօղլուն ներկայացրեց «Ադրբեջանի վրա Հայաստանի հարձակումով սկսված լարվածության և բախման ընթացքում իրավունքների խախտումների և Թուրքիայի հայ քաղաքացիների վիճակի մասին» զեկույցը: Զեկույցում մանրամասնորեն ներկայացվում էին պատերազմի ընթացքում Հայաստանի կողմից իրականացված «ռազմական հանցագործությունները», «քաղաքացիական անձանց սպանությունները», «բնակելի տարածքների ոչնչացումը», որոնք ըստ ենթահանձնաժողովի պետք է պատժվեն Միջազգային քրեական դատարանի կողմից: Ինչ վերաբերում է 44-օրյա պատերազմի ազդեցությանը թուրքաբնակ հայերի դրության վրա, ապա Հ. Չավուշօղլուն նշեց, որ համայնքը հոգեբանորեն փոքր-ինչ ազդվել է «Հայաստանի կողմից Ադրբեջանի վրա իրականացրած հարձակման» պատճառով սկիզբ առած լարված մթնոլորտից: Հ. Չավուշօղլուն շեշտել է, որ պատերազմի ընթացքում հայ համայնքի նկատմամբ ֆիզիկական հարձակում չի եղել, և համայնքի առաջնորդները գոհունակություն են հայտնել հայ համայնքին պաշտպանելու համար կառավարության ձեռնարկած միջոցներից: Այնուամենայնիվ Հ. Չավուշօղլուն ընդգծել է, որ ԶԼՄ-ներում հայկական համայնքի վերաբերյալ բռնության կոչերի և «ատելության խոսքի» կիրառումը անհանգստության տեղիք է տալիս[125]: Այս զեկույցի շրջանակներում Հ. Չավու-

[124] TBMM İnsan Hakları Alt Komisyonu Ermeni kurumlarını ziyaret etti, http://www.agos.com.tr/tr/yazi/24774/tbmm-insan-haklari-alt-komisyonu-ermeni-kurumlarini-ziyaret-ediyor (հասանելի է 26.10.2020):

[125] TBMM İnsan Haklarını İnceleme Komisyonu, Ermenistan'ın Karabağ Savaşı'ndaki hak ihlalleri raporunu kabul etti, https://www.aa.com.tr/tr/politika/tbmm-insan-

շօղլուն նշել է նաև, որ Թուրքիայի քաղաքացի հայերի շրջանում ընդունված ընկալման համաձայն հանրային ծառայություններից օգտվելիս իրենք խտրական վերաբերմունքի են արժանանում, սակայն ենթահանձնաժողովի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հայերի նկատմամբ որևէ խտրականություն չի ցուցաբերվում[126]:

Հայաստանի հասցեին զրպարտանք և թիրախավորում պարունակող, հակամարտության կողմերից մեկի տվյալների հիման վրա արված դատողություններով սահմանափակված և մյուս կողմի կարծիքը որևէ կերպ չարտացոլող այս զեկույցի հրապարակումը ևս մեկ անգամ ի ցույց դրեց հակահայկական քարոզչության պետական մակարդակով իրականացվելու փաստը: Իսկ զեկույցի՝ հայ համայնքին վերաբերող մասը հետճշմարտային խոսույթի դասական օրինակ կարելի է համարել: Զեկույցի բովանդակությունից պարզ դարձավ, որ ի սկզբանե ենթահանձնաժողովի ստեղծումն քննադատող Նուրհան Չեթինքայայի, Օհաննես Քըլըչդաղի նման պոլսահայ մտավորականների մտավախությունները տեղին էին: Անկախ լրագրողների կողմից պոլսահայերի շրջանում իրականացված հարցումները ցույց տվեցին, որ իրականում ստեղծված իրավիճակը համայնքի համար առավել քան լարված է եղել: Հրանտ Դինքի դուստրը՝ Դելալ Դինքը, այսպես է բնորոշել դրությունը Bianet կայքում տպագրված իր հոդվածում. «Իմ շրջապատի հայերը տասը օր է՝ «հայերն այսպիսին են, հայերն այնպիսին են», մի տոննա արտահայտություն են լսել, ընկճվել: Իրականում խեղդվում ենք: Կամաց-կամաց, օրըստօրե, ժամ առ ժամ խեղդվում ենք: Ձեր ատելությունից խեղդվում

---

haklarini-inceleme-komisyonu-ermenistanin-karabag-savasindaki-hak-ihlalleri-raporunu-kabul-etti/2209920 (հասանելի է 15.04.2021):

ենք»[127]: Իսկ պոլսահայ ատամնաբույժ և հասարակական գործիչ Թաթյոս Բեբեքը, Independent Türkçe-ի հարցերին պատասխանելով, նշել է. «Բախումները հայկական համայնքի վրա ճնշում են ստեղծել, շատերն ուզում են գետինը բացվի, տակն անցնեն: Պատրիարքարանի շրջակայքում և հայաշատ թաղամասերում մեքենաների շարասյուներն [խոսքը 44-օրյա պատերազմի առաջին օրվանից սկսած Ստամբուլի Քումքափը, Քուրթուլուշ հայաշատ թաղամասերում ադրբեջանական և թուրքական դրոշներով ծածկված մեքենաներով երթերի մասին է, որ ուղեկցվում էին շչակների ազդանշաններով և հակահայկական վանկարկումներով] էլ դրան ավելի են նպաստում: Երկրորդ հարցը տեղի ունեցողի նկատմամբ մեր մոտեցումն է: Բախումները սկսվելուն պես ինչ-որ անդրադարձի, հակամարտողներից մեկի կողմից լինելու, մի կողմին աջակցելու, մյուսին հաղթելու խոսույթներն են գերակա: Մինչդեռ սա տաք կոնֆլիկտ է, որում մահանում են թե՛ ադրբեջանցի, թե՛ հայ երիտասարդներ»[128]: Համայնքի մեկ այլ ներկայացուցիչ Արի Գևորգ Դեմիրջիօղլուն նշում է. «Աշխարհի ցանկացած կետում հայերի հետ կապված ցանկացած իրավիճակում անընդհատ սպառնալիքի տակ ապրելն իսկապես հոգնեցուցիչ է: Սակայն չկարծեք խնդրեմ, թե վախենում ենք մեր կյանքի կամ ունեցվածքի համար: Իրականում դա խոր տխրությունն ու սրտի կսկիծն է, որ զգում ենք, երբ 3000 տարի այստեղ ապրող հանրույթին անընդհատ վերաբերվում են այնպես, կարծես նա հայրենիք չունի, սպառնում են արմատները կտրել: Լուսահոգի պատրիարք Մեսրոպ Երկրորդն այս թեմայով իմ զգացմունքները շատ լավ

[127] Gün gün, saat saat boğuluyoruz, https://bianet.org/bianet/toplum/232630-gun-gun-saat-saat-boguluyoruz (հասանելի է 14.10.2020):

[128] Dağlık Karabağ'daki savaş, Türkiye Ermenilerinin "güvercin tedirginliğini" artırdı, https://www.indyturk.com/node/253236/haber/da%C4%9Fl%C4%B1k-karaba%C4%9Fdaki-sava%C5%9F-t%C3%BCrkiye-ermenilerinin-g%C3%BCvercin-tedirginli%C4%9Fini-art%C4%B1rd%C4%B1 (հասանելի է 04.10.2020):

նկարագրող մի գեղեցիկ արտահայտություն ուներ: Մենք մեր ապրած երկրին մայրենիք, Հայաստանին հայրենիք ենք ասում: Եվ միշտ հոր ու մոր վեճի մեջտեղում մնացած երեխաների պես ենք»[129]: 2021 թ. մայիսին, վերլուծելով պատերազմից հետո անցած ամիսներին Թուրքիայում իրավիճակային փոփոխությունները, պոլսահայ լրագրող Հ. Բաղդաթը այսպես մեկնաբանեց դրանք. «Թուրքիայի պես երկրում հայ լինելով քաղաքականությամբ, լրագրողությամբ զբաղվելը, ժողովրդավարության պայքարը առանց այն էլ դանակի շեղբով քայլել է նշանակում, այժմ սրի ծայրով ենք քայլում: Մեզ համար բավական հոգնեցուցիչ է, բայց, ինչ արած, պետք է շարունակենք պայքարը, կռիվը»[130]:

Պատերազմի ամենաթեժ օրերի հետ համընկած հայտնի պոլսահայ լրագրող, հասարակական-քաղաքական գործիչ, պատգամավոր Մարգար Եսայանի[131] մահը հայ-ադրբեջանական

---

[129] Նույն տեղում:

[130] Hayko Bağdat Ermenihaber.am'e konuştu: (II Bölüm) Karabağhttps://www.ermenihaber.am/tr/news/2021/05/11/Hayko-Ba%C4%9Fdat-Karaba%C4%9F/207682 (հասանելի է 15.05.2021):

[131] Մարգար Եսայանը ծնվել է 1969 թ. փետրվարի 11-ին Ստամբուլում, սովորել է Բիլգի համալսարանում: 1997-2008 թթ. հոդվածներ է գրել «Ակոս» շաբաթաթերթի համար, 2008 թ.-ից թղթակցել է «Taraf», «Yeni Şafak» թերթերին: 2018 թ. հունիսի 24-ին Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից Ստամբուլի 2-րդ ընտրատարածքում պատգամավորի թեկնածու առաջադրված Մարգար Եսայանը դարձել է ԹԱՄԺ պատգամավոր: Մ. Եսայանը հայտնի է իր հակասական, ոչ հայանպաստ դիրքորոշումներով: Նա մշտապես քննադատում էր այս կամ այն երկրի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի ընդունումը, Հայ դատի գրասենյակների գործողությունները, ինչպես նաև խիստ քննադատության ենթարկում Թուրքիայում ընդդիմադիր հայ գործիչներին, որոնք էլ իրենց հերթին նրան էին թիրախավորում: Այսպես՝ 2014 թ. սեպտեմբերին Մ. Եսայանը մեղադրել էր «Ակոս» շաբաթաթերթին իշխանությունների նկատմամբ բավարար լոյալություն չցուցաբերելու համար, ինչին ի պատասխան թերթի գլխավոր խմբագիր Ռ. Քոփթաշը հանդես էր եկել բավական կոպիտ պատասխանով, Մ. Եսայանին փանջունիական տերմինաբանությամբ կոչել «պնակալեզ» և հավելել, որ «պնակալեզներին նույնիսկ իրենց տերերը լուրջ չեն ընդունում: Էհ, մենք էլ չենք ընդունում» https://odatv4.com/guncel/agostan-markar-esayana-agir-

հակամարտության մեջ Թուրքիայի դերի և Ստամբուլի հայ համայնքի դիրքորոշման խնդրի քննարկման նոր առիթ դարձավ: Թվիթերի օգտատերերի շարքում տարածվեց այն միտքը, որ «Մարգարի թաղման արարողությունը կարող է հայկական սփյուռքի դեմ ուղղված ճիշտ մեսիջ դառնալ»: Պոլսի Սբ. Աստվածածին եկեղեցում Մ. Եսայանի թաղմանը ներկա էր նախագահ Ռ. Թ. Էրդողանը և մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ: Իր մահախոսականում Ռ. Թ. Էրդողանն ընդգծեց. «Մարգար ասելիս բոլորի պես մենք էլ նախևառաջ երկրի, ժողովրդի նկատմամբ սերը, ջերմությունն ենք հիշում: Այս հրաշալի մարդու ողջ կյանքը անցավ Թուրքիայում ժողովրդավարության, իրավունքների և ազատությունների զարգացման, երկրի բարգավաճման, ծաղկման, ուժեղացման համար պայքարելով»[132]: Նշելով, որ Մարգար Եսայանի մահը սրտերում և մտքերում դատարկություն է առաջացրել՝ Էրդողանը հավելել է. «Հավատում եմ, որ մեր հայկական համայնքը կկարողանա գտնել երկրի և ժողովրդի հանդեպ սիրով դաստիարակված բազմաթիվ երիտասարդներ, ովքեր սիրելի Մարգարի տեղը կլրացնեն: Ինչպես մինչ օրս, այնպես էլ սրանից հետո Թուրքիան հարստացնող կարևոր գույն հանդիսացող հայ-

yanit-2509141200-65036 հասանելի է 25.05.2021): 2019 թ. օգոստոսին քրդական Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության պատգամավորների հացեին Մ. Եսայանի հնչեցրած արտաքին ուժերի հետ համագործակցության մեղադրանքին ի պատասխան Կ. Փայլանն իր թվիթերյան միկրոբլոգում գրել էր, որ «1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալված հայերի ցուցակները կազմելիս Թալեաթին օգնող հայեր կային: Ցավոք, այսօր էլ կան» https://www.aravot.am/2019/08/23/1061945/ հասանելի է 11.10.2021):

132 Cumhurbaşkanı Erdoğan: Markar deyince herkes gibi bizim de aklımıza bu ülkeye, millete olan aşkı, sevdası geliyordu, https://www.aa.com.tr/tr/turkiye/cumhurbaskani-erdogan-markar-deyince-herkes-gibi-bizim-de-aklimiza-bu-ulkeye-millete-olan-aski-sevdasi-geliyordu/2015568 (հասանելի է 30.11.2021):

կական համայնքին շարունակելու ենք աջակցել»[133]: Haber7 լրատվակայքի սյունակագիր Յասին Ալթայը մեջբերում է Մարգար Եսայանի մասին Պոլսի Հայոց պատրիարք Սահակ Մաշալյանի ելույթում հնչած հետևյալ խոսքերը. «Մահը բոլոր մարդկանց ընդհանուր ճակատագիրն է: Ինչպես Իսմեթ Օզելն է ասել. «Թռչող գնդակի չափ անկողմնակալ է մահը», այն միավորում է նույնիսկ այս կյանքում որևէ ընդհանրություն չունեցող մարդկանց... սովորաբար մահացողի արարքների տետրը փակվում է, այդ րոպեից հետո աշխարհում որևէ ազդեցություն չի ունենում: Սակայն երբ խոսքը վերաբերում է հանգուցյալի հասարակական ազդեցությանը, հաճախ հակառակն է տեղի ունենում»[134]: Հոդվածագիրն ընդգծում է, որ անգամ իր մահով Մ. Եսայանը ծառայեց հայերին ու թուրքերին՝ ցույց տալով, որ նույնիսկ հայ-ադրբեջանական հակամարտության ամենաթեժ պահին հնարավոր է Թուրքիայի նախագահի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների այցը հայկական եկեղեցի: Կրկին մեջբերելով պատրիարքի ելույթը՝ Ալթայը կիսում է Մաշալյանի այն կարծիքը, որ Ղարաբաղյան հակամարտությունը չի կարող ընկալվել որպես հայերի և թուրքերի միջև կրոնական պատերազմ կամ հայ և ադրբեջանցի ժողովուրդների պայքար, և հավելում, որ «իրականում դա տարածքների համար պայքար է, իմպերիալիզմի ստեղծած դժվար լուծելի հանգույց»[135]:

Այսպիսով, Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը բավական մեծ ազդեցություն ունեցավ նաև Ստամբուլի հայ համայնքում տիրող հոգեբանական իրավիճակի վրա:

---

[133] Türkiye Ermenileri tarihinde bir ilk: Devletin zirvesi Esayan'ın cenaze törenindeydi, https://www.hurriyet.com.tr/gundem/turkiye-ermenileri-tarihinde-bir-ilk-devletin-zirvesi-esayanin-cenaze-torenindeydi-41643570 (հասանելի է 30.11.2021):

[134] Aktay Y., Teşekkürler Markar Esayan, https://www.haber7.com/yazarlar/yasin-aktay/3027407-tesekkurler-markar-esayan (հասանելի է 31.12.2020):

[135] Նույն տեղում:

Այս պատերազմը դարձավ համայնքի անվտանգության հիմնայուները ցնցող ևս մեկ գործոն՝ հիշեցնելով, որ թուրքական պետությունը ոչ մուսուլմանների նկատմամբ մշտապես և համակարգված խտրական, անհանդուրժող քաղաքականություն է վարում:

Մեկնաբանելով պատերազմի օրերին և հետպատերազմյան փուլում հակահայկականության աճը՝ պոլսահայ Գայուշ Չալքման Գավրիլովն ասում է. «Ավելացող ազգայնամոլական խոսույթներ արտահայտությունը չեմ ընդունում, քանի որ ազգայնամոլական խոսույթը երբեք չի պակասում, միշտ կա, երբեմն ձայնն է իջնում, երբեմն բարձրանում: Թուրքական հասարակությունը իշխանության կողմից շատ հեշտ մանիպուլացվող հասարակություն է: Այս թեմայով էլ զգում ենք իշխանությունների մանիպուլիացիաները: Մենք այնքան կոտորածներ, այնքան պոգրոմներ ենք տեսել: Ով չի տեսել, այդ պատմություններով է մեծացել: Մի բան գիտենք միայն՝ վախից օգուտ չկա: Շատ լավ գիտենք, որ չեն հանգստանալու, քանի դեռ Կովկասում ու Միջին Արևելքում մի հայ կա, քանի որ մեղավորն անմեղի աչքերին չի կարողանում նայել, նայելուն պես անցյալն է հիշում, ինչքան էլ մերժի, հիշում է»[136]:

Բավական ուշագրավ են մարդաբան Յեքթան Թուրքյըլմազի դիտարկումները այս թեմայի շուրջ. «Այս պահին Թուրքիայի հայերի մասին չենք էլ խոսում: Կարող ենք խոսել լոկ Ստամբուլի հայությունից: Գավառներում հայկական ներկայությունը մահացել է… Շատ խիստ բան եմ ասելու: Իրականում Թուրքիայում սպանելու հայ էլ չկա արդեն: Թուրքիայում հայ բնակչությունը

[136] Dağlık Karabağ'daki savaş, Türkiye Ermenilerinin "güvercin tedirginliğini" artırdı, https://www.indyturk.com/node/253236/haber/da%C4%9Fl%C4%B1k-karaba%C4%9Fdaki-sava%C5%9F-t%C3%BCrkiye-ermenilerinin-g%C3%BCvercin-tedirginli%C4%9Fini-art%C4%B1rd%C4%B1 (հասանելի է 04.10.2020):

վերանալու եզրին է: Ոմանք ասում են 60 000, մյուսները՝ 80 000: Լեռնային Ղարաբաղից հետո հավանաբար էլ ավելի կպակասեն: Հուսամ՝ Ստամբուլի հույների 1974 թվականի[137] չի վերածվի... Հայերը թուրքական պետությանն ի՞նչ օգուտ են տալիս: Լարվածության պահին հնարավորություն են տալիս ասել. «Տեսե՛ք՝ մեր ձեռքում հայեր կան»: Այս երկրում, երբ ուզում են ասել «հայեր են ապրում», ապրել բառը չեն օգտագործում, ասում են «կան հայեր, որոնց մենք դիմանում ենք: Մի համայնք կա, որ մեր մեծահոգության շնորհիվ դեռ շարունակում է գոյություն ունենալ, դեռ անվտանգությանը սպառնալու կարիք չունենք»: Սա սարսափելի բան է»[138]:

[137] 1974 թ. հուլիսի 20-ին Կիպրոս թուրքական ներխուժումից հետո Ստամբուլի հունական համայնքի մի մեծ մաս որոշում կայացրեց լքել Թուրքիան՝ վախենալով հակահունական տրամադրությունների աճից:

[138] 'Türkiye Ermenileri kalmadı, İstanbul Ermenilerinden bahsediyoruz', https://www.gazeteduvar.com.tr/turkiye-ermenileri-kalmadi-istanbul-ermenilerinden-bahsediyoruz-haber-1501311 (հասանելի է 11.10.2020):

*Նաիրա Պողոսյան*

# ՓԵՏՐՎԱՐԸ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ»-ՈՒՄ. ԽՈՋԱԼՈՒԻ ԴԵՊՔԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

Ամեն տարի փետրվարի վերջին «Խոջալուի հիշատակի օրերին» թուրքական մամուլում նկատվում է հայկական թեմատիկայի ակտիվացում: Գրեթե բոլոր թերթերում հայտնվում են իբրև թե հայերի կողմից կազմակերպված «ցեղասպանության» մասին վկայություններ, ականատեսների պատմություններ[139], Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին խեղաթյուրված պատմագիտական տեղեկություններ: Թուրքական թերթերը յուրօրինակ մրցակցության մեջ են մտնում մարդկանց խոշտանգումների ավելի սարսափելի մանրամասներ ներկայացնելու, ավելի խիստ քննադատություն հրապարակելու համար: Լրահոսում տեղ են գտնում Թուրքիայում և դրա սահմաններից դուրս տարբեր քաղաքներում անցկացվող հիշատակի միջոցառումների մասին տեղեկություններ[140]:

---

[139] Ermeniler Azerbaycan Türklerini Hocalı'da böyle katletmişti! Elini sobaya basıp tırnaklarını söktüler, https://www.sabah.com.tr/galeri/dunya/ermeniler-azeri-turklerini-hocalida-boyle-katletmisti-elini-sobaya-basip-tirnaklarini-soktuler/3 (հասանելի է 08.04.2021):

[140] Նման հոդվածների մի քանի օրինակ տե՛ս Hocalı Şehitleri dualarla anıldı, https://www.sabah.com.tr/yasam/2021/02/27/hocali-sehitleri-dualarla-anildi հասանելի է 08.04.2021); Hocalı katliamının yıldönümünde Bayburt Üniversitesinden çevrimiçi karma sergi, https://www.sabah.com.tr/bayburt/2021/02/27/hocali-katliaminin-yildonumunde-bayburt-universitesinden-cevrimici-karma-sergi (հասանելի է 08.04.2021); Hocalı Katliamı'nın 26. Yılı, https://www.sabah.com.tr/gundem/-2018/02/21/hocali-katliaminin-26-yili (հասանելի է 08.04.2021); Hocalı katliamını unutturmayacağız, https://www.sabah.com.tr/guney/2018/03/05/hocali-katliamini-unutturmayacagiz (հասանելի է 08.04.2021); Hocalı katliamı unutulmadı, https://www.sabah.com.tr/dunya/2020/02/26/hocali-katliami-unutulmadi (հասանելի է

Ավելորդ է ասել, որ Խոջալուի թեմատիկայով գրվող բոլոր հոդվածներում հայերը թիրախավորված են, և նրանց հանդեպ կիրառվում են երբեմն ծայրահեղության հասնող վիրավորական արտահայտություններ: Հատկապես Թուրքիայի տարածքում գործող թուրք-ադրբեջանական բարեկամության կազմակերպությունների մասնակցությամբ հիշատակի արարողությունները վերածվում են Հայաստանին և հայերին ուղղված «վտանգավոր խոսքի»: Օրինակ, 2021 թ. փետրվարի 26-ին Իգդիրում ելույթ ունենալիս Թուրքիա-Ադրբեջան բարեկամական կազմակերպությունների դաշնության (TADDEF) պատվավոր նախագահ Յուջել Արթանթաշը հայտարարել էր. «Հայերի իսկական դեմքը Խոջալուում տեսանք: 1915-20 թթ. իրենց արած դաժանությունները մեկ անգամ էլ 1992 թ. իրագործեցին: Խոջալուում անպաշտպան մարդկանց սպանեցին: Այսօր հայերի կոտորածից փրկված հազարավոր ադրբեջանցիներ դժվար իրադրության մեջ են: Խոջալուում հայերի արած ցեղասպանությունը իրականում աշխարհի մարդկության համար ամոթալի օր է»[141]: Իսկ «Թուրքիա-Ադրբեջան բարեկամական կազմակերպությունների դաշնության» նախագահի տեղակալ և մամլո քարտուղար Սերդար Ունսալը իր ելույթում հայտարարել էր, որ Խոջալուում հայերի արածն անգամ Գերմանիայում նացիստները հրեաների հանդեպ չեն արել: Ունսալի ելույթում ասվում է. «Ես կոչ եմ անում բոլոր պետություններին ճանաչել Խոջալուում տեղի ունեցածը որպես ադրբե-

---

08.04.2021); Iğdır’da Hocalı soykırımı törenle anıldı, https://www.sabah.com.tr/igdir/-2021/02/24/igdirda-hocali-soykirimi-torenle-anildi (հասանելի է 08.04.2021); Bartın Üniversitesi’nde “Hocalı Katliamından Karabağ Zaferine” konferansı, https://www.sabah.com.tr/bartin/2021/03/02/bartin-universitesinde-hocali-katliamindan-karabag-zaferine-konferansi (հասանելի է 08.04.2021):

141 Yücel Artantaş: “Hocalı katliamı Ermenilerin gerçek yüzüdür”, https://www.sabah.com.tr/igdir/2021/02/26/yucel-artantas-hocali-katliami-ermenilerin-gercek-yuzudur (հասանելի է 26.02.2021):

ջանցիների դեմ կատարված ցեղասպանություն: Ղարաբաղում, Խոջալուում զոհվածնե՛ր, խաղաղ քնեք, երեսուն տարի հետո ձեր վրեժը լուծված է, օկուպացված հողերը հերոս ադրբեջանական բանակի կողմից ազատագրված են: Մեր հարգելի նախագահ Իլհամ Ալիևը թուրքի երկաթե բռունցքով հայի գլխին է խփել: Խոջալուի ցեղասպանությունը չենք մոռացել, չենք մոռանալու»[142]: Առհասարակ, 2021 թ. Խոջալուին վերաբերող ելույթներում կարմիր թելով անցնում էր այն միտքը, որ 44-օրյա պատերազմում հաղթանակից հետո ադրբեջանցիները մասամբ լուծել են իրենց վրեժը: Էլ ավելի հատկանշական է, որ այս ելույթներում պարտադիր հնչում էին Թուրքիային և անձամբ Ռ. Թ. Էրդողանին ուղղված շնորհակալական խոսքեր: Խոջալուի դեպքերի մասին խոսելիս թե՛ ադրբեջանցիները, թե՛ թուրքերը պարտադիր կերպով անդրադառնում են նաև տարածաշրջանում հայերի իբրև եկվոր լինելուն, ծավալապաշտական ելույթներ ունենում Երևանի, Զանգեզուրի մասին:

Խոջալուի դեպքերի մասին խոսելիս թուրքական մամուլում սովորաբար կիրառվում են «ցեղասպանություն», «կոտորած» բառերը: Երբեմն տպավորությունն ուժեղացնելու համար մամուլում հայտնվում են «դաժանություն բառի հոմանիշ», «ադրբեջանական ժողովրդի ծանրագույն տրավմա», «հայկական դաժանության գագաթնակետ»[143] արտահայտությունները: Ցավակցական ուղերձներում և ելույթներում էլ ամենից շատ օգտագործվում են «չենք մոռացել», «թույլ չենք տալու մոռանալ» արտահայտությունները: 2021 թ. այն իր ելույթում օգտագործեց նաև Թուրքիայի արտաքին

[142] Serdar Ünsal: “Ermenilerin Hocalı’da yaptığını Naziler bile yapmadı”, https://www.sabah.com.tr/igdir/2021/02/26/serdar-unsal-ermenilerin-hocalida-yaptigini-naziler-bile-yapmadi (հասանելի է 26.02.2021):
[143] Vahşetin adı: Hocalı katliamı, https://www.yenisafak.com/video-galeri/dunya/-vahsetin-adi-hocali-katliami-2216721 (հասանելի է 26.02.2021):

գործերի նախարար Մևլյութ Չավուշօղլուն. «Մարդկության դեմ այս հանցագործությունը չենք մոռացել, չենք էլ մոռանալու»[144]:

Այդընի նահանգապետ ԱՇԿ-ական Հալուք Ալըջըքը գրել է. «29 տարի առաջ Լեռնային Ղարաբաղի Խոջալու ավանում տեղի ունեցածները թյուրքականության խղճի ցավն են, ազգային սրտի ցավը: Խոջալուում միջազգային իրավունքով ցեղասպանություն է տեղի ունեցել, մարդկության դեմ հանցագործություն, հարձակումներ և խաղաղության դեմ հանցագործություններ են բացահայտ արվել, Խոջալուում թուրքերի ցեղասպանություն է տեղի ունեցել: Քանինը տարի անց, Աստծուն փառք, մեր զոհերի վրեժը լուծված է: Աստծուն փառք, արդարությունը վերականգնված է: Հայաստանը վճարեց իր թափած արյան գինը: Պատմական ռևանշ տեղի ունեցավ: Զոհերի, վիրավորների, խեղճերի, տնից տեղից կտրված անմեղ թուրք եղբայրների վրեժը ահաբեկչական պետություն Հայաստանից լուծեցինք»[145]:

Խոջալուի դեպքերի հետ կապված մեդիայում հակահայկական պատումների կտրուկ աճը Թուրքիայի հայ համայնքի համար լրացուցիչ անհանգստության պատճառ է դառնում: Այս առիթով Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Կարո Փայլանը գրում է. «Թուրքիայի հայերին պարտադրել, որպեսզի Խոջալուի կոտորածի համար բացատրություններ տան, ինքն իրենով է խնդիր: Մարդկային զոհերի պատճառ դարձած ամեն տեսակի պատերազմի, ցավի դեմ լինելու համար պարտադիր չէ որևէ կոնկրետ ինքնություն ունենալ, բավական է մարդ լինել: Խոջալուի կոտորածը ցավ է, բայց այդ ցավը հիշելիս թուրքաբնակ հայերին գործընթացի մեջ ներառելը, մի ամբողջ ժո-

[144] Can Azerbaycan’ın acısı kalbimizde, https://www.sabah.com.tr/dunya/2021/02/-27/can-azerbaycanin-acisi-kalbimizde (հասանելի է 26.02.2021):

[145] MHP Aydın İl Başkanı Alıcık, "Hocalı dinmeyen çığlık, tükenmeyen Türk sevdasıdır", https://www.sabah.com.tr/aydin/2021/02/25/mhp-aydin-il-baskani-alicik-hocali-dinmeyen-ciglik-tukenmeyen-turk-sevdasidir (հասանելի է 26.02.2021):

դովրդի վրա հարձակվել, բացատրություններ պահանջելը, անկախ պատմությունից, իրավիճակից ու պայմաններից, ստիպում է մեզ օտար զգալ մեր պապերի հողում: Եթե մեր ապրած քաղաքի սրտում ոմանք գոռում են, կարողանում են գոռալ՝ «Այսօր Թաքսիմ, վաղը Երևան: Մի գիշեր անսպասելի կարող ենք գալ»[146], նշանակում է մեզ լավ չեն ճանաչում»[147]: Կարևոր ենք համարում նաև նշել, որ Կարո Փայլանը միևնույն ժամանակ սոցիալական ցանցերի իր օգտահաշիվներում պարբերաբար հանդես է գալիս ոչ հայանպաստ և հաճախ օբյեկտիվ իրականությունը խեղաթյուրող հայտարարություններով, օրինակ՝ Խոջալուի դեպքերի առիթով Ադրբեջանին ուղղված ցավակցություններով: Նրա այսօրինակ մոտեցումը լիովին տեղավորվում է պատգամավորի ձախակողմյան, սոցիալիստական քաղաքական հայացքների և ընկալումների շրջանակում:

2021 թ. փետրվարին 44-օրյա պատերազմում թուրք-ադրբեջանական տանդեմի հաջողությունից հետո ադրբեջանական հայտարարություններում ուշագրավ առանձնահատկություն ենք նկատում. թուրքական կողմին աջակցության համար երախտագիտական խոսքերի շռայլում: Առհասարակ այս միտումը սկսվել

---

[146] Թուրք բանաստեղծ Ումիթ Յաշար Օղուզջանի (1926-1984 թթ.) բանաստեղծությունից վերցված «Մի գիշեր անսպասելի կգանք» տողի քաղաքական ոդիսականը սկսել է Կիպրոսում: 1974 թ.Կիպրոս թուրքական ներխուժման նախօրեին կղզում աշխատած լրագրողներ Աքայ Ջեմալի ու Ֆեզի Թանըփընարի վկայությամբ թուրք-հունական հակամարտության ողջ ընթացքում Թուրքիայի միջամտությանը սպասող կիպրոսաբնակ թուրքերին հուսալքելու նպատակով հույները մարտական դիրքերի մոտակայքում ռադիոյով հեռարձակում էին «Սպասեցի, դու չեկար» երգը: Ի պատասխան թուրքերը Բայրաք ռադիոալիքով հեռարձակում էին Օղուզջանի «Ինձ այդպես անկեղծ մի կանչիր, մի գիշեր գուցե անսպասելի գամ» երգը: Մեր օրերում այս արտահայտությունը պարբերաբար հայտնվում է Ռ.Թ. Էրդողանի՝ իր հակառակորդներին ուղղված ելույթներում: http://platform24.org/yazarlar/2731/bir-gece-ansizin (հասանելի է 26.02.2022):

[147] Garo Paylan: Babaannemin Meselesi Nasıl Arkeologlara Bırakılabilir? https://bianet.org/bianet/ifade-ozgurlugu/215527-garo-paylan-babaannemin-meselesi-nasil-arkeologlara-birakilabilir (հասանելի է 26.02.2021):

է պատերազմի ավարտից հետո և շարունակում է արդիական մնալ նաև ներկայումս: Նախևառաջ արժի շեշտել, որ թուրքական մամուլում իշխող դարձավ «թուրք-ադրբեջանական համատեղ հաղթանակի» պատումը: Այսինքն՝ եթե պատերազմի ընթացքում մամուլում հայտնվում էին հիմնականում Ադրբեջանին բարոյա-պես և դիվանագիտորեն աջակցելու մասին հրապարակումներ, ապա պատերազմի ավարտից հետո անթաքույց շեշտվում էր ինչ-պես հաղթանակի գործում Թուրքիայի ունեցած մեծ ներդրումը, այնպես էլ Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում, այդ թվում՝ Շուշիում տարվող աշխատանքներում Ալիևի վարչակազ-մին օգնելու պատրաստակամությունը: Այս կերպ թուրքական մամուլը սեփական հասարակության մեջ ավելի է ամրապնդում Ադրբեջանի՝ փոքր եղբոր և ամենակարևոր դաշնակցի կերպարն ու այն հակադրում «հավերժ թշնամի» Հայաստանի կերպարի հետ:

Այսպիսով, թուրքական «ատելության օրացույց»-ում փետրվարի վերջն ամենաակտիվ փուլերից է: Խոջալուի դեպքերի համատեքստում ոչ միայն Հայաստանն ու հայկական սփյուռքը, այլ գլոբալ «հայկական հանրությունը» ենթարկվում է բացեիբաց վիրավորանքների, «ատելության խոսք» պարունակող հայտա-րարությունների թիրախ դառնում:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 106-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ. ՋՈ ԲԱՅԴԵՆԻ «ԱՆԱԿՆԿԱԼՆ» ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ»

Բնական է, որ հայկական թեմատիկային վերաբերող ամենամեծաթիվ արձագանքները թուրքական մամուլում և առհասարակ հասարակական դաշտում լինում են ապրիլի 24-ին և դրան նախորդող և հաջորդող մեկ-երկու օրերին: Որպես կանոն այդ օրերին մամուլում հայտնվում են Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտող հոդվածներ ու հոդվածաշարեր, տարբեր պետությունների ղեկավարների ուղերձներին վերաբերող կանխատեսումներ, ապա նաև այդ ուղերձների վերլուծություններ: «Հրանտ Դինք» հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ թուրքական հասարակական տիրույթում, ինչպես նաև մամուլում Հայոց ցեղասպանության մասին անդրադարձների թվի աճին նպաստել է 2014 թ. Ռ. Թ. Էրդողանի ցավակցական ուղերձն ուղղված Թուրքիայի հայերին կամ իր ձևակերպմամբ՝ «օսմանյան հայերի ժառանգներին»[148]: Եթե 2007-2013 թթ. թուրքական առաջատար «Aydınlık», «Birgün», «Hürriyet», «Habertürk», «Radikal», «Sabah», «Türkiye», «Zaman» թերթերի առաջին էջերում ցեղասպանության մասին նյութերի քանակը 35 էր, ապա միայն 2014 թ. այս ցուցանիշը հասավ 46-ի: Ընդ որում, աջակողմյան կողմնորոշում ունեցող թերթերն Էրդողանին մեղադրեցին իմպերիալիստների և հայկական սփյուռքի թեզերը կրկնելու մեջ, իսկ «Ազգայնական շարժում կուսակցության» ղեկավար Դևլեթ Բահչելին նրան անվանեց «ապազգային գործիչ, Երևանի կամակատար»՝ նշելով, որ այդ ուղերձը անբարոյակա-

[148] Erdoğan’dan Ermeni açılımı, https://www.sozcu.com.tr/2014/gundem/surpriz-ermeni-aciklamasi-493553/(հասանելի է 15.04.2021):

նության կնիք է ազգի պատվի վրա, երախտամոռություն է նախնիների աճյունների նկատմամբ[149]: Դրան հակառակ, առավել իշխանամետ թերթերն էլ համարեցին, որ այս քայլի համար Ռ. Թ. Էրդողանին կարելի է նույնիսկ «Խաղաղության Նոբելյան մրցանակի» ներկայացնել[150]: Կարևոր է ընդգծել, որ 2014 թ. իր առաջին ելույթում Էրդողանը շեշտը դրել էր «աքսորի» կոնցեպտի վրա, մինչդեռ հետագա տարիներին այս շեշտադրումը փոփոխություն կրեց՝ առավել կենտրոնանալով օսմանյան, ապա նաև հանրապետական Թուրքիայում հայերի ունեցած ներդրումների և դրանց համատեքստում հայերի և թուրքերի խաղաղ գոյակցության հնարավորության վրա[151]:

Ուշագրավ է, որ 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շուրջ աղմուկ չստեղծելու միտումով այս թեմային իրենց առաջին էջերում տեղ էին տվել միայն «Hürriyet» և «Zaman» օրաթերթերը, իսկ գլխագրում այն ներառել էր միայն «Cumhuriyet» թերթը[152]: Ընդ որում, թերթը տեղադրել էր հայատառ գրություն և Հրանտ Դինքի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում արված ֆոտոնկարը[153]: 2015 թ. թուրքական թերթերն առաջին հերթին շեշտադրել էին Չանաքքալեի ճակատամարտին նվիրված արարողությունների և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի արարողությունների միջև համեմատականները՝ փորձե-

---

[149] Bahçeli'den 'Ermeni açılımı' tepkisi! https://www.sozcu.com.tr/2014/gundem/-bahceliden-ermeni-acilimi-tepkisi-493686/ (հասանելի է 11.12.2019):

[150] Medyada Nefret Söylemi ve Ayrımcı Dil, Ocak-Nisan 2013 Raporu, İstanbul, 2013, s. 58-89 https://hrantdink.org/attachments/article/392/Medyada-Nefret-Soylemi-Ocak-Nisan-2014.pdf (հասանելի է 11.12.2019):

[151] Erdoğan'dan 24 Nisan Mesajı, https://bianet.org/bianet/toplum/185861-erdogan-dan-24-nisan-mesaji(հասանելի է 11.12.2019):

[152] Firat D., Şannan B., Arslan Z., Basında 24 Nisan Ermeni Soykırımı'nı Anma Günü 1995-2015, İstanbul, 2016, s. 9, https://hrantdink.org/attachments/article/396/Basinda-24-Nisan-Ermeni-Soykirimini-Anma.pdf (հասանելի է 11.12.2019):

[153] Medya ve Nefret Söylemi II, 2021, s. 17.

լով տեսնել, թե ով է «հաղթել» հյուրերի թվի և աստղայնության տեսանկյունից[154]։

Ապրիլի 24-ին ընդառաջ թուրքական մամուլում թրենդային են դառնում Խոջալուի դեպքերի, ԱՍԱԼԱ-ի կազմակերպած գործողությունների, հայկական «ահաբեկչության» մասին հոդվածները, որոնց նպատակն է ընթերցողին ցույց տալ, որ եթե նույնիսկ հայկական կոտորածներ եղել են, ապա հայերը դրան «արժանի էին»։ Բացի այդ, ԶԼՄ-ները փորձում են այդ օրերին շրջանառության մեջ դնել ցեղասպանությունը «հերքող» փաստական նյութեր, նամակներ, հուշեր, կոտորածների մասին թուրք, արտասահմանցի, երբեմն էլ հայ գործիչներից մեջբերումներ[155]։ Վերջին շրջանում թուրք լրագրողները նաև պարտադիր անդրադառնում են հայերի կողմից իբրև թե կազմակերպած կոտորածների նկարագրություններին՝ երբեմն նշելով կոնկրետ գյուղերը, «զոհերի» անուններն ու «սպանդի» մանրամասները[156]։ Առավել «մեղմ» հոդվածներում ներկայացվում են հայ-թուրքական հազարամյա հարաբերությունների պատմությունը, իմպերիալիստական ուժերի կողմից հայերին հրահրելն ու ապստամբելը։

Ապրիլի 24 ամսաթվի բացատրությունն էլ կարևոր տեղ ունի թուրքական լրատվամիջոցներում։ «Sözcü» թերթը գրում է. «Ստամբուլում, այսինքն՝ պետության մայրաքաղաքում, Արևե-

---

[154] Նույն տեղում, էջ 21։

[155] Atatürk’ün cevabı, https://www.sozcu.com.tr/2021/yazarlar/sinan-meydan/-ataturkun-cevabi-6409710/ (հասանելի է 11.12.2019)։

[156] Gevaş’ta Ermeniler tarafından toplu katledilen köylüler için şehitlik yapıldı, https://www.sabah.com.tr/van/2021/05/22/gevasta-ermeniler-tarafindan-toplu-katledilen-koyluler-icin-sehitlik-yapildi (հասանելի է 11.12.2019), Ermeniler, Erzurum'daki o camide 587 kişiyi diri diri yaktılar, https://www.yenisafak.com/video-galeri/gundem/ermeniler-erzurumdaki-o-camide-587-kisiyi-diri-diri-yaktilar-2218650 (հասանելի է 11.12.2019), Ermenilerin katlettiği 519 bin Türk’ün acı öyküsü, https://www.sozcu.com.tr/hayatim/yasam-haberleri/ermenilerin-katlettigi-519-bin-turkun-aci-oykusu/ (հասանելի է 11.12.2019)։

յան Անատոլիայում և Սալոնիկի նման կայսրության այլ քաղաքներում մինչ այդ օրը տարբեր ժամանակներում հայկական ապստամբություններ էին եղել: Վանի, Բիթլիսի, Մուշի նման քաղաքները գրավվել էին հայերի կողմից: Պատերազմի ընթացքում 1915 թ. ապրիլի 24-ին մայրաքաղաք Ստամբուլում որոշ հայ պարագլուխների տները և եկեղեցիներն են խուզարկել, մի բանակ զինելու չափ զենք ու պայթուցիկ են գտել ու շատերին ձերբակալել: Այս պատճառով 1915 թ. ապրիլի 24-ին հայերը և աշխարհը նշում են որպես «Ցեղասպանության օր», որպես հիշատակի օր: Խորհրդանշական ամսաթիվ է, ցեղասպանության հետ ուղղակի կապ չունի: Եթե հայերի ուժը պատեր, մեզ կոչնչացնեին»[157]: Այս և այլ նմանատիպ հոդվածներում հայերի հասցեին հնչող ամենատարածված պիտակավորումներն են «դավաճան», «մեջքից հարվածող», «ապստամբ», «հայկական հրոսակ», որոնց ժամանակ առ ժամանակ ավելանում են «լեշակերներ», «արյունոտ աչքերով կատաղած շներ»[158] և նման այլ արտահայտություններ: Հակահայկականության ալիքի ներքո «ատելության խոսքի» թիրախ են դառնում նաև հայամետ արտասահմանցի գործիչները: Այսպես, օրինակ, ԱՄՆ կոնգրեսի նախագահ Նենսի Փելոսիին, Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Մենենդեսին և Ներկայացուցիչների պալատից Ադամ Շիֆին անվանում են «Թուրքիայի երդվյալ թշնամիներ և Հայաստանի մոլի աջակիցներ»:

Հայոց ցեղասպանության մասին խոսելիս թուրքական տիրույթում ամենակիրառվող արտահայտություններից են «զազրե-

---

157 Bugün 24 Nisan, sözde Ermeni soykırımı!, https://www.sozcu.com.tr/2021/-yazarlar/emin-colasan/bugun-24-nisan-sozde-ermeni-soykirimi-2-6392797/ (հասանելի է 11.12.2019):

158 Firat D., Şannan B., Arslan Z., Basında 24 Nisan Ermeni Soykırımı'nı Anma Günü 1995-2015, İstanbul,2016, s. 32, https://hrantdink.org/attachments/article/396/Basinda-24-Nisan-Ermeni-Soykirimini-Anma.pdf (հասանելի է 11.12.2019):

լի սուտ», «անպատիվ սուտ», «արևմուտքի հայկական մահակ»[159]: Որոշ հոդվածագիրներ էլ նշում են, որ հայերի տեղահանություն եղել է, սակայն փորձում են արդարացնել այն: Լրագրող Սելչան Թաշչըն իր հոդվածում բերում է դոկտոր Ռեշիդի օրինակը. «Գլուխը վերցրեց ափի մեջ և ինքն իրեն ասաց. «Հեյ, դոկտոր Ռեշիդ: Երկու տարբերակ կա: Կամ հայերն են թուրքերին վերացնելու, այս երկրի տերն են դառնալու կամ թուրքերի կողմից մաքրվելու են»: Ընտրությունն արեց առանց մի պահ իսկ կասկածելու, տվեց աքսորի հրամանը»[160]:

Ապրիլի 24-ին նվիրված հրապարակումներում առանձին տեղ ունեն թուրք պատմաբանների, տարբեր գիտնականների, նախկին դեսպանների վերլուծությունները, կարծիքները: Ուշագրավ է, որ տարիներ շարունակ շրջանառության մեջ է գտնվում ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Շուքրու Էլեքդաղի առաջարկած 4 T-ի տեսությունը. «Ցեղասպանությունը կարևոր քաղաքական միջոց է «Մեծ Հայաստանի» նպատակի իրագործման ճանապարհին, - ասում է նախկին դեսպանը, - «Հայ դատը» կյանքի կոչելու համար կիրառվող պլանը ներառում է 4 T՝ tanıtım (ներկայացում), tanınma (ճանաչում), tazminat (փոխհատուցում), toprak (տարածք): Առաջին փուլը ներառող 1975-1984 թթ. հայկական ահաբեկչական կազմակերպությունները ցեղասպանության մասին պատմեցին աշխարհին՝ կազմակերպելով թուրք դեսպանների, գլխավոր հյուպատոսների, դիվանագետների, նրանց ընտանիքների սպանությունները: Ճանաչման փուլում, որը դեռ շարունակվում է, աշխարհին ստիպեցին հավատալ ցեղասպանու-

[159] Ermeni Soykırımından Kürt Soykırımına!..., https://www.sozcu.com.tr/2019/-yazarlar/umit-zileli/ermeni-soykirimindan-kurt-soykirimina-5394053/ (հասանելի է 17.11.2019):

[160] Medyada Nefret Söylemi İzleme Raporu Ocak-Nisan 2012, İstanbul, 2012, ss. 54-55, https://hrantdink.org/attachments/article/279/rapor_Ocak-Nisan_2012.PDF(հասանելի է 17.11.2019):

թյանը»[161]: Հայ Դատի գործունեությանը թուրքական իշխանությունների հակադարձման մասին խոսելիս Շյուքրու Էլեքդաղը նշում է, որ Թուրքիան վաղուց ապացուցել է, որ 1915 թ. դեպքերը որպես ցեղասպանություն որակելը պատմական և իրավական տեսանկյունից որևէ հիմք կամ հիմնավորում չունի: Դեսպանը նաև շեշտում է այդ գործում սեփական ներդրման կարևորությունը՝ ասելով, ԱՄՆ-ում դեսպան լինելու տարիներին իր նախաձեռնությամբ հիմնադրվել է ամերիկյան պատմաբան, օսմանագետ Հիթ Լոուրիի գլխավորած Թուրքագիտական ուսումնասիրությունների ինստիտուտը, որը Թուրքիայի մասին գիտական թեզեր գրող ուսանողներին կրթաթոշակ էր վճարում, Թուրքիայի պատմության մասին մագիստրոսական թեզեր գրող ուսանողների համար Ստամբուլի Ռոբերտ քոլեջում կազմակերպում թուրքերենի ամառային դպրոցներ, ավագ դպրոցների ուսուցիչների համար՝ պատմության դասեր, ֆինանսավորում հայկական տեսակետները հերքող գրքերի և հոդվածների հրապարակումը: Իր գործունեության պսակ, սակայն Էլեքդաղը համարում է 1985 թ. մայիսի 19-ին Բեռնարդ Լյուիսի, Ստենֆորդ Շոուի, Ջ. Մըքքարթնիի, Ավիգդոր Լևիի և 69 այլ գիտնականների կողմից հրապարակված Հայոց ցեղասպանությունը հերքող հայտարարությունը[162]: Դեսպանն ակնհայտ ափսոսանքով նշում է, որ 1990-ականներին ինստիտուտը փակվել է, ինչին ի պատասխան՝ հրապարակախոս Ուղուր Դյունդարը մեջբերում է հետևյալ ասացվա-

[161] Türkiye Ermeni iddialarının 100. yılında bir stratejiye sahip mi? https://www.sozcu.com.tr/2015/yazarlar/ugur-dundar/turkiye-ermeni-iddialarinin-100-yilinda-bir-stratejiye-sahip-mi-706376/ (հասանելի է 17.11.2019): Այս մասին տե՛ս նաև Ermeni iddialarında ‘Dört T’, https://www.sozcu.com.tr/2016/gundem/ermeni-iddialarinda-dort-t-1258130/ (հասանելի է 17.16.2020):

[162] Biden’ın sözde Ermeni soykırımını tanıması Türkiye ve ABD ilişkilerini yıkıma uğratır…, https://www.sozcu.com.tr/2021/yazarlar/ugur-dundar/bidenin-sozde-ermeni-soykirimini-tanimasi-turkiye-ve-abd-iliskilerini-yikima-ugratir-6388367/ (հասանելի է 15.06.2021):

ծը. «Ձին մեռնում է, հրապարակն է մնում, իգիթը մեռնում է, փառքն է մնում: Ինստիտուտն էլ մահացավ, բայց իրենից հետո որպես կարևոր ժառանգություն թողեց հայկական պնդումների դեմ պայքարի արդյունավետ մոդելը»[163]:

Ընդգծենք նաև, որ երբեմն Հայոց ցեղասպանության թեմային նվիրված հոդվածներում թուրք հեղինակներն օգտագործում են որոշակի շաբլոն՝ փոխելով կամ ավելացնելով մեկ-երկու նախադասություն: «Sözcü» թերթի սյունակագիր Էմին Չոլաշանն, օրինակ, գրեթե նույն բովանդակությամբ, բայց տարբեր վերնագրերով երկու հոդված է հրապարակել 2019 թ. ապրիլի 25-ին և 2019 թ. դեկտեմբերի 15-ին: Այս հոդվածները կարող են համարվել Թուրքիայում հայերի թիրախավորման կարճ ուղեցույց: Հեղինակը գրում է. «…Քյազըմ Քարաբեքիր փաշան արևելյան ճակատում հայկական բանակն ու հայկական ավազակախմբերը ոչնչացրեց: Արդեն Հայկական հարց չէր մնացել: Ավելի ճիշտ, կարծում էինք, որ չի մնացել: Հետո Պոնտոսի հույների փորձանքն եկավ գլխներիս: Մինչև օրս էլ ամբողջ աշխարհում շարունակվող Հայոց ցեղասպանության աղմուկին մի՛ նայեք: Ցեղասպանություն չկա: Թշնամու կողմն անցած, օսմանյան բանակին դավաճանած հայերի հետ պատերազմ է եղել, և նրանք ոչնչացվել են: Անշուշտ, դեպքերին զոհ գնացած հայեր կան, բայց ավելի մեծ թիվ են կազմում հայերի կողմից գրավված թուրքական ու քրդական բնակավայրերում հարձակման ենթարկված տասնյակ հազարավոր անմեղ մուսուլմանները ու էլի հայերի ձեռքով մարտիրոսված հազարավոր մեհմեթչիք[164] զինվորները… Հայկական ներկայացումն

[163] Biden'ın sözde Ermeni soykırımını tanıması Türkiye ve ABD ilişkilerini yıkıma uğratır…, https://www.sozcu.com.tr/2021/yazarlar/ugur-dundar/bidenin-sozde-ermeni-soykirimini-tanimasi-turkiye-ve-abd-iliskilerini-yikima-ugratir-6388367/ (հասանելի է 15.06.2021):

[164] Թուրքիայում բավական տարածված Մեհմեթ անվանը հայերենի «-իկ» փաղաքշական ածանցի թուրքական համարժեք «-çik» ածանցի հավելումով ստաց-

այսքանով էլ չի ավարտվում: 1970-ականներին գլխներիս եկավ հայկական ԱՍԱԼԱ փորձանքը: Քանի մարդ, քանի դիվանագետ մարտիրոսվեց: Բոլորը պետք է լավ իմանան մի բան: Անցյալում հայերի մեջքին օտար ուժեր էին կանգնած, ԱՍԱԼԱ-ի մեջքին էլ էին կանգնած: Նույն ուժերը հիմա էլ շարունակում են ցեղասպանության ճանաչման կամպանիան: Այսպես կոչված հայկական ցեղասպանությունը մի մեծ սուտ է, իմպերիալիստական աշխարհի կողմից մեր գլխին բերված փորձանք»[165]:

2021 թ. Հայոց ցեղասպանությանը վերաբերող ամենաքննարկված ներթուրքական ուղերձը դարձավ «Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության» պատգամավոր Գարո Փայլանի. «106 տարի անց ցեղասպանության ճարտարապետ Թալեաթ փաշայի անվան փողոցներով ենք քայլում, Թալեաթ փաշայի անվան դպրոցներ ենք ուղարկում մեր երեխաներին, ինչպիսի՞ն կլիներ Գերմանիան, եթե այնտեղ Հիտլերի անվան փողոցներ լինեին, երեխաները Հիտլերի անվան դպրոցում սովորեին, մենք այդպիսի Թուրքիայում ենք ապրում» թվիթերյան գրառմանն ի պատասխան «Ազգայնական շարժում կուսակցության» նախկին անդամ, ներկայումս անկուսակցական Ումիթ Օզդաղի հայտարարությունը: Ու. Օզդաղը գրել էր Թվիթերի իր էջում. «Անդաստիարակ, խառնակիչ մարդ, եթե այդքան դժգոհ ես, գնա գրողի ծոցը: Թալեաթ փաշան ոչ թե հայրենասեր հայերին, այլ քեզ նման

---

վող «Mehmetçik» բառը Օսմանյան կայսրությունում, ապա նաև Թուրքիայում զինվորի հավաքական կերպարը խորհրդանշող եզրույթ է: Պատահական չէ, որ 1982 թ. հիմնադրված զոհված կամ հաշմանդամություն ունեցող զինվորներին ու նրանց ընտանիքներին օգնություն տրամադրող հիմնադրամն էլ է այս անունը կրում: Տե՛ս https://www.mehmetcik.org.tr/ (հասանելի է 18.06.2021):

[165] Yine Ermeni Soykırımı Tantanası, https://www.sozcu.com.tr/2019/yazarlar/emin-colasan/yine-ermeni-soykirimi-tantanasi-4556145/ (հասանելի է 15.01.2020), 104 yılında Ermneni Soykırımı, https://www.sozcu.com.tr/2019/yazarlar/emin-colasan/-104-yilinda-ermeni-soykirimi-5510201/?utm_source=yazardetay&utm_medium=free-&utm_campaign=dahafazlahaber (հասանելի է 15.01.2020):

մեջքից հարվածողներին է քշել: Օրը կգա, դու էլ Թալեաթ փաշայի մեթոդներն անպայման կճաշակես»[166]: Փայլանն ի պատասխան գրել էր. «Ժողովրդիս կոտորած գաղափարախոսության մնացորդը ասում է «նորից կանենք»: Դուք խփեցիք, մենք չմեռա՞նք: Մեռանք իհարկե: Բայց ողջ մնացողները երբեք չդադարեցին արդարության համար պայքարել: Ինձնից հետո էլ չեն դադարելու: Այս երկրում խիղճ ունեցող մեծամասնությունը քեզ նման ֆաշիստներին չի թողել ասպարեզը, չի էլ թողնի»[167]:

2021 թ. ապրիլի 24-ը, սակայն, վերոշարադրյալ սովորական խոսույթից տարբերվող, յուրահատուկ անակնկալ մատուցեց թուրքական կողմին: 44-օրյա պատերազմի ավարտից ի վեր «հաղթական ատելության» քարոզարշավ սկսած թուրքական և ադրբեջանական մամուլի համար շոկային դարձավ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի ուղերձում ցեղասպանություն բառի կիրառումը: Թուրքական մամուլը հեղեղվեց տարբեր քաղաքական գործիչների քննադատական ելույթներով և հակահայկական հոդվածներով: Էլեկտրոնային մամուլում հայտնվեցին նախագահական արխիվի նյութերի հիման վրա տարբեր տարածքներում հայերի իբրև կազմակերպած կոտորածների քանակական տվյալներ: Մասնավորապես՝ գրեթե բոլոր կայքերում տարածվեց այն պնդումը, որ «հայկական ավազակախմբերի» կողմից 1910-1922 թթ. 523 955 թուրք է կոտորվել: Նմանատիպ հոդվածներն ուղեկցվում էին նաև հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված իբրև թե մուսուլմանական եղբայրական գերեզմանների նկարներով և շեշտվում, որ դրանցում գտնված ոսկորների հետազոտու-

---

[166] Twitter, Ümit Özdağ'ın Garo Paylan hakkındaki tehdit paylaşımını sildi, https://www.ermenihaber.am/tr/news/2021/05/14/Twitter-%C3%96zda%C4%9F-Paylan/207985 (հասանելի է 15.04.2021):

[167] Paylan’dan kendisini tehdit eden Özdağ’a: Meydanı senin gibi faşistlere terk etmezler, https://www.ermenihaber.am/tr/news/2021/04/27/Paylan-%C3%96zda%C4-%9F-Soyk%C4%B1r%C4%B1m/206974 (հասանելի է 27.04.2021):

թյունը ցույց է տալիս, որ հայերը տանջամահ են արել այդ մարդկանց[168]:

ԱՄՆ նախագահի հայտարարությանն ի պատասխան՝ հայտարարություններով հանդես եկան տարբեր քաղաքական գործիչներ: Նախագահ Ռ. Թ. Էրդողանը ապրիլի 26-ին կառավարության նիստի ավարտին իր ելույթի մեծ մասը նվիրեց այս խնդրին. «ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը ապրիլի 24-ին հրապարակած իր ուղերձում մեր տարածքներում մեկ դարից առաջ տեղի ունեցած ցավալի դեպքերի մասին արտահայտություններն անհիմն են, անիրավ և իրականությանը հակասող արտահայտություններ է արել: Մեզ այս արտահայտությունները բավականաչափ տխրեցրել են: Կարծում ենք, որ այս արտահայտություններն արել է հայ ծայրահեղականների և հակաթուրքական խմբերի ազդեցությամբ: Սակայն դա չի փոխում այն ավերիչ ազդեցությունը, որ այս իրավիճակը կունենա երկու երկրների հարաբերությունների վրա»[169]: ԱՄՆ նախագահին մեղադրելով չփաստարկված պնդումների համար՝ Էրդողանը նշեց, որ օսմանյան արխիվները բաց են և կրկնեց պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու իր առաջարկը: Այնուհետև վստահեցնելով, որ ինքը խոսում է միայն արխիվային փաստաթղթերի վրա հիմնվելով՝ Թուրքիայի նախագահը հայտարարեց, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 150-ից 300 հազար հայ «ավազակներ» 40-ից ավելի ապստամբություն են բարձրացրել և միլիոնավոր խաղաղ թուրքերի և քրդերի կոտորել[170]:

---

[168] https://www.yenisafak.com/gundem/arsivler-ermenileri-yalanliyor-iste-ermenilerin-anadoluyu-kana-bulayan-katliamlari-3620446 (հասանելի է 15.05.2021):

[169] Kabine Toplantısı'nın Ardından Yaptıkları Konuşma, https://www.tccb.gov.tr/-konusmalar/353/127733/kabine-toplantisi-nin-ardindan-yaptiklari-konusma (հասանելի է 26.04.2021):

[170] Նույն տեղում:

Իսկ ԱԶԿ փոխնախագահ Նուման Քուրթուլմուշը ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի հայտարարությանն ի պատասխան ասել է. «Հայկական լոբբիին հաճոյանալու համար Թուրքիային զրպարտողներին Վիետնամում, Բաղդադում, Ալ-Ֆալլուջայում թափված արյունը, Էբու Գարեյբ բանտի զազրելի տանջանքները, Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա գցած ատոմային ռումբերով երեխաների, կանանց սպանելով՝ չորացրած սերունդները կհիշեցնենք: Կհիշեցնենք՝ ինչպես են Ամերիկան ստեղծել»[171]:

Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը հայտարարեց, որ ԱՄՆ նախագահի կողմից ցեղասպանության բառի կիրառումը իրականությունը ժխտելուց և խեղաթյուրելուց բացի այլ իմաստ չունի. «Պետք չէ պատմական իրադարձությունները քաղաքականացնել և օգտագործել հաշվեհարդարի, պայքարի, կռվի համար: Ի վերջո, հարյուրավոր տարիներ խաղաղ և բարեկեցիկ ապրած, միասին ապրելու կամք ունեցած ժողովուրդների միջև տեղի ունեցածը ցեղասպանություն անվանելն անհեռատեսություն է, անգրագիտություն, ապագայի կործանում»[172]:

«Տարօրինակ պատահականությամբ» Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա հետ համընկած «Երկրորդ Ղարաբաղյան պատերազմը և Հայաստանի ռազմական հանցագործությունները» խորագրով ցուցահանդես այցելած Թուրքիայի խորհրդարանի նախագահ Մուսթաֆա Շենթոփն էլ այսպես մեկնաբանեց Բայդենի հայտարարությունը. «ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի

---

[171] Kurtulmuş'tan ABD Başkanı Biden'ın 1915 olaylarını "soykırım" olarak tanımlamasına tepki: Çocuk, kadın demeden kuruttukları nesilleri hatırlatırız, https://www.yenisafak.com/gundem/kurtulmustan-abd-baskani-bidenin-1915-olaylarini-soykirim-olarak-tanimlamasina-tepki-cocuk-kadin-demeden-kuruttuklari-nesilleri-hatirlatiriz-3620183 (հասանելի է 26.04.2021):

[172] Hulusi Akar'dan Joe Biden'a 'soykırım' yanıtı, https://www.sozcu.com.tr/2021/-gundem/hulusi-akardan-joe-bidena-soykirim-yaniti-6396570/ (հասանելի է 12.05.2021):

կողմից բարձրաձայնված «ցեղասպանություն» արտահայտությունը հաշվի չի նստում իրավական, քաղաքական և պատմական իրողությունների հետ: Հայաստանն ու հայկական սփյուռքը «Մեծ Հայաստանի» երազանքով են տարվել և այսպես կոչված «ցեղասպանության» մասին պնդումների, Թուրքիայի նկատմամբ ատելության զգացմունքներով ուղղորդվելու հետևանքով դարձել են տարածաշրջանային անկայունության պատճառ»[173]:

Կարող ենք փաստել, որ Ջո Բայդենի հայտարարությունը ստիպեց թուրքական գրեթե բոլոր շրջանակներին մի որոշ ժամանակով մոռանալ քաղաքական-գաղափարական տարաձայնություններն ու միավորվել ցեղասպանության ժխտողականության ծիրում: Այս իրողությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ հայերի և հայկականության դեմ պայքարը թուրք ժողովրդին միավորող կարևորագույն գործոններից է, որն անհրաժեշտության դեպքում հմտորեն կիրառվում է պետական այրերի կողմից: Այս առումով կարևոր նախաձեռնություն է Թուրքիայում «Ցեղասպանության և մարդկության դեմ գործած հանցագործությունների ուսումնասիրության միջազգային ինստիտուտի» հիմնումը: Թուրքիայի բարձրագույն կրթության խորհրդի (YÖK) կայքում նշվում է, որ այդ ինստիտուտը իրականացնելու է հետազոտություններ ոչ միայն ցեղասպանության մասին «հայերի անհիմն պնդումների», այլև Ամերիկայից Աֆրիկա, Ասիայից Եվրոպա աշխարհի բոլոր կետերում մարդկության դեմ իրականացված հանցագործությունների վերաբերյալ[174]: Նման «անկախ և քաղաքա-

[173] Şentop'tan Biden'a: Hukuk ve bilimle çelişiyor, https://bianet.org/bianet/siyaset/-243091-sentop-tan-biden-a-hukuk-ve-bilimle-celisiyor (հասանելի է 12.05.2021):

[174] YÖK, “Uluslararası Soykırım Ve İnsanlığa Karşı İşlenen Suçlar Enstitüsü” Adıyla Bir Enstitü Kuracak
22 Mayıs 2021, https://www.yok.gov.tr/Sayfalar/Haberler/2021/soykirim-ve-insanliga-karsi-islenen-suclara-iliskin-arastirma-enstitusu-kurulacak.aspx (հասանելի է 28.05.2021):

ցիական նոր կառույցի» ստեղծման անհրաժեշտության մասին Թուրքիայի նախագահի աշխատակազմի բարձրագույն խորհրդատվական մարմինը որոշում կայացրել էր դեռ 2020 թ. հունիսի 26-ին: Այս որոշման հրապարակումից հետո Bianet-ին տված հարցազրույցում ԺԴԿ հայազգի պատգամավոր Գարո Փայլանը նշել է. «Պետությունում մերժողականության շարունակականությունն ապահովող այս գաղափարը մեզ չի զարմացնում: Ի վերջո 105 տարի է՝ այս ժխտման քաղաքականությունը կա: Ստեղծվելու է մի կառույց, որ շարունակելու է ժխտողականության քաղաքականությունն ու ինստիտուցիոնալ կերպով վերահսկելու այն»[175]:

Այսպիսով, Թուրքիայի Հանրապետությունում Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը պաշտոնական և ոչ պաշտոնական, հանրային մակարդակներում շարունակվում է: Ժխտման քաղաքականության անբաժանելի մասն են կազմում հայերին ուղղված մեղադրանքները, «ատելության խոսքը», հայության դեմ պայքարելու անխուսափելիության շեշտադրումը: «Ատելության խոսքի» այս դասական արտահայտումները խորացնում են Թուրքիայում տիրող անհանդուրժողականության մթնոլորտն ու նպաստում երկրում հայատյացության աճին:

[175] "Ermeni tarihi için 'özerk yapı' fikri Cemil Çiçek'in", https://bianet.org/-bianet/dunya/226404-ermeni-tarihi-icin-ozerk-yapi-fikri-cemil-cicek-in (հասանելի է 26.06.2020):

*Վարուժան Գեղամյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021 ԹԹ.

Թուրքիայի Հանրապետությունում Հայաստանի ու հայերի շուրջ խոսույթի հիմնական տարրերը ձևավորել են տասնամյակներով (որոշ դեպքերում՝ հարյուրամյակներով) քաղաքական, աշխարհաքաղաքական և սոցիալ-մշակութային տարաբնույթ իրադարձությունների միջավայրում և արդյունքում: Կախված տվյալ ժամանակահատվածի քաղաքական և աշխարհաքաղաքական առանձնահատկություններից՝ այդ խոսույթի բովանդակության մեջ առանցքային են դառնում որոշակի դրույթներ:

Թուրքիայի՝ որպես լիարժեք ավտորիտար կառավարման համակարգ ունեցող պետության առանձնահատկություններից մեկն այն է, որ պետական ու հասարակական գերակա խոսույթները, ըստ էության, գերազանցապես ձևավորվում են իշխող վերնախավի և մասնավորապես նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և վերջինիս գլխավորած «Արդարություն և զարգացում կուսակցության» (ԱԶԿ) կողմից[176]: Անկախ մեդիայի վրա սահմանափակումների, գրաքննության և ինքնագրաքննության, պետական գերակա խոսույթներից տարբերվող՝ այլախոհական տրամադրություններ ունեցող քաղաքական և հասարակական գործիչների հանդեպ բռնության շարունակական գործադրման պայմաններում[177] հանրային ու պետական նշանակության խոսույթները

[176] Yılmaz Z., Turner B., Turkey's deepening authoritarianism and the fall of electoral democracy, British Journal of Middle Eastern Studies, Volume 46, 2019, pp. 691-698.
[177] Գեղամյան Վ., «Խորհրդային Թուրքիան», Արևելք պարբերական, 16.04.2018, https://varuzhan.me/2018/04/16/sovietturkey/ (հասանելի է՝ 10.06.2021):

ձևավորվում են առաջին հերթին իշխող վերնախավի և պետական բարձրաստիճան պաշտոնյաների ելույթների միջոցով: Այնուհետև այդ ելույթները մերձիշխանական ու իշխանական մեդիայի և տեղեկատվական գործիքների միջոցով հանրայնացվում են՝ յուրաքանչյուր լսարանի համար ստանալով անհրաժեշտ ձևաչափն ու ձևակերպումները:

Ուստի «հայկական խոսույթի» բովանդակության էվոլյուցիան հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել խոսույթը ձևավորող հիմնական դերակատարի՝ նախագահ Էրդողանի ելույթները՝ դրանք ենթարկելով բովանդակային վերլուծության: Սույն աշխատանքում մենք մանրամասն դիտարկելու ենք 2019 թ. և 2021 թ. Էրդողանի հնչեցրած ապրիլյան ծավալուն ելույթները, որոնց կենտրոնական թեման հայկական թեմատիկան էր:

### *«Արխիվային ելույթ». փոփոխության մեկնարկը*

Երկկողմ հարաբերություններում թուրքական կողմի հռետորաբանության շրջադարձային փոփոխության մեկնարկը կարելի է համարել 2019 թ. ապրիլի 24-ին Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանի ծավալուն ելույթը[178], որում մի շարք կարևոր և նոր ձևակերպումներ կային Հայաստանի և հայության վերաբերյալ:

2019 թ. ապրիլի 24-25-ը «Թուրքական պատմագիտական ընկերությունը» (Türk Tarih Kurumu) և Թուրքիայի նախագահին կից պետական արխիվների տնօրինությունը[179] Անկարայում կազմա-

[178] “Amacı hakikati bulmak olan herkese arşivlerimizin kapıları sonuna kadar açıktır”, Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı, 24.04.2019, https://www.tccb.gov.tr/haberler/410/105090/-amaci-hakikati-bulmak-olan-herkese-arsivlerimizin-kapilari-sonuna-kadar-aciktir (հասանելի է՝ 04.07.2021):

[179] «Թուրքական պատմագիտական ընկերությունը» համարվում է Թուրքիայի պետական քաղաքականության իրականացման գլխավոր հաստատություննե-

կերպեցին «Մեր արխիվների զարգացումը, տեսլականը և դրանց ունեցած ներդրումը պատմական հետազոտություններում» անվանումով խորհրդաժողովը, որին բացման խոսքով ապրիլի 24-ին հանդես եկավ նախագահ Էրդողանը: Նա իր ելույթում, կարևորելով արխիվների նշանակությունը պետական համակարգի և ազգի համար, անդրադարձ կատարեց նաև հայկական թեմատիկային: Խոսելով արխիվներում պահվող փաստաթղթերի միջոցով «Հայկական հարցի» վերաբերյալ «ճշմարտություններ պատմելու» հնարավորության մասին՝ Էրդողանը նշեց հետևյալը. «*Այն հարցերից մեկը, որով մենք աշխարհին պատմում ենք ճշմարտություններ մեր արխիվների միջոցով, Հայկական հարցն է: Մենք տեսնում ենք, որ նրանք, ովքեր փորձում են մեզ դաս տալ ժողովրդավարության ու մարդու իրավունքների մասին՝ Հայկական հարցի օրինակով, հենց իրենք ունեն արյունոտ անցյալ*»[180]: Ելույթի այս հատվածի հասցեատերը միջազգային հանրությունն է, որը պարբերաբար անդրադառնում է Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությանը:

Սակայն Էրդողանի հիմնական ուղերձը կարելի է համարել նույն ելույթի մեկ այլ հատվածը. «*Շատ լավ գիտենք, որ Բոսնիայում,* ***Ղարաբաղում*** (այստեղ և այսուհետ ընդգծումը մերն է – Վ. Գ.)*, Արաքանում* ***միլիոնավոր անմեղ մարդկանց դաժանաբար կոտորողների*** *հանդեպ որոշները դիտողի դերում են եղել, իսկ որոշները ծածուկ աջակցել են նրանց: Միայն 1912 թ.-ից մինչև 1919 թ. Բալկաններում 2 միլիոն, արևելյան և հարավ-արևելյան* ***Անատո-***

րից մեկը՝ պատմության և պատմական անցյալի ձևավորման և խմբագրման համատեքստում: Այս կազմակերպությունը մշտապես ներգրավված է հակահայկական, մերժողական քաղաքականության մշակման աշխատանքներում: Տե՛ս՝ Սողոմոնյան Ա., Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծումը և գործունեությունը (1923-1970-ական թթ.), Երևան, 2005:

180 “Amacı hakikati bulmak olan herkese arşivlerimizin kapıları sonuna kadar açıktır”, Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı, ...:

*լիայում ևս շուրջ 2 միլիոն քաղաքացիական բնակչությանը միմիայն թուրք և մուսուլման լինելու* *պատճառով սպանել են: ...Չնայած այս պատմական ճշմարտություններին՝ մեզ Հայկական հարցի միջոցով անկյուն զցել ցանկացողների դեմքին ամեն առիթով պարտավոր ենք խփել իրենց արյունոտ անցյալը: Արևելյան Անատոլիայում մեր տարածաշրջանի մուսուլման բնակչությանը՝ առանց կին, երեխա տարբերակելու կոտորած* ***հայկական չեթեններին և նրանց աջակիցների աքտրը այդպիսի ժամանակաշրջանում ամենատեղին գործողությունն էր***: *Աքտրն այլ բան է, կոտորածը՝ այլ բան, ո՞ւմ եք խաբում... Տարածաշրջանի որոշ երկրներ և կազմակերպություններ հանցավորությամբ, բռնությամբ, ճնշումով և խաբեությամբ* ***փոխել են [տարածաշրջանի] ժողովրդագրությունը***: *...Մեր արխիվներում առկա արձանագրումները ողջ պարզությամբ վեր են հանում այս* ***տարածաշրջանի իրական տերերին***: *Աստվածն առաջ, մեր ձեռքին եղած արխիվային փաստաթղթերի օգնությամբ այս տարածքում արդարությունը նորից կվերահաստատվի*»:[181]

Նախագահ Էրդողանի ելույթի վերոնշյալ հատվածի բովանդակությունն ու ուղերձը հիմնված է առանցքային երեք հիմնական դրույթի վրա.

ա) Օսմանյան կայսրության (կարդա՝ Թուրքիայի) արդարացում գործած հանցանքում, գործած հանցանքի նշանակության պարզեցում և նվազեցում,

բ) հայերի իբր մեղավորության վարկածի հիմնում և մեղադրանքների վերագրում,

գ) տարածաշրջանի ժողովրդագրական նոր պատկերի ներկայացում:

181 Նույն տեղում:

Առաջին դրույթը Թուրքիայի ժխտողական քաղաքականության հիմնաքարային թեզերից է, որը մշտապես շրջանառվում է թուրքական կողմից՝ նպատակ ունենալով, ըստ էության, արդարացնել Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության գործողությունները՝ հայերին աքսորելու և կոտորելու գործում: Երկրորդ դրույթը, որը նույնպես մշակվել և շրջանառության մեջ է դրվել ժխտողական քաղաքականության մեկնարկից ի վեր, կոչված է հայերին վերագրել իբր ցեղասպանական գործողություններ, որոնց արդյունքում «սպանվել են միլիոնավոր թուրք մուսուլմաններ»: Փաստացի, Հայոց ցեղասպանության ժամանակ զոհ գնացած միլիոնավոր հայ նահատակներին Թուրքիայի նախագահը կոչում էր «հայկական չեթեներ»՝ հրոսակախմբեր՝ ըստ էության արդարացնելով Օսմանյան պետության կատարած ոճրագործությունները:

Այստեղ անհրաժեշտ է առանձնահատուկ անդրադառնալ Էրդողանի կիրառած լեզվին: Խոսելով իբր հայերի կողմից մուսուլմանական բնակչության կոտորածի մասին՝ Էրդողանը հայերի համար կիրառում է «չեթե» եզրը: Այս բառը ժամանակակից թուրքերենում ունի հստակ բացասական նշանակություն՝ խորհրդանշելով զինված հրոսակախմբի և ուղիղ ասոցացվելով հայերի ու մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանում գործած ֆիդայական խմբերի անդամների հետ: Այդպիսով, պետական հռետորաբանության միջոցով հայերի մասին հանրային խոսույթում որպես առանձին իդեոլոգեմ արմատավորվում է «հայ չեթեներ» (Ermeni çeteleri - «հայ հրոսակներ/հրոսակախմբեր») բառակապակցությունը, ինչը հեշտորեն թիրախավորում է հայ հանրույթն ընդհանրապես:

Հայերի թիրախավորման և նրանց հանդեպ «ատելության խոսքի» գեներացման տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել, որ Էրդողանի կիրառած հռետորաբանությունը ոչ միայն վերաշա-

բաղրում է նախկինում շրջանառվող թեզերն ու պիտակավորումները, այլև «հարստացնում է» հակահայկական խոսույթը նոր շեշտադրումներով: Այսպես, վերոնշյալ ելույթում հատուկ շեշտադրում է կատարվում իբր հայերի կողմից կոտորածի զոհ դարձած մուսուլմանների հանգամանքի վրա («Müslüman ahali»), ընդ որում՝ ընդգծելով կանանց և երեխաներին կոտորելու «փաստը»: Հակահայկական խոսույթում իսլամական գործոնի ավելացմամբ հայերի հանդեպ ոչ միայն էթնիկական հիմքով, այլ նաև կրոնական հիմքով ատելության գեներացման հնարավորություն է ստեղծվում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակահայկական խոսույթը թարգմանվում և տարածվում է ոչ միայն Թուրքիայի ներքին լսարանում, այլև Թուրքիայի սահմաններից դուրս (հատկապես իսլամադավան պետություններում և համայնքներում), ապա այսպիսի հռետորաբանության կիրառումը փորձ է ոչ միայն թիրախավորել հայերին, այլև վերջիններիս ներքաշել հակաիսլամական զլոբալ խոսույթի մեջ՝ այդպիսով նպաստելով հակահայկական տրամադրությունների ստեղծմանը իսլամական միջավայրում: Տեղին է նշել, որ վերջինս մշտապես հանդիսացել է թե՛ Թուրքիայի, թե՛ Ադրբեջանի հանրապետությունների հակահայկական քաղաքականության կարևոր նպատակներից մեկը[182]: 2019 թ.-ից ի վեր անձամբ Էրդողանի կողմից «մուսուլմաններին կոտորող» հայի կերպարը շարունակվել է հանրայնացվել տարբեր առիթներով (տե՛ս ստորև):

Էրդողանի ելույթի խնդրո առարկա հատվածի երրորդ հիմնական դրույթը կապված է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի աղճատման թուրքական փորձերի հետ: Այսպես, փորձ

---

[182] Մանրամասն տե՛ս՝ Չոբանյան Գ., Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը «Իսլամական համագործակցություն» կազմակերպության շրջանակներում, Արևելագիտության հարցեր, № 9, 2015, էջ 268-286:

է արվում ոչ միայն հայերին ներկայացնել որպես տարածաշրջանի փոքրամասնություն, այլև որպես ոչ բնիկ ժողովուրդ: Պետք է նշենք, որ այս դրույթը ևս որպես քարոզչական հիմնական թեզ մաս է կազմում Ադրբեջանի հակահայկական քարոզչության առանցքային խոսույթի[183]:

Հիշատակության է արժանի նաև Էրդողանի ելույթում հնչած կոչը՝ ուղղված Հայաստանին. «*Մենք բացել ենք մեր արխիվները: Հե՜յ Հայաստան, դու էլ ունես, դուք էլ բացեք, եթե երրորդ երկրներում կա, նրանք էլ թող բացեն: Թո՛ղ պատմաբանները գան, աշխատեն: Հետո էլ մենք՝ քաղաքական գործիչներս կխոսենք: Մեր արխիվների դռները լայնորեն բաց են բոլոր նրանց համար, ովքեր փնտրում են ճշմարտությունը*»: Թեև Թուրքիան նախկինում ևս Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում որպես հակափաստարկ ներկայացրել է արխիվներում համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը, սակայն այս անգամ նման կոչի համատեքստը այլ էր:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ Էրդողանի ելույթում հնչած գլխավոր երեք դրույթները գրեթե մշտապես կիրառվել են Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության շրջանակներում[184], սակայն իշխող «Արդարություն և զարգացում կուսակցության»՝ Թուրքիայի ղեկը ստանձնելուց հետո (2002 թ.-ից ի վեր) երկրի բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարության կողմից այս դրույթների ընդգծված կիրառության առաջին դեպքը վերոնշյալ ելույթն է: Վերջին հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ ի դեմս խնդրո առարկա

---

[183] Տե՛ս Վրթանեսյան Կ., Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը, Նորավանք հիմնադրամ, 29.05.2009թ., http://www.noravank.am/arm/-articles/detail.php?ELEMENT_ID=2219 ( Հասանելի է՝ 04.07.2021):

[184] Տե՛ս՝ Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության նկատմամբ թուրքական քաղաքականության որոշ առանձնահատկությունների շուրջ (1965 և 2015թթ.), Հայագիտության հարցեր, 2015, թիվ 3 (6), էջ 11-21:

ելույթի՝ գործ ունենք Հայաստանի և հայության նկատմամբ Թուրքիայի բարձրագույն ղեկավարության հռետորաբանության և խոսույթի գիտակցված փոփոխության հետ։ Սա էլ, իր հերթին, խորհրդանշում էր Թուրքիայի պետական քաղաքականության ծրագրային փոփոխություն Հայաստանի հանդեպ ունեցած դիրքորոշման մեջ։

Վերոբերյալ ելույթի կարևոր լինելու մասին են վկայում նաև այլ հանգամանքներ։ Առկա հիմնական շեշտադրումների, ինչպես նաև ծավալի առումով նախագահ Էրդողանի ելույթը գլխավորապես կոչված էր անդրադառնալու հայկական թեմային։ Այս տեսանկյունից, կարծում ենք, պատահական չէր ընտրված թե՛ ելույթի օրը (ապրիլ 24) և թե՛ միջոցառման միջավայրն ու ոճը։ Հայոց ցեղասպանության շուրջ առկա հայ-թուրքական քննարկումներում արխիվը հանդիսանում է գլխավոր գործոններից մեկը[185], ուստի եթե միջոցառումը դիտարկենք որպես ինքնին ամփոփ ուղերձ, ապա կարելի է ասել, որ այն խորհրդանշում էր Թուրքիայի համար արխիվի՝ որպես ցեղասպանությունը հերքելու գլխավոր գործիք հանդիսանալը, ուստի Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման օրը Թուրքիային ուղղված մեղադրանքներին պատասխանելու համար անհրաժեշտ է ցուցադրել այդ «գործիքը»։

Անհրաժեշտ է հավելել նաև այն հանգամանքը, որ թե՛ մինչև 2019 թ., թե՛ 2019-ից հետո Էրդողանը յուրաքանչյուր ապրիլ 24-ին[186] ընդառաջ հանդես էր գալիս հատուկ ելույթով, որում անդրադարձ էր կատարվում «1915 ցավալի դեպքերին» և որում առկա էին «ընդհանուր ցավի» մասին հիշատակումներ՝ առանց հայերի

[185] Թուրքական կողմը մշտապես առաջարկում է «բացել արխիվները» և դրանց միջոցով «պարզել, թե ինչ է իրականում տեղի ունեցել 1915-ին»՝ «պատմությունը թողնելով պատմաբաններին»։

[186] Էրդողանը «ապրիլքսանչորսյան ուղերձներով» հանդես է եկել 2004 թ., 2014-2018 թթ. և 2021 թ.։

հացեին ինչեցված մեղադրանքների (սակայն այդ ուղերձները շարունակում էին գտնվել թուրքական ժխտողականության ուղեծրում)։ Փաստացի, 2019 թ. Էրդողանի՝ արխիվներին նվիրված խորհրդաժողովին հնչեցրած բացման խոսքը փոխարինեց ավանդական դարձած «ապրիլքսանչորսյան ելույթին»։ Ուստի, կարելի է եզրակացնել, որ բուն խորհրդաժողովը կազմակերպվել էր՝ առաջին հերթին նպատակ ունենալով անդրադառնալու հայկական թեմային և ազդարարելու պետական մակարդակով հակահայկական քարոզչության նոր փուլի մեկնարկը։

Վերոնշյալ վարկածի օգտին է խոսում նաև խորհրդաժողովի ծրագիրը[187]։ Այսպես, համաձայն ծրագրի՝ երկօրյա խորհրդաժողովի առաջին օրվա միակ և գլխավոր (պլենար) նիստը վերնագրված էր «Հայկական վայրագությունները Անատոլիայում» (Anadolu’da Ermeni Mezalimi), մինչդեռ արխիվային գործին վերաբերող տարբեր այլ նիստերը նախատեսված էին խորհրդաժողովի երկրորդ օրը։ Պլենար նիստում հնչել է երեք ելույթ՝ «Էրզրումում և շրջակայքում մուսուլման-թուրքերի ցեղասպանությունը և պեղումները», «Անատոլիայի հարավային շրջաններում հայերի՝ մուսուլմանների դեմ ուղղված կոտորածները», «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արևելյան ճակատում հայկական ահաբեկչությունը և մուսուլման բնակչության բռնագաղթը»։ Այս ելույթների վերնագրերն անգամ հուշում են, որ դրանք հանդիսանում են հակահայկական քարոզչական ելույթներ։ Նկատենք, որ դրանք, ըստ էության, առանձին-առանձին անդրադառնում են նախագահ Էրդողանի վերոնշյալ ելույթի հիմնական թեզերին։ Ուստի կարելի է արձանագրել, որ այս զեկույցները նպա-

[187] Arşivlerimizin Gelişimi, Vizyonu ve Tarih Araştırmalarına Katkısı Sempozyumu, Program: https://ttk.gov.tr/wp-content/uploads/2019/04/arsiv-semp-program-2019-1.pdf (հասանելի է՝ 04.07.2021)։

տակ ունեին գիտական գործիքակազմի միջոցով հիմնավորելու նախագահի հնչեցրած թեզերը[188]:

Հաշվի առնելով տեղի ունեցած իրադարձության մասշտաբայնությունը՝ նախագահ Էրդողանի կողմից հրապարակված հիմնական թեզերը, ինչպես նաև միջոցառման շուրջ առկա խորհրդանշականությունը (սիմվոլիզմ), կարելի է նշել, որ այս ելույթը նախանշեց Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ ժխտողական քաղաքականության նոր շրջափուլի մեկնարկը: Ելույթում հայերի հասցեին հնչած մեղադրանքները ուրվագծեցին նաև հակահայկական քաղաքականության և հատկապես քարոզչության հիմնական թեմաներն ու թեզերը:

Հետագա տարիներին վերոնշյալ քաղաքականության շրջանակներում կատարվեցին մի շարք քայլեր, որոնք կոչված էին ինստիտուցիոնալ մոտեցմամբ ձևավորել հակահայկական (մերժողական) ինտելեկտուալ արտադրանք, որը պետք է օգտագործվեր առաջին հերթին պետական քարոզչության և հանրային խոսույթի ձևավորման մեջ: Այսպես, 2019-2021 թթ. ընթացքում Թուրքիայի նախագահի աշխատակազմի հանրային կապերի տնօրինության կողմից կազմակերպվել են տարաբնույթ գիտաժողովներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, հրատարակվել են գրքեր, ալբոմներ, որոնք տարբեր դիտանկյուններից անդրադարձել են Հայկական հարցին՝ առանցքում պահելով ժխտողական մոտե-

[188] Այս համատեքստում հետաքրքրական է նաև «Թուրքական պատմագիտական ընկերության» պաշտոնական կայքում զետեղված խորհրդաժողովի հայտարարության մեջ այն նշումը, որ «խորհրդաժողովում լինելու է նաև «Հայերի վայրագությունները Անատոլիայում» վերտառությամբ հատուկ նիստ»: Տե՛ս Ankara’da Arşivlerimizin Gelişimi, Vizyonu ve Tarih Araştırmalarına Katkısı Sempozyumu Düzenlenecek, Türk Tarih Kurumu: https://www.ttk.gov.tr/etkinlikler/ankarada-arsivlerimizin-gelisimi-vizyonu-ve-tarih-arastirmalarina-katkisi-sempozyumu-duzenlenecek/ (հասանելի է՝ 04.07.2021):

ցումները և պիտակավորելով հայերին[189]: Դարձյալ նախագահի աշխատակազմի կողմից 2019 թ. հիմնվել և գործարկվել է «1915.gov.tr» պետական տեղեկատվական հարթակը, որը լայնորեն ներկայացվում է որպես «Թուրքիան վարկաբեկող քարոզչության դեմ պայքարի միջոց»[190]: Անգլալեզու այս հարթակը ներկայացնում է 1915 թ. և Հայոց ցեղասպանության աղավաղված պատմությունը, իսկ առանձին մի բաժին նվիրված է «հայկական ահաբեկչությանը»[191]:

Հակահայկական քարոզչության շրջանակներում նշանակալի իրադարձություն էր 2021 թ. ապրիլի 20-ին Թուրքիայի նախագահի աշխատակազմի հանրային կապերի տնօրինության կողմից կազմակերպված «1915 թ. դեպքերը» միջազգային գիտաժողովը, որի ժամանակ իր բացման խոսքում Թուրքիայի նախագահի խորհրդական, հանրային կապերի տնօրինության ղեկավար Ֆահրեթթին Ալթունը նշեց. «*Առաջին աշխարհամարտի ժամանակ Սարիղամիշում մեր հազարավոր զինվորներ սառելով զոհվեցին. Կովկասյան ճակատում օսմանյան տարածքների վրա հարձակված ռուսական բանակի հետ բախման ժամանակ մեր ուժերին* ***մեջքից հարվածեցին թշնամու հետ համագործակցող հայկական չեթեները****: Երբ օսմանյան ազգի մաս կազմող տարբեր հանրույթներ հայրենիքի համար համատեղ պայքարում էին, այդ*

[189] Այս միջոցառումներում թուրքական կողմը հատուկ շեշտ է դնում, այսպես կոչված, «հայկական ահաբեկչության» թեմայի վրա, որի շրջանակներում «հերոսացվում» և «սրբացվում» են թուրք դիվանագետները, որոնք սպանվել են 1970-1980-ականներին՝ հայկական զինյալ վրիժառուական խմբերի իրականացրած գործողությունների ժամանակ, տե՛ս, օրինակ՝ https://www.iletisim.gov.tr/turkce/-stratejik_iletisim_calismalari/detaylar/cumhurbaskanligi-iletisim-baskanligindan-sehit-diplomatlar-sergisi-23-4-21

[190] 1915 Olayları, TC Cumhurbaşkanlığı İletişim Başkanlığı, https://www.iletisim.gov.tr/turkce/stratejik_iletisim_calismalari/detaylar/1915-olaylari (հասանելի է՝ 10.08.2021)

[191] https://1915.gov.tr/armenian-terror.html (հասանելի է՝ 10.08.2021)

*նույն ժամանակ որոշ շրջաններում հայտնվեցին ուժեր, որոնք համագործակցում էին թշնամիների հետ*»[192]: Այստեղ ևս կարելի է տեսնել «դավաճանության» և «զինված հրոսակախմբերի» վերաբերյալ թեզերի կիրառումը պետական պաշտոնական հռետորաբանության մեջ:

Թուրքիայի հակահայկական պաշտոնական քաղաքականության ինստիտուցիոնալիզացման տեսանկյունից կարևոր իրադարձություն կարելի է համարել նաև 2021 թ. հուլիսին նախագահ Էրդողանի կողմից ստորագրած հրամանը, որով Ստամբուլի համալսարանին կից հիմնվեց «Ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների ուսումնասիրության միջազգային ինստիտուտ»[193]:

## Պատերազմից հետո. հակահայկական քաղաքականության խորացում

Թուրքիայի հակահայկական պետական խոսույթի և հռետորաբանության զարգացման ժամանակակից փուլի ձևավորման ավարտը խորհրդանշական առումով կարելի է համարել 2021 թ. ապրիլի 26-ին նախագահ Էրդողանի մեկ այլ ելույթ, որում նախորդիվ բերված քարոզչական թեզերը ներկայացվում են առավել բյուրեղացած տարբերակով՝ այդ թվում հաշվի առնելով նաև Արցախյան երրորդ պատերազմից հետո տարածաշրջանում և մասնավորապես Հայաստանի և Թուրքիա-Ադրբեջան երկյակի միջև ձևավորված իրադրությունը:

---

[192] İletişim Başkanı Altun: "Sözde 'Ermeni soykırımı' iddiası, sadece siyasi hesaplardan beslenen bir iftiradır", TC Cumhurbaşkanlığı İletişim Başkanlığı, 20.04.2021, https://www.iletisim.gov.tr/turkce/stratejik_iletisim_calismalari/detaylar/iletisim-baskani-altun-sozde-ermeni-soykirimi-iddiasi-sadece-siyasi-hesaplardan-beslenen-bir-iftiradir (հասանելի է՝ 10.07.2021):

[193] Cumhurbaşkanı Kararı 4297, Resmi Gazete, 15 Temmuz, 2021, https://www.resmi-gazete.gov.tr/eskiler/2021/07/20210715-16.pdf (հասանելի է՝ 10.08.2021):

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի կողմից ապրիլքսանչորսյան ուղերձում ցեղասպանություն եզրի կիրառումից երկու օր անց Թուրքիայի նախագահ Էրդողանը կառավարության նիստից հետո հանդես եկավ մի ծավալուն ելույթով[194], որի կենտրոնական թեման նորից դարձավ Հայկական հարցը՝ իր բոլոր դրսևորումներով: Անդրադառնալով նախագահ Բայդենի ուղերձին՝ Էրդողանը նշեց, որ դրանում տեղ գտած արտահայտությունները «հայկական ծայրահեղական շրջանակների» և «Թուրքիայի դեմ հանդես եկող խմբերի» ճնշման արդյունք են: Այնուհետև Էրդողանը սկսում է խնդրի էությունը «հակիրճ կերպով բացատրել իրենց երկրում և աշխարհում այս հարցում դեռևս շփոթի մեջ գտնվողների» համար:

Ելույթում տեղ գտած պնդումներն ու արտահայտությունները շարունակում են 2019 թ. քննարկված ճառում ձևակերպված թեզերը: Այսպես, ելույթում առանցքային տեղ են զբաղեցնում հայերի կողմից իբր կոտորածի ենթարկված անմեղ մուսուլմանների վերաբերյալ պնդումները. «*Իրականում, վերջին երկու դարերի ընթացքում ամենամեծ քաղաքացիական կորուստները և դրա հետ կապված ժողովրդագրական շարժերը տեղի են ունեցել օսմանյան տարածքներում, այսինքն՝ մեր հայրենիքում: Բալկաններից մինչև Կովկաս ձգվող օսմանյան տարածքների բնակչության մոտավորապես կեսը հանդիսացող 10 միլիոն մարդկանց կեսը մահացավ, մյուս կեսը՝ բռնագաղթի ցավը վերապրեց: Ավելին, սա մենք չենք ասում, հենց արևմտյան պատմաբաններ են ասում: Եթե ուշադրություն դարձնեք, այս 10 միլիոն մարդու հետ կապված* ***ո՛չ մի զինված հրոսակախմբի լուսանկար****, ո՛չ իրենց հետևից թողած արյունոտ հետքեր, ո՛չ ամոթ պատճառող որևէ*

[194] Kabine Toplantısı'nın Ardından Yaptıkları Konuşma, T.C. Cumhurbaşkanlığı, 26.04.2021, https://www.tccb.gov.tr/konusmalar/353/127733/kabine-toplantisi-nin-ardindan-yaptiklari-konusma (հասանելի է՝ 10.08.2021):

*այլ պատմություն չեք տեսնի ու չեք զտնի: Սակայն չեք հանդիպի նաև այս նույն մարդկանց հետ կապված հուշերի, լոբբիստների, խորհրդարանական որոշումների կամ իրենց իրավունքների վերականգնմանն ուղղված որևէ գործողության: Կան միայն սրտերը տխրեցնող, աչքերից հոսող արցունքները կանգնեցնելը անհնար դարձնող այն ցավոտ հուշերը, որ իրենց թոռներին պատմել են պապերը:* ***Որովհետև այս մարդիկ թուրք են, որովհետև այս մարդիկ մուսուլման են:*** *Այդ պատճառով արևմուտքցու աչքերում կարեկցանքի արժանի չեն:... Կարիք չկա նույնիսկ մեր սահմաններից դուրս գալ. Ադանայից մինչև Այնթափ ու Մարաշ, Իզմիրից Աֆյոն, Ստամբուլից Չանաքքալե, Կարսից Արդվին մեր ամեն մի քաղաքը եթե իր կորուստներին հետամուտ լինի, արդեն բավական է: ...Հայկական հարցում Արևմուտքի դիրքորոշման և ահաբեկչական կազմակերպությունների դեմ ցուցաբերած երեսպաշտության վերջն ահա այսպիսի ճանապարհի է հանգեցնում*»[195]:

Ելույթի հաջորդ հատվածներում Էրդողանը վերևում նկարագրված «թուրքերի ու մուսուլմանների կոտորածների» համար մեղավորությունը հստակորեն վերագրում է հայերին՝ վերջիններիս պիտակավորելով «չեթե» բառով. «*Անատոլիան մեր նախնիների իշխանության ներքո դարեր շարունակ տարբեր ծագման ու հավատի մարդկանց մի տարածք էր, ուր վերջիններս ապրում էին խաղաղության մեջ: Բազմաթիվ հանրույթների պես հայերն էլ այդ շրջանում ստացան կրոնական ազատություններ, հզորացավ նրանց սոցիալական կարգավիճակը: Խաղաղության այս մթնոլորտը պահպանվեց մինչև այն իրադարձությունը, որը մեր պատմության մեջ հայտնի է 93-ի պատերազմ անվամբ*[196]: *Օսմանյան*

---

[195] Նույն տեղում:

[196] Օսմանյան և թուրքական պատմագրական ավանդույթում «93-ի պատերազմ» է կոչվում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, քանի որ պատերազմի

*վերջին շրջանում երկրում շատ տարրեր, արևմուտքցիների կող-մից սադրանքի ենթարկվելով, ոգևորվելով ու զինվելով, մեր դեմ ապստամբեցին: Բալկանյան հողերը, որոնց վրա այսօր բազմա-թիվ պետություններ են տեղ գտել, ահա այդպես սկսված ասի-մետրիկ պատերազմներով երկրից անջատվեցին: **Արևելքում էլ նույն սցենարը ցարական Ռուսաստանի մասնակցությամբ հայերի միջոցով էին իրականացնում:** Մինչև Առաջին աշխարհամարտը շուրջ 40 ապստամբություն իրականացրած հայկական հրոսա-կախմբերը այս շրջանում դուրս եկան վերահսկողությունից և մեծ կոտորածներ իրականացրեցին: Արևմուտքի քաղաքական ու տն-տեսական, իսկ ռուսների ռազմական օժանդակությամբ **հզորա-ցած հայկական կազմավորումները հարձակվում էին գյուղերի ու քաղաքների վրա և իրենց առջև հայտնված յուրաքանչյուրին՝ ա-ռանց տարբերակելու կին, երեխա, ծեր, սպանում էին**: Այս հրոսա-կախմբերը, որոնց անդամների ընդհանուր թիվը 150 հազարից 300 հազար էր, ակտիվորեն մեր դեմ պատերազմել է նաև մեր հո-ղերի վրա հարձակված ռուսական բանակի շարքերում: Վանից Կարս, Էրզրումից Անատոլիայի խորքերը ընկած բազմաթիվ վայ-րերում **հայկական հրոսակախմբերի կողմից սպանվել է թուրք և քուրդ լիովին խաղաղ բնակչությունը, որոնց թիվը հաշվվում է մի-լիոններով**»*[197]: Ինչպես կարելի է նկատել, դարձյալ շեշտադրվում է հայերի կողմից (ընդ որում՝ բազմամարդ խմբերի) թուրք և քուրդ խաղաղ բնակչության իբր կոտորածի հանգամանքը, ինչպես նաև առերևույթ դավաճանության մասին թուրքական թեզը: Այս թեզի շահարկումը տեղ է գտնում ելույթի այլ հատվածներում ևս. «*Հա-մընդհանուր զորահավաքի պատճառով զենք բռնելու ունակ տղամարդկանց մեծամասնությունը ճակատում էր, ուստի թի-*

---

մեկնարկի տարեթիվը համընկնում էր իսլամական (Հիջրայի) օրացույցի 1293 թվականի հետ:

197 Kabine Toplantısı’nın Ardından Yaptıkları Konuşma, T.C. Cumhurbaşkanlığı,...

*կունքում միայն անպաշտպան կանայք, երեխաներ ու տարեցներ էին մնացել: Հայկական չեթեները չեն բախվել թուրքական բանակի կամ քաղաքները պաշտպանող զինված թուրքական ժանդարմների հետ, այլ միայն* ***սպանել են անմեղ ու անպաշտպան մարդկանց:*** *Օրինակ՝ Վանի Ջեվե գյուղում ապրող 2500 քաղաքացիական բնակչությունը սպանվեց հայ չեթեների կողմից, և որևէ մեկը կենդանի չմնաց: Միայն Մուշում 1 տարվա ընթացքում մեր 20 հազար հայրենակիցներ կոտորածի ենթարկվեցին: Նույն թափով հայ չեթեները չխորշեցին Տրապիզոնի շրջանի հույն և Հաքքարիի հրեա օսմանյան քաղաքացիներին սպանելուց:... Սակայն նորից եմ կրկնում.* ***հայ չեթեները սպանել են միայն Անատոլիայի անպաշտպան թուրքերին և քրդերին, իսկ Կովկասում՝ չերքեզներին:*** *Հայ չեթեները հպարտությամբ պատմում էին իրենց իրականացրած կոտորածների և հարյուր հազարավոր մարդկանց բռնազաղթի ենթարկելու մասին*»[198]:

Էրդողանի կողմից քրդերի, հրեաների, հույների և չերքեզների հիշատակումը որպես իբր հայերի կողմից իրականացված կոտորածների զոհերի ոչ միայն պատմության խեղաթյուրում է: Այդպիսի պնդումները նման բարձր մակարդակում կարելի է դիտարկել որպես միջէթնիկական ատելություն և թշնամանք հրահրելու փորձ հայերի և վերոնշյալ ժողովուրդների միջև: Հաշվի առնելով այդ ժողովուրդների շատ ներկայացուցիչների հստակ դիրքորոշումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում, ինչպես նաև Մերձավոր Արևելքի տարածաշրջանում Հայաստանի ու հայության հետ վերջիններիս շահերի որոշակի համընկման հնարավորությունների առկայությունը, Էրդողանի կողմից այսպիսի հայտարարությունները և նման խոսույթի ձևավորումը նս ուղղված է ոչ միայն ներքին և հայկական լսարաննե-

[198] Նույն տեղում:

րին, այլև ունի հստակ տարածաշրջանային աշխարհաքաղաքական ենթատեքստ:

Ելույթում հայերի կողմից իբր իրականացված կոտորածների մասին պնդումներն ամփոփվում են հետևյալ կերպ. «*Մեր երկրում բազմաթիվ վայրերում կան հայերի կողմից կոտորված թուրքերի եղբայրական գերեզմաններ, սակայն ոչ մի տեղ չեք կարող հանդիպել հայերի եղբայրական գերեզմաններ, քանի որ այդպիսի իրադարձություն տեղի չի ունեցել*»[199]:

Հաջորդիվ Էրդողանը սահմանում է ապրիլ 24-ի նշանակությունը Թուրքիայի համար. «*Շատ լավ, ի՞նչ է եղել ապրիլի 24-ին: Իրականում ապրիլի 24-ին մարդկային ողբերգության առումով ոչ մի բան չի եղել:* ***1915 թվականի ապրիլի 24-ն ընդամենը Օսմանյան կայսրության դեմ պատերազմող երկրների հետ միավորված և մեր դեմ գործունեություն ծավալած դաշնակցական, հնչակյան և ռամկավար և այլ նմանատիպ կառույցների փակման և դրանց 235 ղեկավարի ձերբակալման օրն է:*** *Այդ ժամանակ դեռևս խոսք չկար որևէ կորստի մասին, քանի որ չկար ոչ տեղահանության մասին կանոնը, ոչ էլ դրա կիրառումը: Մեր երկրի հայ համայնքը, ինչպես որ աշխարհասփյուռ հայությունը, այս ամսաթիվը ընդունել է որպես սեփական ցավերի հիշատակի օր:* ***Մենք էլ, չնայած գիտենք, թե ինչ է եղել այդ օրը, հարգանք ենք ցուցաբերել հայկական***

---

[199] Նույն տեղում:

Անհրաժեշտ է նշել, որ նախագահ Էրդողանի կողմից նման պնդումը ամբողջությամբ հակասում է ճշմարտությանը և Հայոց ցեղասպանության եղելության անհերքելի փաստերից մեկի ժխտման հերթական փորձն է: Այսպես, Արևմտյան Հայաստանի տարածքում (ներկայիս Թուրքիայի Հանրապետություն) հայտնի են մի շարք եղբայրական գերեզմաններ (տե՛ս, օրինակ, Չունքուշ քաղաքի մի քանի հազար հայ բնակչության սպանդը քաղաքի մոտ գտնվող Դուդան դերե ձորում (տե՛ս՝ Mouradian Kh., Alchemy near the Chasm of Death: Visiting a Mass Grave of the Armenian Genocide, Armenian Weekly, https://armenianweekly.com/2012/06/19/alchemy-near-the-chasm-of-death-visiting-a-mass-grave-of-the-armenian-genocide/ (հասանելի է՝ 28.08.2021): Այս թեմայով տե՛ս նաև Կարապետյան Ս., Եղեռնի հուշարձաններն Արևմտյան Հայաստանում, Վարձք, N9, 2013, էջ 12-15:

***համայնքի այդ ընտրության հանդեպ,*** *և տևական ժամանակ է, ինչ վերջիններիս ուղերձ ենք հղում՝ կիսելով իրենց ցավը*»[200]։ Այս հատվածում Էրդողանը ներկայացնում է իր և իր ղեկավարած կառավարությունների կողմից ապրիլի 24-ին հայերին ու Հայաստանին ուղերձների հիմնավորումը։ Հետաքրքրական է, որ «ընդհանուր ցավի» մասին հիշատակումներով հայտնի այդ ուղերձները, որոնք հաճախ դիտարկվում կամ ներկայացվում են որպես Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության հարցում ժխտողական քաղաքականության փոփոխության օրինակ[201], իրականում չեն արտահայտում թուրքական ռազմաքաղաքական ղեկավարության իրական կարծիքը («*Մենք էլ, չնայած գիտենք, թե ինչ է եղել այդ օրը, հարգանք ենք ցուցաբերել հայկական համայնքի այդ ընտրության հանդեպ...*») և ընդամենը տուրք են իրավիճակային ու քաղաքական անհրաժեշտության։

Էրդողանի ապրիլյան ելույթում առկա էին բազմաթիվ հակագիտական պնդումներ, որոնցով փորձ էր արվում խեղաթյուրված ներկայացնել տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը։ Եթե նախկինում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հնչող ելույթներում գերազանցապես անդրադարձ էր կատարվում Արևմտյան Հայաստանի տարածքի ժողովրդագրական պատկերին, ապա քննարկվող ելույթում փորձ է արվում խեղաթյուրել նաև Հայաստանի Հանրապետության տարածքի պատմական ժողովրդագրությունը. «*Այնուամենայնիվ, մյուս կողմից գոյություն ունի այսպիսի ճշմարտություն. ոչ շատ վաղուց՝ մեկ դար առաջ,* ***այն տարածքում, որտեղ այսօր գտնվում է Հայաստան պետությունը, բնակչության 80 տոկոսից ավելին կազմում էին մու-***

---

[200] Kabine Toplantısı'nın Ardından Yaptıkları Konuşma, T.C. Cumhurbaşkanlığı,...

[201] Օր.՝ Էլյայաղի Հ., Հայոց ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական խոսույթի զարգացումն Էրդողանի պաշտոնավարման շրջանում, Հայկական Քաղաքագիտական Հանդես, 2(8), 2017, էջ 97-118։

***տուլմանները։ Սա շատ կարևոր է։*** *Մինչդեռ այսօր այդ նույն տարածքում թուրքերից ու չերքեզներից բաղկացած մուսուլման բնակչությունից գրեթե ոչ մեկ չի մնացել։ Շուրջ 30 տարի առաջ գրավված Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի քաղաքներում տեղի ունեցածները ևս քաջ հայտնի են*»։

Չանդրադառնալով ժողովրդագրական պատկերի խեղաթյուրվածությանը՝ էական է արձանագրել, թե ինչ նշանակություն ունի նման պնդումը ներկայիս խոսույթում։ Հայաստանի Հանրապետության տարածքում հայկական բնիկ բնակչության փոխարեն իսլամական մեծամասնության առկայության մասին պնդումները էականորեն մեծացնում են Թուրքիայի հակահայկական քարոզչության ընդգրկումը։ Մասնավորապես, այսպիսի պնդումները հարևան պետության ղեկավարի կողմից կարելի է դիտարկել որպես ՀՀ սուվերեն տարածքի հանդեպ հավակնությունների լեգիտիմացում. եթե Հայաստանի բնակչությունը մեկ դար առաջ կազմում էին թուրքերն ու չերքեզները, ուրեմն կասկածի տակ են առնվում հայկական պետականության հիմքերը՝ որպես իրենց պատմական հայրենիքում ապրող հայերի պետական կազմավորում։ Ավելին, այս թեզի շարունակական շրջանառման պարագայում կարելի է ակնկալել նաև ՀՀ սուվերեն տարածքի հանդեպ ավելի առարկայական ոտնձգությունների իրականացում (օր.՝ տարաբնույթ հայրենակցական միությունների ստեղծում, միջազգային ատյաններում հայցերի բարձրացում և այլն)։ Տեղին է նշել, որ կեղծ ժողովրդագրական տվյալները հիմք են կազմում նաև Ադրբեջանի Հանրապետության կողմից ՀՀ սուվերեն տարածքի հանդեպ ռազմաքաղաքական ամենաբարձր մակարդակի հավակնություններ ներկայացնելու համար, որոնք Արցախյան երրորդ պատերազմից հետո առավել առարկայական են դարձել։ Այսպես, Ադրբեջանի Հանրապետության նախագահը ոչ միայն ՀՀ սուվերեն տարածքի տարբեր հատվածներ (մասնա-

վորապես՝ Երևանը, Սևանը և Սյունիքը) կոչում է Ադրբեջանի պատմական հողեր, որտեղ «ապրել են ադրբեջանցիներ»[202], այլև կոչ է անում ՀՀ տարածքի բնակավայրերի համար կիրառել տարբերնույթ թյուրքական անվանումներ[203]: Փաստորեն, ի դեմս ՀՀ տարածքի պատմական ժողովրդագրական պատկերի շուրջ թուրք-ադրբեջանական քարոզչության գործ ունենք Թուրքիայում և Ադրբեջանում ոչ միայն հակահայկական, այլև նվաճողական և ծավալապաշտական տրամադրությունների խրախուսման հետ: Ավելորդ է նշել, որ վերոնշյալ երկրներում, հաշվի առնելով քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, հասարակական կարծիքի ձևավորման գործում երկրի բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարության հայտարարությունները հանդիսանում են առանցքային:

Տեղին է դիտարկել քննարկվող ելույթում կիրառված բառապաշարը: Էրդողանն իր խոսքում «հայկական չեթեներ» (*Ermeni çeteleri*) արտահայտության կողքին պարբերաբար կիրառում է նաև «հայկական ահաբեկչություն» (*Ermeni terörü*) և «հայկական ստեր» (*Ermeni yalanları*) արտահայտությունները, որոնք բոլորն էլ որպես իդեոլոգեմներ լսարանի մոտ առաջացնում են կայուն կարծրատիպեր հայերի վերաբերյալ՝ այդպիսով հանդիսանալով «ատելության խոսքի» հերթական դրսևորումներ: Ավելին, «հայկական ահաբեկչության» մասին հատվածում Էրդողանը հիշատակում է նաև «Քրդստանի բանվորական կուսակցության» (PKK)

[202] Алиев: «Придет время и мы вернемся в Ереван», Медиамакс, 13.04.2021, https://mediamax.am/ru/news/region/42729 (հասանելի է՝ 20.08.2021):

[203] President Aliyev: Ancient Azerbaijani Settlements in Present-day Armenia Should Be Called by Original Names, Caspian News, 23.08.2021, https://caspiannews.com/-news-detail/president-aliyev-ancient-azerbaijani-settlements-in-present-day-armenia-should-be-called-by-original-names-2021-8-23-0/ (հասանելի է՝ 28.08.2021): Ի. Ալիևի ամբողջական ելույթը տե՛ս՝ İlham Əliyev və birinci xanım Mehriban Əliyeva Kəlbəcər və Laçın rayonlarında olublar, 16.08.2021, https://president.az/articles/52742 (հասանելի է՝ 28.08.2021):

գործունեությունը՝ երկուսն էլ որակելով որպես ահաբեկչություն և դրանք առերևույթ կապելով մեկմեկու *(«…մեկ դար առաջ հայկական կազմակերպությունների թողած կետից վերջին 40 տարում PKK ահաբեկչական կազմակերպության միջոցով…»)*:[204]

Ավելորդ չէ արձանագրել նաև Էրդողանի ելույթի՝ Հայկական հարցին վերաբերող հատվածի վերջնամասում Արցախյան երրորդ պատերազմի մասին հետևյալ դիտարկումը. «*Գիտեք, որ տարիներով [խնդրի] լուծված չլինելը որպես լուծում ներկայացնողներին ամենազեղեցիկ պատասխանը Ադրբեջանի հետ միասին **տվել ենք** Ղարաբաղում*»[205]: Այս արտահայտությունը ևս մեկ անգամ մատնանշում է Թուրքիայի հստակ ներգրավումը Արցախյան երրորդ պատերազմում, ինչը շարունակաբար հերքվում է թե՛ Թուրքիայի, թե՛ Ադրբեջանի կողմից:

Էրդողանի կողմից 2019 թ. ապրիլին և 2021 թ. ապրիլին ունեցած ելույթները գերազանցապես նվիրված էին հայկական թեմատիկային և մանրամասնորեն ներկայացնում էին Թուրքիայի դիրքորոշումը թե՛ Հայոց ցեղասպանության, թե՛ Հայաստանի Հանրապետության ու հայերի նկատմամբ: Եվ՛ իրենց ծավալով, և՛ դրանց շուրջ ստեղծված ոճով այդ դիրքորոշումները կարելի է դիտարկել որպես այս հարցերում Թուրքիայի պետական համապատասխան քաղաքականության ու քարոզչության մշակման և իրականացման հիմնական սկզբունքներ, որոնք այսօր ձևավորում են հայ-թուրքական հարաբերությունների հիմնական բովանդակությունը: Այսպիսով, Էրդողանի ապրիլյան երկու ուղերձները ԱԶԿ իշխանության ներկայիս հիմնական մոտեցումների գերխտացումն են Հայաստանի ու հայության նկատմամբ, ուստի դրանք կարելի է համարել շրջադարձային հայ-թուրքական հարաբերությունների նորագույն պատմության մեջ:

---

[204] Kabine Toplantısı’nın Ardından Yaptıkları Konuşma, T.C. Cumhurbaşkanlığı,…
[205] Նույն տեղում:

*Վարուժան Գեղամյան*

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2020 Թ. ՏԱՎՈՒՇՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարավային Կովկասում և ողջ Մերձավոր Արևելքում Թուրքիայի վարած քաղաքականության փոփոխության հետևանքով 2018 թ.-ից ի վեր Հայաստանի ուղղությամբ պաշտոնական Անկարայի գործադրած ճնշումը թե՛ Արցախյան ճակատում, թե՛ ընդհանրապես տարածաշրջանային հարցերում դարձավ ավելի բացահայտ և բազմակողմ: Քաղաքական այդ փոփոխության հիմնական դրսևորումներից են Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի և հայության վերաբերյալ հռետորաբանության և խոսույթի նկատելի փոփոխությունները, որոնք արձանագրվեցին 2019-2020 թթ. ընթացքում, իսկ վերջնարդյունքը՝ Արցախյան երրորդ պատերազմին Թուրքիայի լիարժեք մասնակցությունը:

Նախապատերազմյան ժամանակահատվածում թուրքական նոր հռետորաբանության լայն կիրառման օրինակ կարելի է համարել 2020 թ. հուլիսին ՀՀ Տավուշի մարզում Ադրբեջանի հետ ՀՀ զինված ուժերի բախումների ընթացքում (այսպես կոչված «Տավուշյան մարտեր») Թուրքիայի պետական համակարգի կողմից արձագանքները, որոնք մի շարք առումներով աննախադեպ էին:

## Պետական հռետորաբանությունը և հասարակական կարծիքի կերպափոխումները Թուրքիայում

Մինչ 2020 թ. Տավուշյան մարտերը ևս Թուրքիայի կողմից հակահայկական հռետորաբանությունը գերակա էր թուրքական ներհասարակական խոսույթում, ինչը ունենում էր տարբեր դրսևորումներ: Հակահայկական հռետորաբանության տարածման առաջնային աղբյուր էին հանդիսանում թուրքական լրատ-

վամիջոցները, որոնք Թուրքիայում անկախ մեդիայի բացակայության պայմաններում թուրք հասարակության մոտ ձևավորում էին համապատասխան կարծրատիպերը հայերի ու Հայաստանի մասին: Այս առումով դիտարկենք 2019 թ. թուրքական մեդիայում «ատելության խոսքի» վերաբերյալ «Հրանտ Դինք հիմնադրամի» կողմից 2020 թ. պատրաստած տարեկան հետազոտության արդյունքները[206]:




*Աղյուսակ 1*

Այսպես, ըստ թուրքական տպագիր մեդիայում 2019 թ. ընթացքում կատարված մշտադիտարկման՝ «ատելության խոսքի» թիրախ ամենից շատ հանդիսացել են հայերը, այնուհետև սիրիացիները, հույները[207] և հրեաները (տե՛ս *Աղյուսակ 1*)[208]:

Եթե դիտարկենք «ատելության խոսքի» ինտենսիվության դինամիկան, ապա կտեսնենք, որ հայերը շարունակում են մնալ «ա-

---

[206] Medyada Nefret Söylemi ve Ayrımcı Söylem 2019 Raporu, Hrant Dink Vakfı, 2020, https://hrantdink.org/tr/asulis/yayinlar/72-medyada-nefret-soylemi-raporlari/2665-medyada-nefret-soylemi-ve-ayrimci-soylem-2019-raporu (հասանելի է՝ 20.08.2021):
[207] Հետազոտությունում առանձին են դիտարկվում Հունաստանում բնակվող հույները (yunanlar) և Թուրքիայում բնակվող հույները (rumlar):
[208] Նույն տեղում, էջ 18:

տելության խոսքի» հիմնական թիրախները թուրքական մեդիա-յում: «Հրանտ Դինք հիմնադրամի» կողմից պատրաստված նույն հետազոտության նախորդ տարիների տվյալների համադրման արդյունքը կարելի է տեսնել *Աղյուսակ 2*-ում[209]:




*Աղյուսակ 2*

Թեև բացարձակ թվերով «ատելության խոսքի» դեպքերը նվազել են, սակայն ընդհանուր առմամբ թիրախավորումների բարձր ցուցանիշները պահպանվել են: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայում աստիճանաբար նվազում է տպագիր մեդիայի տարածումը՝ իր տեղը զիջելով էլեկտրոնային պարբերականներին[210], ապա «ատելության խոսքի» դեպքերի թվի որոշակի նվազումը կարելի է պայմանավորել հենց այդ հանգա-մանքով, այլ ոչ թե «ատելության խոսքի» քարոզի նվազմամբ:

[209] 2017-2019 թթ. զեկույցները հասանելի է «Հրանտ Դինք հիմնադրամի» պաշտո-նական կայքում՝ https://hrantdink.org/tr/asulis/yayinlar/72-medyada-nefret-soylemi-raporlari (հասանելի է՝ 20.08.2021):

[210] Turkey, Reuters Institute Digital News Report 2019, pp. 114-115:

«Ատելության խոսքի» քարոզը, որը պարբերաբար հնչում է նաև թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, հանգեցնում է հասարակության շրջանում առանց այդ էլ առկա հակահայկական տրամադրությունների աճին: Այս մասին են վկայում թուրքական հետազոտական ընկերությունների կողմից իրականացված հարցումները: Ստորև անդրադառնանք դրանցից մեկին:

Ստամբուլում գործող Քադիր Հաս (Kadir Has) համալսարանը 2013 թ.-ից ի վեր պատրաստում է «Թուրքիայի արտաքին քաղաքականության հասարակական ընկալումները» տարեկան զեկույցը, որը հիմնված է Թուրքիայում ամեն տարի անցկացված սոցիոլոգիական հարցումների վրա[211]: Հարցման մասնակիցներին առաջարկվող հարցերից մեկը հնչում է այսպես. «Արդյոք համարու՞մ եք, որ նշված երկիրը վտանգ է ներկայացնում Թուրքիայի համար»: Հարցվածները Հայաստանը մշտապես որակել են որպես «թշնամական»: Տվյալ հարցման պատասխանները ըստ տարեկան զեկույցների ունեն հետևյալ պատկերը (տե՛ս *Աղյուսակ 3*):

---

[211] Զեկույցները հրապարակվել են 2013-2021 թթ.՝ բացառությամբ 2014 թ.: Տե՛ս՝ https://khas.edu.tr/tr/arastirma/khasta-arastirma/khas-arastirmalari:




*Աղյուսակ 3*

Ինչպես կարելի է նկատել աղյուսակից, հարցման մասնակիցների շրջանում Հայաստանի՝ որպես թշնամական երկրի կերպարը 2019-2021 թթ. խիստ ուժեղացել է: Հաշվի առնելով աճի տեմպերը (ավելի քան երեք անգամ)՝ կարելի է պնդել, որ գործ ունենք պետական համակարգի կողմից հետևողականորեն խրախուսվող հակահայկական հռետորաբանության հետ, որի հիմքում ընկած են հայերի մասին կարծրացած ընկալումները: Նկատենք նաև, որ Արցախյան պատերազմից հետո Հայաստանի՝ որպես բացասական պետության կերպարը մասամբ նվազել է, որը կարելի է պայմանավորել Արցախյան երրորդ պատերազմում Հայաստանի պարտությամբ և կապիտուլյացիայով (այլ բառերով՝ Հայաստանից եկող վտանգը պատերազմի միջոցով «չեզոքացվել է»)[212]: Սակայն չնայած վերոնշյալ նվազմանը՝ ընդհանուր առմամբ հարցվածները շարունակում են Հայաստանը դիտարկել

[212] Այս մասին տե՛ս՝ Микаелян Г., Турецкое общество и внешняя политика – друзья и враги, ценности и ожидания, Кавказский узел, https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/50314 (հասանելի է՝ 25.08.2021):

որպես Թուրքիայի համար սպառնալիք ներկայացնող հիմնական երկրներից մեկը: *Աղյուսակ 4*-ում ներկայացված են ըստ հարցվածների Թուրքիայի համար սպառնալիք ներկայացնող մի քանի այլ երկրների (Հունաստան, Ռուսաստան, Իրան, Սիրիա) և Հայաստանի ցուցանիշների համեմատությունները:




*Աղյուսակ 4*

Այսպիսով, ինչպես կարելի է տեսնել, հակահայկական հռետորաբանության ինտենսիվության աճին զուգահեռ աճում է նաև թուրքական հասարակության մեջ Հայաստանի և հայության հանդեպ բացասական տրամադրվածությունը: Թեև դժվար է պնդել, որ հասարակական տրամադրություններն ազդում են Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման վրա (և եթե այո, ապա որքանո՞վ)[213], սակայն սույն հետազոտության տե-

[213] Այս մասին տե՛ս, օրինակ, Պ. Բուրդյեի հայտնի «Հասարակական կարծիք գոյություն չունի» հոդվածը, Бурдье П., Общественное мнение не существует, Социологическое пространство Пьера Бурдье, http://bourdieu.name/content/obsh-hestvennoe-mnenie-ne-sushhestvuet (հասանելի է՝ 28.08.2021):

սանկյունից առավել էական է այն հանգամանքը, որ պետության կողմից հակահայկական հռետորաբանության շարունակման և աճի պարագայում առավել դժվարանում է այդպիսի հռետորաբանության փոփոխության տեսական հնարավորությունը որևէ իշխանության կողմից: Ավելին, հակահայկական տրամադրությունների աճը շարունակական վտանգի տակ է դնում ինչպես Թուրքիայի հայ համայնքին և ՀՀ-ից ժամանած աշխատանքային միգրանտներին, այլև հայկական հսկայածավալ մշակութային ժառանգությունը Թուրքիայում:

## «Տավուշյան մարտերը» և Թուրքիայի արձագանքը

2020 թ. հուլիսի 12-ին ՀՀ Տավուշի մարզի սահմանին տեղի ունեցան բախումներ ՀՀ ԶՈՒ և Ադրբեջանի ԶՈՒ միջև, որոնք շարունակվեցին մի քանի օր: Ռազմական գործողություններին զուգահեռ կտրուկ մեծացավ Թուրքիայի ներգրավվածությունը հայ-ադրբեջանական հակամարտության բոլոր հարթություններում:

Բախումներից անմիջապես հետո Հայաստանին դատապարտող սուր հայտարարություններով հանդես եկավ Թուրքիայի գրեթե ողջ ռազմա-քաղաքական ղեկավարությունը՝ նախագահ Էրդողանը, արտգործնախարար Մ. Չավուշօղլուն, նախագահի խոսնակ և գլխավոր խորհրդական Ի. Քալընը, իշխող կուսակցության անդամները և այլք: Գրեթե բոլոր հայտարարությունները պարունակում էին անուղղակի կամ բացահայտ սպառնալիքներ Հայաստանի և հայության նկատմամբ: Այսպես, Թուրքիա ԱԳ նախարար Մ. Չավուշօղլուն նշում էր. «*Հայաստանը թո՛ղ խելքը գլուխը հավաքի: Մենք մեր բոլոր հնարավորություններով Ադրբեջանի կողքին ենք*»[214], իսկ Թուրքիայի իշխող ԱԶԿ կուսակ-

[214] Dışişleri Bakanı Çavuşoğlu: Ermenistan aklını başına toplasın, Azerbaycan'ın yanındayız, TRT Haber, 13.07.2020, https://www.trthaber.com/haber/gundem/disisleri-

ցության խոսնակ Օ. Չելիքը նշել էր. «*Թո՛ղ վստահ լինեն, որ Հայաստանի ագրեսիան անպատասխան չի մնալու*»[215]: Հայաստանին որպես «զավթիչ» էր պիտակավորում Թուրքիայի արտգործնախարարության պաշտոնական հայտարարությունը. «*Հայկական կողմը պետք է հրաժարվի նմանատիպ վտանգավոր մարտավարությունից, պետք է ընտրի ողջախոհությունը և իրավական ճանապարհը: Սեփական կարողությունները գերազանցող նպատակների համար արկածախնդրության դիմելը ցույց է տալիս, որ Հայաստանը հանդիսանում է ամենամեծ խոչընդոտը մեր տարածաշրջանում խաղաղության և կայունության համար*»[216]: Հուլիսի 16-ին Թուրքիայի խորհրդարանի չորս կուսակցությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ[217], որը դատապարտում էր «Հայաստանի ագրեսիան» Ադրբեջանի դեմ և նշում, որ տեղի ունեցածը «*Հայաստանի հայտնի ագրեսիվ դիրքորոշման հերթական օրինակն է*»[218]:

Թուրքիան այդ օրերին նաև ակտիվ օժանդակություն էր ցուցաբերում Ադրբեջանին տեղեկատվական պատերազմում: Թվիթեր միկրոբլոգային հարթակում «Քեզ հետ ենք, Ադրբեջա՛ն»

bakani-cavusoglu-ermenistan-aklini-basina-toplasin-azerbaycanin-yanindayiz-50111-0.html (հասանելի է՝ 10.08.2021):

215 Տե՛ս Ömer Çelik-ի գրառումը՝ https://twitter.com/omerrcelik/status/12826143347-24747266 (հասանելի է՝ 10.08.2021):

216 No: 149, 12 July 2020, Press Release Regarding the Armenian Attack on Azerbaijan, Turkey’s MFA, https://www.mfa.gov.tr/no_-149_-azerbaycan-a-yonelik-ermeni-saldirisi-hk.en.mfa (հասանելի է՝ 10.08.2021):

217 Հայտարարությունը ստորագրել էին Թուրքիայի խորհրդարանում ներկայացված 5 խոշոր կուսակցություններից 4-ը. իշխող կոալիցիան՝ ԱԶԿ-ն (AKP) և Ազգայնական շարժում կուսակցությունը (MHP), ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (CHP) և «Լավ» (IYI) կուսակցությունը): Բացառություն էր կազմել միայն քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը (HDP), որը չէր միացել նշված հայտարարությանը:

218 4 parti ortak bildiriyle Ermenistan'ın Azerbaycan saldırısını kınadı, TRT Haber, 16.07.2020, https://www.trthaber.com/haber/gundem/4-parti-ortak-bildiriyle-ermenistanin-azerbaycan-saldirisini-kinadi-502231.html (հասանելի է՝ 10.08.2021):

(#SeninleyizAzerbaycan) հեշթեգով[219] գրառումները լայնորեն տարածվում էին թուրք օգտատերերի կողմից: Դատելով այն փաստից, որ այդ հեշթեգի առաջին տարածողներից մեկը Թուրքիայի արտգործնախարար Մ. Չավուշօղլուն էր և այլ պետական պաշտոնյաներ, կարելի է եզրակացնել, որ տեղեկատվական արշավը կազմակերպվել էր թուրքական պետության իմացությամբ և մասնակցությամբ կամ համակարգմամբ: Համացանցում թուրք և ադրբեջանցի պաշտոնյաների հետ զուգահեռ Հայաստանն ու հայերին թիրախավորող և «ատելության խոսք» պարունակող տասնյակ հազարավոր գրառումներ էին կատարվում շարքային օգտատերերի կողմից, որոնցում Հայաստանը կոչվում էր «թարախապալար, որ աճել է Թուրքիայի և Ադրբեջանի արանքում», «ագրեսոր երկիր», իսկ հայերի հանդեպ հնչում էին դատաստանի և ցեղասպանական կոչեր:

Այդ օրերին Թուրքիայի հակահայկական պետական հռետորաբանության առավել ծայրահեղ ձևակերպումները կատարվում էին Թուրքիայի զինված ուժերի կողմից՝ որոշ դեպքերում ստանալով աննախադեպ բնույթ: Այսպես, Թուրքիայի պաշտպանության նախարար Հ. Աքարը, անդրադառնալով Տավուշում տեղի ունեցող բախումներին, նշել էր. «*Դատապարտում ենք Ադրբեջանի Թովուզի շրջանի վրա իրականացված ստոր հարձակումը: Ադրբեջանի թուրքի ցավը մեր ցավն է: ...Մեր ցավակցությունները ենք հղում մեր ադրբեջանցի եղբայրներին: Մեկ անգամ ևս ուզում եմ ասել, որ վստահ ենք, որ նրանց արյունը անպատասխան չի մնա*»[220]: Այնուհետև Աքարն ուղիղ «ատելության խոսք» է կիրառում հայերի նկատմամբ. «*Ինչպես որ առաջին վայրկյանից ասել*

---

[219] https://twitter.com/hashtag/SeninleyizAzerbeycan

[220] Bakan Hulusi Akar'dan Ermenistan'a sert tepki, HaberTürk, 16.07.2020, https://www.haberturk.com/bakan-hulusi-akar-dan-ermenistan-a-sert-tepki-2746192 (հասանելի է՝ 10.08.2021):

*է մեր նախագահը՝ սա* (Հայաստանի իբր հարձակումը – Վ. Գ.) *իսկապես հայերի հնարավորություններից վեր է: Մենք էլ ասում ենք, որ իրենք* (հայերը – Վ. Գ.) *մնալու են իրենց իսկ բացած այս թակարդում, խեղդվելու են այս թակարդում և անպայման վճարելու են իրենց արարքների համար*»[221]:

Նույն օրերին պաշտպանության նախարար Աքարը հայերին թիրախավորող մեկ այլ ելույթ է ունենում Ստամբուլի Բողազիչի համալսարանում կազմակերպված տոնական միջոցառմանը, որտեղ հիշեցնելով, որ իր դոկտորական ատենախոսությունը նվիրված է եղել Հարբորդի ռազմական առաքելության պատրաստած զեկույցին (այսինքն՝ ցույց տալով իր տեղեկացվածությունը Հայաստանի ու Հայկական հարցի վերաբերյալ), նշում է. «*Հայերը Օսմանյան հողերի մի մասն էլ ներառող «Մեծ Հայաստան» էին ցանկանում ստեղծել: Մեծ տերությունների աջակցությունը ստանալու համար հայերը դիմում էին ամեն տեսակ մանիպուլիացիաների և քարոզչության ու ինտենսիվ լոբբիստական աշխատանք ծավալում:... Հարբորդի զեկույցի պես այլ պատվիրակությունների զեկույցները ևս ուշադրության արժանի են և ապացում են, որ ոչ թե թուրքերն են կոտորած իրականացրել, ում մեղադրում են հայերը, այլ հենց իրենք՝ հայերը:...* ***Արխիվները հստակ ցույց են տալիս, որ շատ վայրերում հայերը սպանել են անմեղ քաղաքացիական մուսուլման բնակչությանը***»[222]: Ելույթի մեկ այլ հատվածում, դարձյալ անդրադառնալով Հայաստանի թեմային, Աքարը նշում է. «*Լեռնային Ղարաբաղը անարդարացիորեն և անիրավությամբ գրաված Հայաստանը անցնող օրերին Ադրբեջանի Թովուզի շրջանի վրա իրականացրել է* ***իր չափն ու սահմա-***

[221] Նույն տեղում:

[222] Milli Savunma Bakanı Akar: Ayasofya'yla ilgili Türkiye ve Türk milleti dışında kimsenin söz söyleme hakkı yoktur, AA, 17.07.2020, https://www.aa.com.tr/tr/-ayasofya-camii/milli-savunma-bakani-akar-ayasofyayla-ilgili-turkiye-ve-turk-milleti-disinda-kimsenin-soz-soyleme-hakki-yoktur/1913852 (հասանելի է՝ 10.08.2021):

*նը անցնող մի հարձակում:... Այդ զզվելի հարձակումը ամենածանր ձևով և խստորեն դատապարտում ենք*»[223]: Ինչպես կարելի է տեսնել, նախարար Աքարի խոսքում հայերը մեղադրվում են ոչ միայն մերօրյա իրադարձության (Տավուշում բախումների), այլև պատմական այլ փուլում իբր տեղի ունեցած ոճրագործությունների համար: Դրանով խոսույթի մակարդակում շաղկապվում են տարբեր ժամանակաշրջանները, իսկ հայերի իբր կատարած մերօրյա հանցանքը ստանում է յուրատեսակ «պատմական նախադեպ»՝ լսարանի աչքերում կարծրացնելով «հանցագործ հայի» կերպարը:

Տավուշյան մարտերի օրերին Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Հայաստանի հասցեին հնչեցված «ատելության խոսքը» ու սպառնալիքները մեծ տարածում էին գտնում համացանցում ոչ միայն իշխանական և մերձիշխանական լրատվամիջոցների շնորհիվ: Հակահայկական հռետորաբանության տարբեր դրվագների տարածման գործում ներգրավված էին նաև թուրքական բյուրոկրատիայի բոլոր օղակների ներկայացուցիչները, ինչն աննախադեպ էր Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորագույն պատմության մեջ:

Ուշագրավ է նաև, որ հուլիսյան մարտերից հետո հայ-ադրբեջանական կամ արցախա-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցող իրադարձություններից հետո թուրքական պետական գերատեսչությունները և հատկապես Թուրքիայի պաշտպանության նախարարությունը մեծ ինտենսիվությամբ արձագանքում էին տեղի ունեցած գրեթե բոլոր միջադեպերին՝ որդեգրելով յուրօրինակ հռետորաբանություն: Այսպես, սեպտեմբերի 21-ին Թովուզի շրջանում տեղի ունեցած միջադեպի արդյունքում ոչնչացված ադրբեջանական զինվորի առիթով Թուրքիայի ՊՆ

[223] Նույն տեղում:

թվիթերյան պաշտոնական հաշիվը տարածել էր հայտարարություն, որում Հայաստանին մեղադրում էր հրադադարի ռեժիմի խախտման համար և կոչ անում անհապաղ դադարեցնել «կրակի հետ խաղալը», սակայն այս անգամ Թուրքիայի ՊՆ տեքստում ուշագրավ է ադրբեջանցի զինվորին «մեր զինվոր»-ով դիմելը՝ այսպիսով նույնականացնելով երկու երկրները[224]:

***

2020 թ. սեպտեմբերին Հայաստանի և Արցախի հանրապետությունների դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմին նախորդող ժամանակահատվածում Թուրքիայի կողմից կիրառված պաշտոնական հռետորաբանության ռադիկալիզմը և դրանում առկա «ատելության խոսքի» աճը հասան վերջին տասնամյակների համար աննախադեպ մակարդակի: 2020 թ.՝ Արցախյան առաջին պատերազմի ավարտից հետո Թուրքիան առաջին անգամ ուղիղ ռազմական սպառնալիք էր հնչեցնում ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության հասցեին: Այսպիսի քաղաքականության որդեգրումը համընկնում էր Թուրքիայի տարածաշրջանային ծրագրերի հետ, որոնք ենթադրում են Հարավային Կովկասում թուրքական ազդեցության գոտու ընդլայնում և Հայաստանի՝ որպես անկախ քաղաքական գործոնի թուլացում[225]: Ուստի, կարելի է ասել, որ առաջիկա տարիներին թե՛ Թուրքիայում, թե՛ Ադրբեջանում հակահայկական հռետորաբանությունը խորանալու է, քանի որ այդ հարցում կա իշխանության և հասարակության համաձայնությունը: Ավելին, «ատելության

[224] T.C. Milli Savunma Bakanlığı, 21.09.2021, https://twitter.com/tcsavunma/status/-1308101319593525248 (հասանելի է՝ 10.08.2021): 2020 թ. ընթացքում այսպիսի հռետորաբանության դեպքերը բազմաթիվ էին:

[225] Danforth N., What did Turkey gain from the Armenia-Azerbaijan war?, Eurasianet, 11.12.2020, https://eurasianet.org/perspectives-what-did-turkey-gain-from-the-armenia-azerbaijan-war (հասանելի է՝ 10.08.2021):

խոսքին» բնորոշ տարբեր բաղադրիչներ արդեն իսկ արձանագրվել են 2020 թ. նոյեմբերից հետո Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների կողմից Հայաստանին ուղղված ուղերձներում, որոնք նվիրված են «տարածաշրջանային համագործակցությանն ու խաղաղությանը»[226]: Թուրքիայի և Ադրբեջանի կողմից նման քաղաքականության որդեգրումը ոչ միայն չի կարող նպաստել տարածաշրջանում հռչակված խաղաղության օրակարգի քաղաքական իրագործմանը, այլև հղի է հակամարտությունների նոր փուլի մեկնարկով:

[226] Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների ելույթները ՀՀ ժողովրդի կյանքին ուղղված բացահայտ սպառնալիք են. ՀՀ ՄԻՊ, https://www.ombuds.am/am/-site/ViewNews/1429 (հասանելի է՝ 10.08.2021); Ադրբեջանի նախագահի ելույթը թշնամանք է առաջացնում Հայաստանի ու Արցախի և սփյուռքի միջև. Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան, https://www.ombuds.am/am/site/View-News/1637 (հասանելի է՝ 10.08.2021):

*Մարիամ Մելքոնյան*

## ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ

*Եթե զանգվածները կարող են սիրել՝ առանց իմանալու պատճառը,*
*ապա նրանք նաև ատում են առանց մեծ հիմքերի:*
***Ուիլյամ Շեքսպիր***

ԽՍՀՄ փլուզումից և Ադրբեջանի անկախացումից հետո տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացները, մասնավորապես՝ Ղարաբաղյան առաջին պատերազմը և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, վերաիմաստավորեցին և նոր շունչ հաղորդեցին այդ երկրում բավականին խորը արմատներ ունեցող հայատյացությանը[227]: Հակահայ քարոզչությունը բարձրացվեց պետական մակարդակի՝ ընդգրկելով հասարակական-քաղաքական տարբեր ուղղություններ: Ադրբեջանի ներքին քաղաքական կյանքը կարելի է բնորոշել ավանդական հասարակության հենքի վրա կառուցված ավտորիտար համակարգերին բնորոշ հիմնական առանձնահատկություններով: Համակարգի կենտրոնում գտնվում է Իլհամ Ալիևը և իր մերձավոր շրջապատը, որոնց շուրջ ուղղահայաց հիերարխիկ կերպով դասավորված են բոլոր ուժային կենտրոնները[228]: Ինչպես բոլոր նմանատիպ համակարգերի պարագայում, Ադրբեջանի իշխանություններին

[227] Ադրբեջանում հայատյացության ձևավորման, նորանկախ Ադրբեջանում դրա առանձին դրսևորումների մասին մանրամասն տե՛ս Դավթյան Գ., Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում, Երևան, 2019, էջ 24-93:

[228] Գեղամյան Վ., Էլբակյան Է., Ժամանակակից Ադրբեջան, Տեղեկագիրք, Երևան, 2020, էջ 59:

անհրաժեշտ է մշակել սոցիալական տարբեր համախմբող գործոններ, որոնց միջոցով հնարավոր կլինի կառավարելի պահել երկիրը: Մինչև 44-օրյա պատերազմը համախմբող սոցիալական գործոն էին Ղարաբաղի և հայկական թեմաները, Արցախյան հակամարտությունն ու սպասվելիք պատերազմը (Ղարաբաղի «ազատագրումն օկուպացիայից»-Մ. Մ.)[229]:

Արցախյան երկրորդ պատերազմից հետո քարոզչական որոշ թեզեր և ուղղություններ փոփոխություններ են կրել, մինչդեռ հայատյացությունը նոր թափ է ստացել և շարունակում է մնալ քարոզչական բարձրակետում: Ինչպես նշում են փորձագետներ Ա. Ադիբեկյանը և Ա. Էլիբեգովան, Ադրբեջանում հայատյացության գաղափարական հիմքն ու քարոզչական ազդակները գալիս են հենց իշխանական հարթակներից[230]: Պետական տարբեր պաշտոնյաներ՝ պատգամավորից մինչև երկրի նախագահ Ի. Ալիև, իրենց ելույթները համեմում են հակահայկականության ու արմենոֆոբիայի ամենաասուր և հակամարդկային ձևակերպումներով: 44-օրյա պատերազմի ընթացքում նախագահ Ի. Ալիևը պարբերաբար ելույթներով դիմում էր սեփական հանրությանը՝ կոշտ ուղերձներ հղելով նաև աշխարհի երկրների առաջնորդներին և հայ ժողովրդին: Ալիևն իր խոսքում չխուսափելով հայությանն ուղղված բացահայտ ծաղրից՝ ռասիստական, քաղաքակիրթ աշխարհի և մարդկության համար անընդունելի ձևակերպումներ է կիրառում: Այդ շովինիստական խոսքերն իրենց գագաթնակետին հասան պատերազմի ավարտի հաջորդ օրը՝ 2020 թ. նոյեմբերի 10-ի ուղերձում, որտեղ Ալիևը մասնավորապես ասաց հետևյալը. *«…Մենք ծնկի բերեցինք նրանց, սրա-նրա փեշից կպած մարդ չմնաց, որ այս 40 և ավել օրվա ընթացքում չզզվեցնի, օգնություն*

---

229 Նույն տեղում:

230 Адибекян А., Элибегова А., Армянофобия в Азербайджане, Ереван, 2013, стр. 90.

*չխնդրի, ինքն իրեն չնվաստացնի, մենք ենք նրան նվաստացրել, լավ ենք արել (իմա՝ ՀՀ վարչապետին – Մ. Մ.)…. Իրենց տեղը ցույց տվեցինք, դաս տվեցինք, նրանց (իմա՝ հայերին – Մ. Մ.) քշել ենք մեր հողերից, շանը քշելու պես ենք քշել, ասել էի, որ քշելու ենք, շան պես ենք քշելու և քշել ենք, շան պես քշել ենք»*[231]:

